21-րդ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

2 (30)

ԵՐԵՎԱՆ

2010

21-րդ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **2 (30), 2010**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян
(координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Карауглaнян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լևոն Շիրինյան
Հայապանություն. քաղաքակրթությունների բախման պատմական նախադեպը 3

Յաիր Արոն
Իսրայելի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում. մերժում և ճանաչում 9

Վահան Մելիքյան
Հայկական հարցը և հայ հասարակության ինքնակազմակերպման խնդրի փուլերը 31

Գևորգ Պողոսյան
Հայ սփյուռքի երրորդ սերնդի խնդիրները 40

Էդուարդ Դանիելյան
Հայոց պետականության քաղաքակրթական արժեհամակարգը Արցախի ազատագրական պայքարում 49

Լիանա Այվազյան
Երկրի իմիջը և միջազգային հարաբերությունները. XXI դարի մթնոլորտը 58

Սևակ Սարուխանյան
Ատոմային էներգետիկայի հեռանկարները Հայաստանում 77

Արծրուն Հովհաննիսյան
Արդյո՞ք պետք է միավորել ռազմաօդային ուժերն ու հակաօդային պաշտպանության զորքերը 88

Գոռ Հովհաննիսյան
Վրաստանի դերակատարումը ՎՈՒԱՄ տարածաշրջանային և միջազգային գործունեության ոլորտում 102

Հուշագիր հեղինակին 114

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԸ

Լևոն Շիրինյան[*]

«Հայաստանը Եվրոպայի ավանգարդն է Ասիայում». վաղուց առաջարկված այս բանաձևը ճիշտ է սահմանում հայ ժողովրդի դրությունը մեր աշխարհում: Հայ ժողովրդի պատմական առաքելությունը, որը թելադրված է նրա զարգացման ողջ ընթացքով, Արևելքի և Արևմուտքի սինթեզը որոնելն ու գտնելն է:

Վալերի Բրյուսով

Մեր օրերում մոդայիկ է դարձել քաղաքակրթությունների երկխոսության մասին խոսելը, սակայն չպետք է մոռանալ մշակույթների և քաղաքակրթությունների անհամատեղելիության մասին, ինչը հաճախ հանգեցնում է հակամարտությունների՝ ողբերգական հետևանքներով:

Նման փաստերից է նաև հայասպանությունը, որի բազմաթիվ պատճառների մեջ էր նաև մշակութային գործոնը: Ըստ էության, այն դարձավ Բալկաններից մինչև Անատոլիա և Կովկաս երկար ձգված էթնիկական հակամարտության, հայ քրիստոնյաների ու սուննի թուրքերի հակամարտության հետևանք: Ի վիճակի չլինելով «մարսել» իրեն խորթ մշակույթը՝ թուրք ազգայնական վերնախավը ժամանակի ընթացքում որդեգրեց այն ոչնչացնելու և արմատախիլ անելու ռազմավարական գիծը:

Եվ այսպես. 1915թ. ապրիլի 24-ին Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և Օսմանյան կայսրության մնացած մասում, այդ երկրի կառավա-

[*] Քաղաքական գիտությունների դոկտոր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ:

րության որոշմամբ և թուրք ժողովրդի կամքով, ծավալվեցին իրադարձություններ, որոնք ուղղված էին Հայկական հարցի վերջնական լուծմանը, այն է՝ զինաթափված և անպաշտպան ժողովրդի բնաջնջմանը, իրադարձություններ, որոնք դաշնակից տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների 1915թ. մայիսի 24-ի Հռչակագրում բնութագրված են որպես հանցագործություն «մարդկության և քաղաքակրթությունների դեմ»:

Թուրքերի գործողությունները նախապես մտածված և հանգամանալի պլանավորված էին, նպատակը պարզ էր. «ամբողջովին վերացնել մի ամբողջ ժողովուրդ», մեկընդմիշտ վերջ տալ մեզ՝ «Հայաստան» անվան հետ միասին և ջնջել երկրի երեսից նրա քաղաքակրթությունը, Արևմտյան Հայաստանը վերածել տրամաբանական անհեթեթության՝ «Արևելյան Անատոլիայի», յուրացնել նրա մշակույթը[1] [1], թալանի ու բռնության թուրքական ավանդույթի օգնությամբ հափշտակել կայսրության հայերի հսկայական նյութական հարստությունը[2]:

Թուրքական ճարտար միտքն այս չարագործությունը փայփայում էր տասնամյակներ շարունակ և սկսեց երկրի տեղանվան միտումնավոր փոփոխությունից ու ժողովրդագրության աղավաղումից: 1862թ. կատարվեց կայսրության նահանգների արմատական վերակազմակերպում: Արդյունքում՝ նախկինում հսկայական տարածք ունեցող «Էրմենիստան էյալեթը» մասնատվեց Էրզրումի, Բիթլիսի և Վանի, որոնցից յուրաքանչյուրին, ժողովրդագրական կազմը փոխելու նպատակով, միացվեցին («ծուռ, արհեստականորեն անցկացված» սահմաններով) իսլամական բնակչություն ունեցող շրջաններ: Այնուհետև, 1878թ., Բեռլինի կոնգրեսից երկու տարի անց, էլ ավելի կրճատելու համար բնիկ բնակչության տեսակարար կշիռը, Արևմտյան Հայաստանում նոր վարչատարածքային բաժանումներ անցկացվեցին: Իսկ 1880-ական թթ. արգելվեց «Հայաստան» բառի կիրառությունը: Ժամանակ առ ժամանակ նման գործողությունները նպատակ ունեին սեփական երկրում ապրող հայերին ձուլել խորթ՝ «մուսուլման» կոչվող խառնացեղ խաժամուժի միջավայրին:

Այս հարցում թուրքական դիրքորոշման «սրբագրման» առիթ դարձավ հայերի նկատելի տնտեսական և քաղաքակրթական վերելքը 19-րդ դարի կեսին: Անգլիացի հոգևորական Բ.Բարեյլը նշում է, որ արևմտահայերի Ազգային սահմանադրության ընդունումը (1860թ.) «հեղափոխություն էր նշանակում Արևելքի սովորություններում ու սովորույթներում»: Ուստի, «շուտով հայերը կասկածելի տարր դարձան ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ռուսաստանի համար, և այդ օրվանից նրանք այլևս հանգիստ կյանք չունեցան» [2, էջ 15-16]:

[1] Գերմանացի արվեստաբան Էռնստ Դիցի կարծիքով՝ սելջուկների արվեստը հայկականի շարունակությունն է:
[2] Ցեղասպանության տարիներին հայերի՝ թուրքերի կողմից հափշտակված ունեցվածքի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 5 մլրդ ամերիկյան ոսկի դոլար: Այդ հարստության մի մասը գրպանեցին իրենք՝ հափշտակիչները և իշխանական վերնախավը, իսկ առյուծի բաժինն օգտագործվեց քեմալական շարժման կարիքների, մասնավորապես՝ Արևելյան Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի համար:

Հիրավի հանրահայտ թուրքական նախանձն ու մաղձը բացառիկ դեր խաղացին հայասպանության էթնոհոգեբանական հիմքի նախապատրաստման գործում[1]: «Գլխավոր փաստարկն», այնուամենայնիվ, հայերի հայրենիքը՝ Հայաստանը, «սեփականելու», այն օրինական տերերից զավթելու թուրքերի անզուսպ ցանկությունն էր: Հայ բնակչության գլխովին ջախջախումն ակնհայտորեն ցույց տվեց, որ Թուրքիայում կարող էին սուլթաններ ու կառավարիչներ փոխվել, կարող էին փոխվել նրանց քաղաքական երանգավորումը, սեռը, հավատն ու ազգությունը, բայց ոչ նրանց գլխավոր նպատակը՝ Հայաստանի ոչնչացումը:

Եվ երբ Լենինի ու Աթաթուրքի համագործակցության շրջանում Հայաստանի ու հայերի վերջնական բնաջնջման հեռանկարն իրական ուրվագծեր ստացավ, արդեն քեմալական Թուրքիայի արտգործնախարար Աhմեդ Մուխթարը արևելյան ռազմաճակատի (բանը հասել էր Արևելյան Հայաստանին) հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին «բացատրում» էր. «Հայաստանը գտնվում է ընդարձակ մուսուլմանական տարածքների վրա (պատկերացնո՞ւմ եք), դրա համար էլ *այն պետք է վերացնել ինչպես քաղաքականապես, այնպես էլ ֆիզիկապես:* Հարկ է նկատի ունենալ, որ ընդհանուր քաղաքական իրադրությունը և մեր ուժը նպաստում են այս ծրագրի իրականացմանը» [3, с. 76-77]:

Նշենք, որ Հայաստանի ոչնչացման պլանը ձևակերպել և կյանքի է կոչել Աբդուլ Համիդը, որի զինակիցները և հետնորդները, ընդհուպ մինչև Քեմալը, նրա սկսած գործը շարունակողներն էին: Եվրոպական ուժերի հզոր ճնշման (մեծ տերությունների քաղաքականություն, ազգային-ազատագրական պատերազմներ և այլն) տակ կքած կայսրության կայունացման և միավորման գործընթացը Համիդն «ուղղեց» դեպի Արևելք: Նրա նպատակն էր ելքը դեպի *Արևմտյան Արաբիա, մահմեդական սրբավայրեր* և Հայաստան [4, с. 29]: Բալկանյան պատերազմներն ավելի ամրացրին նրա այս մտադրությունը: «Ես չեմ ափսոսի Բալկանյան երկրների կորստի համար, որոնք քամում են մեր ուժերը»,- ասում էր Աբդուլ Համիդը: *«Մենք ուզում ենք մնալ Անատոլիայում և պետք է առանձին ապրենք»,-* հռչակում էր «արյունոտ սուլթանը» [5, էջ 812, 827]:

Համիդյան դրույթ-գաղափարն արժանացավ Եվրոպայի ըմբռնմանը: Այս առումով միանգամայն պերճախոս է բարոն Հանս ֆոն Վանտենհեյմի դիմումը գերմանական նացիոնալ-սոցիալիզմի «նախակարապետին»՝ «Իթթիհաթի» կենտրոնական կոմիտեին (1914թ. պատերազմի նախօրեին). «Ձեզ համար շահավետ է միությունը Բուլղարիայի հետ: Հարկավոր է դուրս գալ դեպի Բեռլին-Կոստանդնուպոլիս գիծը՝ զինելով նեղուցները, զրկել Ռուսաստանին դրսի օգնությունից և համատեղ ջանքերով ճզմել նրան: *Ձեզ տալով Կովկասը՝ մենք ուզում ենք բացել ձեր ճանապարհը դեպի Թուրան: Դուք պետք է ոչնչացնեք*

[1] Առաջին անգամ տերմինը գիտական շրջանառության մեջ է մտցրել արաբ գիտնական, պատմաբան Մուսա Փրինսը *(Moussa Prince)* 1967թ.:

միասնական Թուրքիային խոչընդոտող տարրը (հայերին- Լ.Շ.), *իսկ հետո զրավեք նաև Պարսկաստանը...»* [6, с. 18]:

Եվ այսպես, 1914թ. Գերմանիայի դեսպանը խոսում էր այն մասին, ինչի մասին երկու տարի առաջ կանխագուշակել էր հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը («...Հայկական հարցը Թուրքիայի գլխավոր գլխացավանքներից մեկն է, և ժամանակի ընթացքում այն կուժեղանա, քանի դեռ թուրքերը ստիպված կլինեն նահանջել այդ վայրերում»): Իսկ եվրոպական տերությունները, միմյանց հետ համաձայնությամբ, Հին աշխարհից դուրս էին մղում քաղաքակրթորեն իրենց խորթ տարրը՝ միջնադարյան ենիչերիին: Նրան ուղղում էին դեպի Արևելք: Այդ ճանապարհին էր գտնվում Հայաստանը: Ուստի, քրիստոնեական Եվրոպայի օգնությունն աստվածաշնչյան երկրին, «քաղաքակրթության օրրան» (Դևիդ Լենգ) Հայաստանին, չափավոր էր:

Այնինչ, արյան ծարավ թուրքը որդեգրել էր համապատասխան մարտավարություն, որն իրականացրեց երեք փուլով.

1. *1876-1915թթ.* – հայերի տեղահանության, բռնի իսլամացման և կոտորածի լոկալ, բայց ընդլայնվելու և ծավալվելու միտում ունեցող քաղաքականություն:
2. *1915-1918թթ.* – Հայկական հարցի վերջնական լուծման համընդգրկուն գործընթաց: Թուրքերը չհասցրին իրականացնել դա մասամբ մնացած հայերի (բազում մարտերում թրծված կամավորական զնդերի զինվորներ ու սպաներ) դիմադրության (հայկական զորազնդերի գրեթե ութամսյա մարտերը Երզնկայից (Էրզինջան) մինչև Սարդարապատ ու Բաքու, 1918թ. սեպտեմբերի 19-ին «Հայկական լեգեոնը» ճեղքեց սիրիա-պաղեստինյան ճակատը), մասամբ էլ միջազգային իրադրության պատճառով:
3. *1919-1923թթ.* – մի կողմից՝ հույների ոչնչացման, Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում անավարտ մնացած հայաստանության շարունակման և նոր հողերի զավթման քեմալական քաղաքականությունը, մյուս կողմից՝ թուրքական պետության և ազգի կողմից մեղքը չընդունելն ու պատասխանատվությունից հրաժարվելը:

Այսուհետ, ըստ ցեղասպան թուրքական պետության մտահղացման, «խնդիրն այն էր, որպեսզի ստիպեն հայերին հաշտվել փաստացի իրավիճակի հետ: Հարկավոր էր հարկադրել հայերին՝ իրենց գաճաճ պետությունը (նկատի ունենք 1918թ. հանրապետությունը- Լ.Շ.) ճանաչելու դիմաց հրաժարվել իրենց տարածքներից հօգուտ Թուրքիայի: Գրեթե լիակատար դեբելյացիան (հպատակումը) և անեքսիան այսպիսով կարող էին ներկայանալ որպես ցեսիա՝ տարածքների կամավոր հանձնում, իսկ հայ բնակչության ցեղասպանությունը՝ որպես անցյալի՝ ափսոսանքի արժանի իրադարձություն-

ներ» (Յու.Բարսեղով) [7, с. 215]:

Այնուամենայնիվ, Ցեղասպանությունը ծնեց Թուրքիայի և թուրքերի պատասխանատվության հարցը.

- աշխարհը ցնցած հանցագործությունը մտահղացած և իրականացրած ֆիզիկական անձանց քրեական պատիժ: Նրանք միայն մասամբ են պատիժ կրել («Նեմեսիս» գործողությունը՝ հայկական Նյուրնբերգը, իրականացվում էր խորհրդային իշխանության ակտիվ դիմադրության պայմաններում),
- թուրքական պետության քաղաքական պատասխանատվություն և Հայաստանի ստեղծում Վուդրո Վիլսոնի արբիտրաժային որոշման համապատասխան,
- նյութական պատասխանատվություն որպես ռեստիտուցիա (հայերի իրավունքների վերականգնում, բռնի խլված ունեցվածքի վերադարձում և այլն) [8]:

Պարզ է, որ հայերի հետագա պայքարը շատ բանով պայմանավորված կլինի երկրորդ և երրորդ կետերով: Դա կհանգեցնի աշխարհում առաջին ցեղասպանության՝ հայասպանության հետևանքների վերացմանը և մեկընդմիշտ կկանխի նման հանցագործությունների կրկնությունը[1] [9, p. 216, 240]:

Հատկանշական են Վուդրո Վիլսոնի՝ որպես պատգամ հնչող խոսքերը. «Հայաստանը պետք է ստանա այն, ինչի նկատմամբ պատմական իրավունք ունի: Նա ավելի շատ կյանքի իրավունք ունի, քան Թուրքիան... Վաղ թե ուշ Թուրքիան կկանգնի դատաստանի առջև և հաշիվ կտա, և այդժամ նրանից կպահանջեն վերադարձնել թալանածն իր իսկական տիրոջը» [10, с. 186-187]:

Ապրիլ, 2010թ.

Աղբյուրներ և զրականություն

1. *Dietz Ernst,* Սելջուկյան արվեստը (գերմաներեն), Կոստանդնուպոլիս, 1948.
2. *Մաղաքիա Օրմանյան,* Հայ եկեղեցին, Կոստանդնուպոլիս, 1911:
3. *Саркисян Е.,* За кулисами: как рождался Московский договор 1921г., «Литературная Армения», 1991, N1.
4. Раздел Азиатской Турции по секретным документам бывшего Министерства иностранных дел. Под редакцией Е.А.Адамова, М.,1924.
5. *Յազըճյան Գ.,* Արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ II, Բեյրութ, 1980:

[1] Հատկանշական է, որ զանգվածային կոտորածների» տաք հետքերով քաղաքակիրթ աշխարհին սկսեց խոսել Հայոց ցեղասպանության մասին և այդ իրադարձությունները բնութագրեց որպես «ողջակիզում» *(holocoust)*, զազրելի, հրեշավոր «ողջակիզում» *(«ghastly holocoust»).*

6. *Рифат Мевлан заде*, Темные страницы османской революции и программы Иттихата по уничтожению армян, Ереван, 1990.
7. Геноцид армян: ответственность Турции и объязательства мирового сообщества. Документы и комментарий. В 2-х т., М; 2005, т. 2, ч. 2.
8. *Барсегов Ю.Г.,* Геноцид армян – преступление по международному праву, М., 2000.
9. *Hocking Joseph,* The path of glory, London, New York, Toronto, 1918.
10. *Чалхушьян Г.,* Красная книга, Ростов-на-Дону, 2008.

АРМЕНОЦИД: ИСТОРИЧЕСКИЙ ПРЕЦЕДЕНТ СТОЛКНОВЕНИЯ ЦИВИЛИЗАЦИЙ

Левон Ширинян

Резюме

В статье в контексте столкновения цивилизаций представлен Арменоцид. Делается ссылка на оценки геноцида армян как тяжкого преступления против «человечности и цивилизаций», «холокоста». Выявляется суть турецкой (оттоманской, кемалистской) стратегии осуществления Арменоцида. Определяются основные вехи преодоления последствий геноцида.

ԻՍՐԱՅԵԼԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՄԵՐԺՈՒՄ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄ

*Յաիր Արոն**

Իսրայելի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում կարևոր է, քանզի այն Հոլոքոստի զոհ դարձած հրեա ժողովրդի պետությունն է: Դժվար է գերագնահատել, թե որքան կարևոր է հայերի (ինչպես նաև թուրքերի և ամբողջ աշխարհի) համար հրեա ժողովրդի և հատկապես Իսրայելի պետական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, քանի որ Իսրայելի պետությունը հիմնվել է Հոլոքոստի զոհ դարձած ժողովրդի կողմից:

Ֆրանսիայի հայ համայնքի կողմից 1998թ. ապրիլի 16-18-ին կազմակերպված *«L'actualité du Génocide des Arméniens»* (Հայոց ցեղասպանության իրականությունը) միջազգային համաժողովի ընթացքում համայնքի ղեկավարներից մեկը հայտարարեց, որ հայերը պայքարելու են, որպեսզի ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Իսրայելը ճանաչեն Հայոց ցեղասպանությունը:

Ֆրանսիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը 2001թ. հունվարին: ԱՄՆ Կոնգրեսում հարցը բարձրացվել է մի քանի անգամ, ճանաչման գործընթացն այս կամ այն չափով սկսվել է, սակայն կասեցվել Ամերիկայի վարչակազմերի՝ թե՛ հանրապետականների, թե՛ դեմոկրատների կողմից 1985, 1987, 1989, 2000, 2007 և 2009թթ.: Թուրքական իշխանությունը զգուշացնում էր, որ Ամերիկայի շահերը կտուժեն այդ թվում նաև Թուրքիայի տարածքում ամերիկյան ռազմակայանների տեղակայման հարցում, և Ամերիկայի վարչակազմերը զիջում էին: Իսրայելն առայժմ հեռու է Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման իրական գործընթացից:

1980-ականներին Իսրայելի իշխանությունները մեկուսի և սահմանափակ մոտեցում ունեին Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում և գործնականում խուսափում էին դրանից: Հետագայում Իսրայելը հրաժարվեց ճանաչել այն, ավելին՝ դարձավ Թուրքիայի մերժողական քաղաքականության գլխավոր սատարողը (ԱՄՆ-ի հետ միասին):

Տեսական քննարկումները բարոյականության և քաղաքականության կամ շահերի բախման վերաբերյալ դուրս են հոդվածի շրջանակներից: Այնու-

* Պրոֆեսոր, Իսրայելի Բաց համալսարան:

ամենայնիվ, նշենք, որ հին հույն փիլիսոփաները չէին սահմանազատում բարոյականությունը քաղաքականությունից: Այս տարանջատումը բնորոշ է նոր ժամանակների փիլիսոփայության այնպիսի մտածողների համար, ինչպիսիք են Բարուխ (Բենեդիկտոս) Սպինոզան, Թոմաս Հոբսը և Նիկոլաս Մաքիավելլին, մինչդեռ ազատական փիլիսոփաները փորձում էին այս կամ այն ձևով միացնել քաղաքականությունը և բարոյականությունը: Մեր ժամանակներում քաղաքականությունը և քաղաքական ցինիկ հաշվարկները կարծես թե չեն առնչվում բարոյականության հետ:

Բոլոր պետություններն արտաքին քաղաքականության մեջ ուղղորդվում են իրենց շահերով: Սա գրեթե միջազգային չափանիշ է: Սակայն բոլոր պետությունները (գոնե մեծամասնությունը) նաև սահմանափակումներ են դնում նման գործնական և ցինիկ մոտեցումներին, սահմանափակումներ, որոնք թելադրվում են իրենց կարևոր ազգային բարոյականության նորմերով: Շատերն են համարում, որ *Realpolitik-ը,* որն արդարությունը զոհաբերում է հանուն քաղաքական նկատառումների և համաձայնությունների, անընդունելի է, հատկապես այն ամենում, ինչը վերաբերում է ցեղասպանությանը:

Իսրայելում Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումների ընթացքում (ինչպես նաև յուրաքանչյուր երկրում, որտեղ քննարկվում է այս հարցը) արժեքների և շահերի, բարոյականության և քաղաքականության հակասության հետևանքով առաջացած լարվածությունը բարձր է լինում: Ակնհայտ է, որ զուտ քաղաքական մոտեցման դեպքում Թուրքիային սատարելու որոշումը տրամաբանական է: Իսրայելում գերիշխել և մինչև այժմ էլ գերիշխում են քաղաքական շահերը:

Հասկանալի է, որ Ֆրանսիայի կարճաժամկետ շահերը տուժեցին 2001թ. Հայոց ցեղասպանության ճանաչման հետևանքով: Ֆրանսիացիների համար բարոյական արժեքների կարևորության օրինակ հանդիսացող որոշումը իսրայելցիներից շատերի համար դժվարընկալելի էր: Նրանց համար դժվար է ընդունել Իսրայելի բարոյական պարտությունն այլ ազգերի ցեղասպանություններին և, մասնավորապես, Հայոց ցեղասպանությանը մոտեցման հարցում: Ավելի հեշտ է դիտարկել բարոյականությունը որպես ուտոպիա, որպես ճոխություն: Ավելի հեշտ է ասել՝ ես չեմ կարող, քան խոստովանել, որ չեմ ուզում: Կարևոր է այն, որ թերագնահատելով Ֆրանսիայի որոշման բարոյական գործոնը և փոխարենն առաջին պլան մղելով քաղաքական կոնյունկտուրայի շահավետությունը, նվազեցվում է հարցի առնչությամբ Իսրայելի քաղաքականության քննադատության հնարավորությունը: Եթե Հայոց ցեղասպանության ճանաչումն ընդամենը ցինիկ քաղաքական հնարք է, որը շահավետ է դարձել որոշակի պայմաններում, ապա քանի դեռ Իսրայելը չի հանդիպել նման հանգամանքների, այն անհրաժեշտ չի համարի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Իսրայելի և Թուրքիայի հարաբերություններն այն գլխավոր գործոնն են,

որն ընկած է Հայոց ցեղասպանությանը Իսրայելի և Ֆրանսիայի վերաբերմունքի հիմքում: Իսրայելում նույնիսկ խոսում են «կենսական շահերի» մասին՝ Իրանում, Սիրիայում և հենց Թուրքիայում հրեական համայնքների դրության հետ կապված: Մյուս կողմից՝ Հայոց ցեղասպանության ճանաչումն Իսրայելի կողմից որոշիչ է, քանի որ Հայոց ցեղասպանության մերժումը նման է հրեաների Հոլոքոստը մերժելուն (չնայած Հոլոքոստի մերժումը կարող է նաև անմիջական հետևանքների բերել և սրել հակասեմիթականությունը): Ողբերգական անցյալը գիտակցելն ու հիշելն էական է, բայց բավարար չէ ապագայում նման իրադարձությունների կրկնությունը կանխելու համար:

Հայկական հարցը չի կարևորվել Իսրայելում և երկրորդական հարց է դիտվել: Իսրայելի պառլամենտի 120 անդամներից միայն 10-15-ն են մասնակցել քննարկումներին:

1. Իսրայելական մոտեցումները

Հայոց ցեղասպանության հարցը երբեք ուղղակիորեն չի քննարկվել Կնեսետում, բայց իսրայելական պետությունը շարունակաբար խուսափել է հայերի ցեղասպանությունը ճանաչելուց: Իշխանության ներկայացուցիչները չեն մասնակցում ամեն տարի ապրիլի 24-ին հայերի կողմից կազմակերպվող ցեղասպանության հիշատակին նվիրված հավաքներին: Հայոց ցեղասպանության հարցին մոտեցման հասարակական քննարկումներն Իսրայելում ամփոփվում են մի քանի կարևոր լրատվական իրադարձություններում. 1978թ. Երուսաղեմի Հայկական թաղամասի մասին տեսաֆիլմի ցուցադրումը դադարեցվել էր թուրքական իշխանության ճնշումներից հետո, որովհետև ֆիլմում մի քանի հղում էր արվում Հայոց ցեղասպանությանը, ինչում էին Հին Երուսաղեմի Հայկական թաղամասում բնակություն հաստատած, 1915թ. ցեղասպանության վերապրածների վկայություններ: 1982թ. իսրայելական իշխանությունները միջամտեցին Հոլոքոստի և ցեղասպանության խնդրին նվիրված միջազգային կոնֆերանսի ծրագրերին: Իսրայելի Արտաքին գործերի նախարարությունն ուժեղ ճնշում գործադրեց կոնֆերանսի կազմակերպիչների վրա հայ հետազոտողների մասնակցությունը կանխելու նպատակով: Նախատեսված 150 դասախոսություններից 6-ն առնչվում էին Հայոց ցեղասպանությանը: Ի վերջո, կոնֆերանսն անցկացվեց Միացյալ Նահանգների, Եվրոպայի և Իսրայելի 300 հետազոտողի մասնակցությամբ՝ նախապես ծրագրված 600-ի փոխարեն: 1989թ. իսրայելական իշխանությունն ակնհայտորեն ներգրավված էր ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու կանխմանն ուղղված գործընթացում և 2000, 2007թթ. ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման քննարկումների անցկացմանը: 1990թ. դադարեցվել էր իսրայելական հեռուստատեսությամբ «Ճամփորդություն դեպի

Հայաստան» ամերիկյան վավերագրական ֆիլմի ցուցադրությունը. որոշում, որը քննադատվեց: 1994թ. հակասություններ առաջացան իսրայելական դպրոցներում Հայոց ցեղասպանությունը և ընդհանրապես ցեղասպանությունն ուսումնասիրելու հետ կապված: Մինչ օրս այն պաշտոնապես չի ուսուցանվում դպրոցներում, և երիտասարդ իսրայելցիների գիտելիքները Հայոց ցեղասպանության մասին սահմանափակ են: 2003թ. Մաունթ Հերզելում անցկացվող արարողության ժամանակ Հիշատակի օրվա ավարտը և անկախության օրվա սկիզբն ազդարարող ճրագները վառելու համար ընտրվածներից մեկը հայ զթության քույր էր: Իսրայելի իշխանությունների վրա Թուրքիայի գործադրած ճնշման հետևանքով նրան թույլ չտվեցին նշել, որ Հայոց ցեղասպանության վերապրածների երրորդ սերնդից է: Այս իրադարձություններից յուրաքանչյուրն աշխույժ քննարկումներ առաջացրեց. մամուլում բազմաթիվ հոդվածներ գրվեցին, որոնց մեծամասնությունում քննադատվում էր պաշտոնական մոտեցումը:

Շատ մեկնաբաններ նշում են, որ մեկ իրադարձություն կարող է փոխել Ցեղասպանության մերժման հետ կապված իրավիճակը. Ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ-ի կամ Իսրայելի կողմից: Այս երկու պետությունների որոշումները կապված, նույնիսկ փոխկախված են միմյանցից: Եթե մեկն ընդունի Ցեղասպանությունը, մյուսը, վաղ, թե ուշ, նույնը կանի:

Անկասկած, բարոյական տեսանկյունից Իսրայելը պետք է առաջինը լինի: Ցավոք, իրատեսորեն նայելով Իսրայելի հասարակությանն ու քաղաքականությանը, հավանական չի թվում, որ դա տեղի կունենա մոտ ապագայում: Իմ կարծիքով՝ իսրայելցիներս ավելի բարձր չափանիշների կրողներ պետք է լինենք, քան մյուս ազգերը, ոչ միայն այն պատճառով, որ ընտրյալ ժողովուրդ ենք, այլ նաև որովհետև Հոլոքոստը վերապրածներ ենք և ժառանգություն ու անցյալ ունենք: Ես տեղյակ եմ, որ ոչ բոլոր իսրայելցիներն ու հրեաներն են համաձայն այս տեսակետի հետ: Այնուամենայնիվ, մենք՝ իսրայելցի հրեաներս, չկարողացանք ավելի բարձր բարոյական չափանիշներ պահպանել (նաև կապված Ռուանդայում և նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած ցեղասպանություններին մեր վերաբերմունքի հետ):

Իսրայելի պետության վերաբերմունքը Հայոց ցեղասպանությանը կարող է բացատրվել երկու հիմնական պատճառներով.

ա) անընդհատ ճնշումը թուրքական տարբեր կառավարությունների կողմից,

բ) ճնշում իսրայելական հասարակության տարբեր խմբերի կողմից, որոնք վախենում են, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը կարող է վնասել *Շոահ*-ի (մեծ աղետ) բացառիկության գաղափարին:

Երկրորդ պատճառը վերջին տարիներին ավելի քիչ է կարևորվում: Իս-

րայելական ձախ, ինչպես նաև աջ թևի քաղաքական վերնախավը, որոշ բացառություններով, որոշել է զարգացնել և սերտացնել Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունները: Սա քաղաքական և ռազմական շահերից բխող աշխարհաքաղաքական որոշում և ռազմավարություն է, որոնք երբեմն ներկայացվում էին որպես «կարևորագույն իրեական», իսկ հետագայում՝ «կարևորագույն իսրայելական» շահեր:

Տարածայնության մեջ բացահայտ և ոչ բացահայտ ներգրավվածների՝ իրեաների, թուրքերի և հայերի, ինչպես նաև այլոց համար պարզ էր, որ, օրինակ, Հայոց ցեղասպանության մասին ֆիլմ ցուցադրելու շուրջ ծավալված բանավեճի հետևում ավելի կարևոր հարց կար: Առաջ եկավ այն փաստը (և դրա հետևանքով ծագած այն յուրահատուկ խնդիրը), որ այդ երկիրը Հոլոքոստի զոհ դարձած ժողովրդինն էր:

Հայոց ցեղասպանության քննարկումների ընթացքում Իսրայելի և այլ երկրների պաշտոնյաները նշում են, որ հարցը պետք է քննարկվի պատմաբանների և ոչ թե քաղաքական գործիչների մակարդակով: Ահա թե ինչ ասացին իսրայելցի պաշտոնյաները Թուրքիայի ներկայացուցիչներին կրթության նախարար Յոսի Սարիդի 2000թ. ապրիլյան հայտարարությունից հետո (տե՛ս ստորև) և ինչ հայտարարեց Քլինթոնի վարչակազմը (ԱՄՆ նախորդ բոլոր վարչակազմերի նման), երբ այն փորձեց 2000թ. ԱՄՆ-ում կանխել օրենսդրական նախաձեռնությունը և հաջողության հասավ: Այս վիճաբանությունն առաջացավ նաև Ֆրանսիայում՝ Հայոց ցեղասպանության հետ կապված քննարկումների ժամանակ, երբ խորհրդարանն ի վերջո ընդունեց այն: Այս համատեքստում կարևոր է նշել այն հայտարարությունը, որը 2000թ. հունիսին արվել էր Հոլոքոստն ուսումնասիրող 126 անձանց կողմից և որով հաստատվում էր Հայոց ցեղասպանության անհերքելի փաստն ու համապատասխանաբար արևմտյան պետություններին հորդորում էին ճանաչել այն[1] [1]:

Քաղաքական գործիչների՝ հարցը պատմաբաններին թողնելու կոչն, իհարկե, պարկեշտ չէ, և այն քննարկումներից խուսափելու հնարք է՝ հիմնականում քաղաքական շահերից ելնելով: Այնուամենայնիվ, վերջին տարիներին հայերի և նրանց կողմնակիցների համառ պայքարից հետո Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումներ ծավալվեցին մի քանի խորհրդարաններում, որոնք ճանաչեցին այն:

[1] The *New York Times* և *The Jerusalem Post*, 2000թ. հունիսի 8: Խնդրագիր ներկայացնողները նաև դիմում էին արևմտյան դեմոկրատական տերություններին՝ ստիպել Թուրքիայի կառավարությանը և խորհրդարանին ընդունել Օսմանյան Թուրքիայի պատմության մութ էջերը և ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

2. Իսրայելը 1994թ.: Կիսապաշտոնական ճանաչո՞ւմ

1994-ին Հայկական հարցը բարձրացվեց Իսրայելի խորհրդարանում: Այս անգամ քննարկումները տեղի ունեցան Իսրայելի Առաջին հեռուստաալիքով ցուցադրված հաղորդման ընթացքում: Ռեպորտաժը վերաբերում էր Հայոց ցեղասպանության և նրա զոհերի հիշատակի մասին պատրաստված ծրագրերին, որոնց ցուցադրումն, ի վերջո, մերժվեց: Թուրքիայի արտգործնախարարությունը և Թել Ավիվում թուրքական դեսպանատունը, ինչպես և նախկինում, ամեն ինչ արեցին հաղորդումը չհեռարձակելու համար՝ սակայն ապարդյուն: Վերջապես, հաղորդումը (12 րոպե տևողությամբ), որը պարունակում էր տեղեկություններ Ցեղասպանության մասին, հարցազրույցներ հայերի, այդ թվում նաև Երուսաղեմում բնակվող վերապրածներից մեկի և իսրայելցի ուսանողների հետ, ցուցադրվեց, ինչին հետևեց Թել Ավիվում Թուրքիայի դեսպանի հարցազրույցը, որը կրկնեց թուրքական պաշտոնական վարկածը 1915թ. իրադարձությունների վերաբերյալ և քննադատեց այն փաստը, որ Իսրայելը հետաքրքրվում է Հայկական հարցով, ինչը, ըստ նրա, երկու երկրների ընդհանուր շահերից չի բխում:

Փոխարտգործնախարար Յոսի Բեյլինը (Ռաբինի կառավարություն, արտգործնախարարն էր Շիմոն Պերեսը) Կնեսետում պատասխանեց (1994թ. ապրիլ) այն հարցին, որը կապված էր մի քանի օր առաջ ռեպորտաժում թուրքական դեսպանի ասածի հետ [2]: Իր գրավոր պատասխանում Բեյլինը նշեց, որ «ելնելով հրեական պատմական փորձից՝ մենք չենք կարող չարտահայտել մեր կարեկցանքը հայ ժողովրդի կրած տառապանքների և ճակատագրի հանդեպ»: Նա ասել է նաև, որ մենք քաջատեղյակ ենք Թուրքիայի վերաբերմունքին, բայց հարցը չպետք է լարվածության պատճառ դառնա երկու երկրների միջև, որոնք վերջին ժամանակներս զարգացրել են իրենց հարաբերությունները:

Մեկ այլ անգամ Կնեսետի անդամը հայտարարեց, որ Թուրքիայի դեսպանի՝ «պատերազմում՝ ինչպես պատերազմում» հայտարարությունը կարող է սատարել Հոլոքոստը հերքողներին, ուստի մենք պետք է պատասխանենք՝ արդյոք նրանք սպանվել են պատերազմի՞, թե՞ ցեղասպանության հետևանքով: Նա բարձրացրեց նաև բարոյականության և քաղաքականության հարցը՝ հայտարարելով, որ «սա (Հայկական հարցը) մեզ համար՝ որպես հրեաների, հարց է, որը վեր է քաղաքականությունից: Բեյլինը կրկնեց, որ Իսրայելը երբեք տեղի չի տվել Թուրքիայի ճնշումներին՝ ահավոր կոտորածը «ջնջելու» համար. «Մենք միշտ կմերժենք այդ իրադարձությունները ջնջելուն ուղղված ցանկացած փորձ՝ չնայած նույնիսկ որոշ քաղաքական առավելությունների»: Հետո հավելեց. «Մենք երբեք չենք ընդունել դրա (Հայկական ողբերգության – *Յ.Ա.*)՝ պատերազմի արդյունք լինելու մակերեսային վերլուծությունները: Դա պատե-

բազմ չէր: Դա, միանշանակ, ջարդ էր, ցեղասպանություն: Մենք պաշտպանելու ենք այն ոգեկոչելուն ուղղված քայլերը, քանի որ դա այն համաշխարհային իրադարձություններից է, որը պետք է հիշել»: Սրանով Բեյլինը գործնականում մերժեց Թուրքիայի կողմից հանցանքը չընդունելու փաստը և հայտարարությունը, թե այն, ինչ տեղի է ունեցել, զուտ քաղաքացիական պատերազմ էր, կամ հայերը պատերազմական գործողությունների զոհեր են:

Բեյլինի այս վերջին բառերը չափազանց կարևոր էին, դրանք ներկայացնում են նաև Կնեսետի այլ անդամների տեսակետը. Դադրյանի «Հայոց ցեղասպանության պատմությունը» համապարփակ գրքում տեղ գտած մեկնաբանությունները, որոնցով հայտարարվում էր, թե «Իսրայելը հրապարակեց Թուրքիայում Հայոց ցեղասպանության առաջին պաշտոնական դատապարտումը՝ դադարեցնելով ավանդական լռությունը՝ իր դաշնակից Թուրքիային գոհացնելու համար», ցավոք, չափազանցություն էր և իրականում՝ միայն ցանկություն [3]:

3. Իսրայելը և Հայոց ցեղասպանության ճանաչումը

1994թ. հայտարարությունից հետո 2000թ. ապրիլին Յոսի Բեյլինը (այդ ժամանակ արդեն՝ արդարադատության նախարար) ասաց նույն վճռականությամբ. «Այսպես չպետք է լիներ: Ես կարծում եմ, որ մեր վերաբերմունքը զարհուրելի այս պատմական իրադարձությանը չի կարող թելադրվել Թուրքիայի հետ մեր ընկերական հարաբերություններով, չնայած այս հարաբերությունները ինձ համար՝ որպես դրանց զարգացման ուղղությամբ աշխատած մեկի, շատ կարևոր են: Ես նաև հակասություն եմ տեսնում քաղաքական ուղու և բարոյականության միջև: Կատարվել է մի բան, որը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան ցեղասպանություն: Մեկուկես միլիոն մարդ անհայտացավ: Դա պարզապես սխալ չէր, այլ կանխամտածված բան: Ես չեմ կարծում, թե իշխանությունը պետք է պաշտոնական որոշում կայացնի հարցի շուրջ, բայց մենք պետք է հստակեցնենք թուրքերին այն, որ մենք չենք կարող ընդունել պատմական իրադարձությունն անտեսելու պահանջները: Բարոյական դիրքորոշումը չի կարող թելադրվել քաղաքական պահանջներով. սրանք երկու տարբեր ուղիներ են [4]:

2000թ. ապրիլի 24-ին, Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, Սարիդի և Բեյլինի հայտարարություններն արտգործնախարարությունում տարօրինակորեն անտարբեր, սառը վերաբերմունք առաջացրին: Բարաքի իշխանության վերաբերմունքը 2000թ. վերջին և 2001թ. սկզբին պարզ էր. այն ընդունում էր թուրքական փաստարկը: Երբ *Turkish Daily News-ին* տված հարցազրույցում (2000թ. հոկտեմբերի 2) Իսրայելի արտգործնախարարության փոխքարտուղար Ալոն Լիելին հիշեցրին որոշ իսրայելական նախարարների մեկնաբանությունների մասին այսպես կոչված Հայոց ցեղասպանության շուրջ,

նա ասաց, որ հասկանում է Թուրքիայի զայրույթը երկու նախարարների (Սարիդի և Բեյլինի) հայտարարությունների հետ կապված [5]: «Մեր կառավարության քաղաքականությունն է՝ զերծ մնալ նման հայտարարություններից: Այս թեմաները չպետք է մեկնաբանվեն քաղաքական գործիչների կողմից, այլ պետք է թողնվեն գիտնականներին»,- ասել էր Լիելը:

2001թ. հունվարին Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Ի տարբերություն ԱՄՆ Կոնգրեսի՝ Ֆրանսիայի խորհրդարանը տեղի չտվեց Թուրքիայի և նրա կառավարության պահանջներին և «պատժվեց» Թուրքիայի կողմից: Վերջինս հույս ուներ դադարեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը 2000-2001թթ. աշխուժացավ ուրիշ երկրներում: Թուրքիան հետ կանչեց իր դեսպանին Ֆրանսիայից, որը նրա հիմնական առևտրային գործընկերներից էր, դադարեցրեց հսկիչ արբանյակային ալեհավաքի շուրջ ֆրանսիական ընկերության հետ $259 միլիոն արժողությամբ պայմանագիրը (ըստ Թուրքիայի պաշտպանության նախարարության): Թուրքական կառավարությունը նաև դիտարկում էր ֆրանսիական ընկերությունների հեռացումը տասը ուրիշ նախագծերից: Դրանց թվում էր «Ջիաթ» պետական ռազմական գործարանը, որը կորցրեց համատեղ $2 միլիարդ ընդհանուր արժողությամբ 1000 զրահամեքենա արտադրելու առաջարկը [6]: Որքան էլ անպարկեշտ հնչի, Իսրայելը կարծես թե շահեց իրադարձությունների նմանօրինակ զարգացումից: Քանի դեռ բանակցությունները հարցի վերաբերյալ ընթացքի մեջ էին, իսրայելական ընկերությունը պարտվեց ֆրանսիական ընկերությանը, բայց երբ Ֆրանսիայի և Թուրքիայի հարաբերությունները վատթարացան Հայկական հարցի հետ կապված, Անկարան սպառնաց դադարեցնել ֆրանսիական ընկերության հետ ձեռնարկվող նախագծերը [7]: Իսրայելը շահեց $2 միլիարդ արժողությամբ հարյուրավոր թուրքական զրահամեքենաները հզորացնելու խոշոր գործարք (պայմանագիրը համաձայնեցված էր 2002թ. մարտին): Իսրայելի արտգործնախարար Շլոմո Բեն-Ամին շեշտեց նաև իսրայելական արբանյակային ալեհավաք գնելու հնարավորության մասին:

Իսրայելի կառավարության վերաբերմունքը, ավելի բարդ և զգայուն լինելով, հեռու է այս հարցում ներգրավված մյուս արևմտյան երկրների երկատված վերաբերմունքից: Այնտեղ, որտեղ Իսրայելն է, նժարին շատ ավելին է դրված: Գոյատևման հետ կապված՝ Իսրայելը որոշ դեպքերում պետք է գնար դժվար փոխզիջումների՝ բարոյական և այլ: Իսրայելը գնացել է նաև փոխզիջումների նույնիսկ այն դեպքերում, երբ իր գոյությունը վտանգված չէր:

4. Պերեսի հայտարարությունը 2001-ի ապրիլին և դեսպանի հայտարարությունը 2002-ի փետրվարին

Թուրքիայում ազդեցիկ անգլիալեզու *Turkish Daily News* օրաթերթի 2001թ. ապրիլի 10-ի համարի խորագրերը հստակ էին. «Պերես՝ հայկական մեղադրանքներն անիմաստ են...» [8]: Թերթը Շիմոն Պերեսին՝ Շարոնի կառավարության արտգործնախարարին ներկայացրեց որպես թուրքական դիրքորոշման պաշտպան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կատարված իրադարձությունների իմաստով: Պերեսին մինչ այդ թուրքական մամուլում ներկայացնում էին նաև որպես մեկը, որը, ազդելով նախագահ Քլինթոնի վրա, կանխեց 2000թ. Ներկայացուցիչների պալատում հայանպաստ որոշման ընդունումը: Այս հայտարարությունը կրկնվեց թուրքական մամուլում 2001թ.[1]:

Պերեսի հարցազրույցը տեղի էր ունեցել նրա՝ Թուրքիա այցի նախօրեին: Պերեսը հայտարարում էր, որ պատմական հարցերով պետք է զբաղվեն պատմաբանները:

Ինչպես ասվում էր թուրքական թերթում, ըստ Պերեսի՝ Իսրայելը չպետք է պատմական կամ փիլիսոփայական որևէ դիրք զբաղեցնի Հայկական հարցի վերաբերյալ, բայց միևնույն ժամանակ ավելացրեց. «Եթե մեզ պետք լինի որոշել մեր դիրքը, այն պետք է արվի մեծ զգուշությամբ, որպեսզի չաղավաղվեն պատմական իրողությունները»:

Մեջբերվում են Պերեսի հետևյալ խոսքերը. *«Մենք դեմ ենք Հոլոքոստի և հայկական մեղադրանքների միջև նույնություններ գտնելուն: Հոլոքոստի նման ոչ մի բան չի եղել: Այն, ինչի միջով հայերն անցել են, դա ողբերգություն է, բայց ոչ ցեղասպանություն»:*

Ինչպես նշեցինք, Իսրայելը մշտապես խուսափում է Հայկական հարցից: Այժմ էլ արտգործնախարարն է կառավարության անունից միանում մերժողներին: Սա Իսրայելի՝ «պասիվ» ժխտումից «ակտիվի» անցման արտահայտությունն է: Կարող եք պատկերացնել Իսրայելի և հրեաների արձագանքն ինչ-որ երկրի արտգործնախարարի հայտարարությանը, որում նա նման կերպով արտահայտվում է Հոլոքոստի վերաբերյալ: Ինչպե՞ս նրանք կվերաբերվեին այն բանին, եթե Հոլոքոստը «ողբերգություն» անվանեին:

Ինչպիսի՞ն էր Իսրայելում արձագանքը Պերեսի հակասական խոսքերին: Ի սկզբանե իսրայելական լրատվամիջոցներն արհամարհեցին թեման, չնայած Իսրայելում Պերեսի՝ Թուրքիա այցելությունը մեծ ուշադրության արժանացավ: Ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Իսրայելում բնակվող հայերի, ինչպես նաև «հայերի որոշ կողմնակիցների» վրդովմունքից հետո հարցը բարձրացվեց

[1] Տե՛ս, օրինակ, *Burcun Imir,* "Sharon: Turkish Israeli Relationship Can Be Defined as an Alliance of Democracies," *Turkish Daily News*, August 6, 2001.

իսրայելական մամուլում [9]:

Ինչո՞ւ Պերեսի նման հարգված և փորձառու քաղաքական գործիչն այսպիսի հայտարարություն արեց: Անշուշտ, Հայոց ցեղասպանությանն անտեղյակությունից չէ: Դժվար է գտնել ժողովրդավարական երկրում որևէ կրթված քաղաքական գործչի, որը երբևիցե նման ակնհայտ անպարկեշտ հայտարարություն աներ այս հարցի վերաբերյալ: Շատ քաղաքական գործիչներ խուսափում են «ցեղասպանություն» բառն օգտագործելուց, բայց երբեք, որքան մեզ հայտնի է, որևէ պաշտոնական անձ չի հայտարարել, որ դա ցեղասպանություն **չէր**: Թվում է, թե Իսրայելն ուղղակի ցանկանում էր Թուրքիայի հետ հարաբերություններն ավելի լավացնել և լրիվ մի կողմ դնել Հայոց ցեղասպանության հարցը, այդ թվում՝ բոլոր պատմական և բարոյական հետևանքները:

Խիստ զայրացած հայերն ամբողջ աշխարհում Իսրայելի դեսպանատներ և հյուպատոսարաններ ուղարկեցին բողոքներ: Ցեղասպանության ժխտման համար հենց Իսրայելում որոշ քննադատությունից հետո Պերեսն իր աշխատակիցների միջոցով հայտարարություն տարածեց, որում ասվում էր, որ նրա խոսքերը մասամբ սխալ էին մեջբերվել: Դրանից հետո Իսրայելի արտգործնախարարությունը հետևյալ հաղորդագրությունը տարածեց իր ներկայացուցչություններում. «Իսրայելի դիրքորոշումը հայերի կոտորածի վերաբերյալ.

1. Մի շարք ներկայացուցչություններ բողոքներ ստացան, մասամբ էլեկտրոնային փոստով, արտաքին գործերի նախարար Պերեսի Անկարա կատարած այցի ժամանակ ասած խոսքերը թուրքական մամուլում սխալ ներկայացվելու հետևանքով:

2. Եթե ցանկանում եք ծանոթանալ դրանց, ապա սրանք են արտաքին գործերի նախարարի իրական խոսքերը (համաձայն Անկարայից ստացած տեղեկատվության)՝

ա. Այս հարցով պետք է զբաղվեն պատմաբանները, այլ ոչ թե քաղաքական գործիչները:

բ. Մենք հայերի ողբերգության և Հոլոքոստի միջև համեմատություններ անցկացնելու կողմնակիցներ չենք:

գ. Իսրայելը չի պատրաստվում ինչ-որ քաղաքական կամ պատմական դիրքորոշում զբաղեցնել այս հարցում:

դ. Նախարարը չի ասել, ինչպես դա ներկայացրել է թուրքական լրատվական գործակալությունը. «Այն, ինչի միջով հայերն անցել են, ողբերգություն է, բայց ոչ ցեղասպանություն»:

Ինքը՝ Պերեսը, որևէ կերպ չարձագանքեց իր հայտարարություններին: Նա ոչ մի լուրջ քայլ չկատարեց ուղղելու թերթին կամ հերքելու այն, ինչ գրված էր թուրքական ԶԼՄ-ում: Իսրայելի կառավարության կողմից Հայոց

ցեղասպանության՝ որպես գործարքի մի մաս անպատկառ օգտագործումը շարունակվում է:

Շրջափակման մեջ գտնվող Իսրայելն իրավունք ունի ձգտելու Թուրքիայի պես երկրների հետ ռազմական դաշինքներ կնքելու, չընդունելու որևէ պաշտոնական դիրքորոշում Հայոց ցեղասպանության վերաբերյալ, եթե խորապես և իսկապես հավատացած է, որ այն կարող է *անուղղելի վնաս հասցնել:* Չնայած դա այնքան էլ բարոյական չէ, բայց կարելի է հասկանալ և ընդունել [10]: Բայց դա չի կարող արդարացում հանդիսանալ Պերեսի համար, որը Իսրայել պետության անունից «փաստացիորեն ժխտում է Հայոց ցեղասպանությունը, ինչը հավասարազոր է Հոլոքոստի ժխտմանը» [9]: 2000թ. Սարիդի հայտարարությունից հետո (որին ստորև ավելի մանրամասն կանդրադառնանք), Իսրայելցի պաշտոնյաները հայտարարեցին, որ դա նրա անձնական կարծիքն է: Այս դեպքում ոչ ոք նման բան չարեց: Մի բան պարզ պետք է լինի՝ Իսրայելը պատրաստ էր և պատրաստ է օգտագործել Հայոց ցեղասպանության հիշատակը գործարքներ կնքելու համար: Այն օգտագործում է Եղեռնը՝ որպես առևտրի գործիք, և նման քայլ կատարելիս պատրաստ է հատել այն սահմանագիծը, որը չպետք է անցնի և ոչ մի հրեա: Իսրայելը երբեք, ոչ մի դեպքում չպետք է օգնի կամ խրախուսի նրանց, ովքեր ժխտում են ցեղասպանությունը, *ցանկացած ցեղասպանություն:*

Բայց Իսրայելն ավելի հեռուն գնաց: Վրաստանում և Հայաստանում Իսրայելի նոր դեսպան Ռիվկա Քոհենը 2002թ. փետրվարի 8-ին, Երևանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, կրկնեց Պերեսի հայտարարությունը [11]: Նա ասաց, որ հրեա ժողովուրդը վշտացած է 1915-1916թթ. հայերի սպանություններով և ողբերգությամբ, բայց Հոլոքոստը եզակի երևույթ է, քանի որ մի ողջ ազգի կանխամտածված ոչնչացման ծրագիր էր և դրա հետ ոչինչ չի կարող համեմատվել: Ինչը խիստ զայրացրեց Հայաստանի և համայն աշխարհի հայությանը: Պետական պաշտոնյաները և քաղաքական գործիչները պահանջում էին դեսպանին *persona non grata* հայտարարել: Ամերիկայի Հայկական խորհուրդը հետևյալ հայտարարությունը տարածեց. *«Մենք կտրականապես դեմ ենք Իսրայելի կառավարության քաղաքականությանը, քանի որ այն անբարո է և անհեռատեսական: Ամենանողկալին այն է, որ Իսրայելի կառավարությունը Հայոց ցեղասպանությունը որպես մանրադրամ է օգտագործում իր գործարքները կնքելու համար: Մենք կոչ ենք անում հրեա ժողովրդին, որը դեռ լիովին չի ապաքինվել Հոլոքոստի ցավից, դատապարտել Իսրայելի կառավարության քաղաքականությունն այս հարցի վերաբերյալ: Մենք խնդրում ենք նրանց թույլ չտալ, որպեսզի Իսրայելի կառավարությունը դառնա այն կառավարություններից մեկը, որոնք մինչև այսօր ժխտում են Հոլոքոստը հիմար պատրվակներով [12]:*

Մի քանի հարյուր հայ ցույց կազմակերպեցին Լոս Անջելեսում Իսրայելի հյուպատոսարանի առջև [13]: Մեզ որքան հայտնի է, այս մասին նս Իսրայելում ոչինչ չէին հայտնել:

Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունը պաշտոնական բողոքի նոտա հղեց Իսրայելի Արտաքին գործերի նախարարությանը, որում ասված էր, որ Հայոց ցեղասպանության ժխտման կամ նշանակությունը փոքրացնելու ցանկացած փորձ համարում է անթույլատրելի, անկախ պատճառներից. *«Հայաստանը երբեք չի ձգտել որևէ զուգահեռ անցկացնել Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի միջև, քանի որ համարում է, որ մարդկության դեմ կատարված ցանկացած ոճիր «եզակի» է և ունի իր քաղաքական, իրավական, պատմական և բարոյական հետևանքները»:*

Իսրայելի ԱԳՆ պաշտոնական պատասխանը հետևյալն էր. *«Իսրայելը երբեք չի փորձել ժխտել կամ ինչ-որ կերպ փոքրացնել 1915-1916թթ. տեղի ունեցած իրադարձությունների նշանակությունը: Որպես հրեա և իսրայելցի՝ մենք հատկապես վշտացած ենք այն կորուստներով և ողբերգությամբ, որը տեղի է ունեցել 1915 և 1916թթ.: Մենք ըմբռնումով ենք մոտենում այն մեծ զգացմունքայնությանը, որն առաջանում է երկու կողմերի մեջ՝ հաշվի առնելով հսկայաթիվ զոհերն ու տանջանքները, որոնք վերապրել է հայ ժողովուրդը: Այս զգայուն թեման պետք է բաց քննարկման և պատմաբանների երկխոսության առարկա դառնա, ինչի հիմք, իհարկե, պետք է հանդիսանան փաստաթղթերն ու փաստերը»:*

Իսրայելը նաև հայտարարեց, որ Հոլոքոստը եզակի դեպք է մարդկության պատմության մեջ և կանխամտածված ոճիր էր հրեա ժողովրդի դեմ: Իսրայելն ըմբռնումով է մոտենում հայերի ողբերգությանը: Այնուամենայնիվ, այդ իրադարձությունները չեն կարող համեմատվել Հոլոքոստի հետ: Սա ոչ մի կերպ չի նվազեցնում այս ողբերգության չափը [14]: (Որոշ աղբյուրներ գրում են, որ այդ իրադարձությունները չեն կարող համեմատվել Հոլոքոստի հետ, իսկ մյուսները՝ որ նրանք չեն կարող համեմատվել ցեղասպանության հետ: Ամեն դեպքում, և՛ Պերեսը, և՛ դեսպանն ասել էին, որ 1915-1916թթ. կատարվածը չի կարող համեմատվել ցեղասպանության հետ – *Յ.Ա.*):

Իսրայելի ԱԳՆ հայտարարության իմաստն այն էր, որ հայերի 1,5 միլիոն կորուստները կարող են համարվել ողբերգություն, բայց ոչ ցեղասպանություն: Մեկ այլ հետևությունն այն է, որ պատմաբանների միջև պետք է կայանան բաց քննարկում և երկխոսություն կատարված փաստերը հաստատելու համար:

Մենք չենք կարող նվազեցնել այս զարհուրելի հայտարարության պատմական նշանակությունը: Ոչ Հոլոքոստ, ոչ ցեղասպանություն, այլ ընդամենը «զոհեր», «աղետյալներ», «ողբերգություն», առանց նույնիսկ նշելու, թե ով է այդ ամենը կատարել: Չի խոսվում նույնիսկ սպանությունների համար պատաս-

խանատվության մասին, կարծես դա ուղղակի տարերային աղետ էր: Բայց ասվում է երկու կողմերի՝ թուրքերի և հայերի զգացմունքայնության մասին (պատկերացրեք, Հոլոքոստի մասին խոսելիս նման համեմատություն անցկացնեին հրեաների ու գերմանացիների միջև): Եվ իհարկե, նշվում է Հոլոքոստի եզակիության մասին:

Վտանգավոր այս պաշտոնական հայտարարության մեջ առկա են ցինիզմը, մեծամտությունը, ներքին հակասությունը և անպատասխանատվությունը: Իսրայելն այսպիսով ևս մի քայլ կատարեց պասիվից դեպի ակտիվ ժխտման անցնելու ուղղությամբ: Եվ այս հայտարարությունն անում է պետություն, որի ժողովուրդը 60 տարի առաջ ինքն է եղել Հոլոքոստի զոհ:

Իսրայելում «սովորական բողոքով» հանդես եկան փոքրաթիվ մարդիկ [15]: «Բանավեճի» ընթացքում արտգործնախարարության բերած փաստարկները մինչև այսօր (2009թ.) հիմք են հանդիսանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ Իսրայելի քաղաքականության համար:

5. Սարիդի հայտարարությունը. 2000թ.

Կրթության նախարար Յոսի Սարիդը կողմ է եղել 2000թ. ապրիլի 24-ին՝ Հայոց զոհերի հիշատակի օրվա առթիվ Հայկական թաղամաս այցելելու մտքին՝ գիտակցելով, որ այդ այցելությունը և ուղերձը նախադեպ կստեղծեն: Պետք է ասել, որ Սարիդը (Մերեց կուսակցություն) առաջին նախարարը չէր, որ Հիշատակի օրն այցելեց Հայկական թաղամաս: Ռաբինի կառավարությունում Իսրայելի աբսորբցիայի նախարար Յաիր Ցաբանը (Մերեց) 1994թ. ապրիլի 24-ին նույնն էր արել: Ամեն դեպքում Հայկական թաղամաս այցելելը Սարիդի անձնական նախաձեռնությունն էր, որի համար նա ոչ մեկի հետ չէր խորհրդակցել և թույլտվություն չէր հարցրել կամ նույնիսկ տեղյակ պահել այն ժամանակվա վարչապետ Էհուդ Բարաքին: Նա կարող էր ենթադրել, որ թույլտվություն չէր ստանալու:

Սարիդը մանրազնին նախապատրաստել էր ուղերձը հայերին՝ գիտակցելով ամեն բառի և նման արարքի կարևորությունն ու հնարավոր հետևանքները: Չնայած տվյալ պահին նա չէր ներկայացնում Իսրայելի կառավարությունը, բայց նրա՝ այնտեղ գտնվելու մասին խոսելիս ընդգծվում էր այն, որ նա կրթության նախարարն է:

«*Ես, մյուս իսրայելցիների հետ միասին, գիտակցում եմ այստեղ ներկա գտնվելու կարևորությունը,-* ասաց նա իր խոսքում,- *այսօր գուցե առաջին անգամ դուք այդքան միայնակ չեք»: «Ես այստեղ, ձեզ հետ եմ գտնվում որպես մարդ արարած, որպես հրեա, որպես իսրայելցի, որպես կրթության նախարար»:* Սարիդը նշեց, որ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն էլ էր հրեա, առաջիններից էր, ով աշխարհին պատմեց հայերի ցեղասպանու-

թյան մասին: Նա նշեց նաև «Մուսա լեռան 40 օրը» վեպի մասին, որի հեղինակը հրեա Ֆրանց Վերֆելն էր, որը մեծ ազդեցություն ունեցավ իր և իր սերնդի վրա: Սարիդն ավարտեց ելույթը՝ ասելով, որ ամեն ինչ կանի, որպեսզի Հայոց ցեղասպանությունն ընդգրկվի Իսրայելի միջնակարգ դպրոցների պատմության դասընթացում:

Սարիդի ուղերձը մեծ ուշադրության արժանացավ Իսրայելում և միջազգային մամուլում, նրանից մեջբերումներ էին անում շատ երկրներում: Սկզբում Իսրայելի կառավարության կողմից, որը փաստացի գործում էր հօգուտ թուրքական պաշտոնական վարկածի, ոչ մի պաշտոնական բողոք չհետևեց: Բայց շուտով պարզ դարձավ, որ Սարիդի վերաբերմունքը համահունչ չէր Իսրայելի պաշտոնական քաղաքականությանը:

«Հաարեցի» 2000թ. ապրիլի 27-ի համարի խմբագրականի խորագիրը շատ պարզ էր՝ «Սովորելու և հիշելու անհրաժեշտություն», այնտեղ ասվում էր հետևյալը. *«Իսրայելի կցկտուր դիրքորոշումը հայերի ցեղասպանության վերաբերյալ հիմնված է սխալ համոզմունքի վրա, որ քաղաքական շահերի և բարոյական դիրքորոշման միջև անլուծելի հակասություն գոյություն ունի:*

Չնայած բնական կարող է թվալ, որ Հոլոքոստ վերապրած ժողովուրդը ճանաչեր մեկ այլ ազգի նկատմամբ կատարված ջարդը, այնուամենայնիվ, Թուրքիայի կողմից, որը չի ցանկանում ստանձնել Հայոց ցեղասպանության պատասխանատվությունը, տարվող լոբբիստական գործունեությունն ազդել է Իսրայելի դիրքորոշման վրա: Վերջին տարիներին, երբ Թուրքիայի հետ կարևորություն ներկայացնող հարաբերություններն ամրապնդվեցին, Իսրայելի զգուշությունն ավելի մեծացավ և հավասարվեց այլ ժողովրդի տանջանքները մոռանալու ցանկությանը:

Հարցը Թուրքիայի կողմից լոբբիստական գործունեության հետևանքով ճնշումը չէ, այլ այն, որ Իսրայելը տեղի է տալիս այդ ճնշմանը:

Իսրայելի դիրքորոշումն ավելի խնդրահարույց է դառնում, երբ այն դիտարկվում է հրեա ժողովրդի ձեռնարկած տարբեր գործողությունների տեսանկյունից, որոնք ուղղված են Հոլոքոստի ժխտման նոր փորձերի դեմ, օրինակ՝ Դևիդ Իրվինգի դատավարությունը: Պետք չէ մեծ ջանքեր գործադրել այս երկու ժողովուրդների ճակատագրերի միջև նմանություններ և տարբերություններ գտնելու համար, որպեսզի հասկանալ, որ հայոց պատմության հետ կապված Իսրայելի տատանումները թուլացնում են նրա բարոյական դիրքի անժխտելիությունը, նաև՝ Հոլոքոստի դասերի լուսաբանման գործում:

Իսրայելի ոչ հստակ հայտարարությունները, որոնցում «ցավում են Օսմանյան կայսրության վերջին տարիներին, պատերազմների ընթացքում շատ հայերի մահվան կապակցությամբ», և աչք է փակվում այդ մահերի իրականացման հանգամանքների վրա, բարոյական իրավունք չեն տալիս Իսրայելին

պահանջել, որ իրեական Հոլոքոստը մոռացության չմատնվի: Իսրայելի զգույշ ձևակերպումները հայերի «կոտորածի» վերաբերյալ այնքան էլ չեն նպաստում Իսրայելի բարոյական դիրքերի ամրապնդմանը:

Իսրայելը բաց թողեց Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած առաջին երկիրը դառնալու հնարավորությունը: Մի խումբ երկրներ՝ Ֆրանսիա, Բելգիա, Շվեդիա, և այդ երկրների թիվն ավելի մեծանում է, արդեն ճանաչել են այն: Մեկ այլ ազգի նկատմամբ իրականացված սպանդի ուսումնասիրությունն ու հիշատակը պետք է առաջնահերթ լինեն Հոլոքոստ վերապրած ժողովրդի համար, և ոչ մի դիվանագիտական շահ չպետք է խանգարի դրան» [16]:

Հայերը զգացված էին Սարիդի հայտարարությունից, և նա գնահատվեց նրանց կողմից: Հայկական ազգային ինստիտուտն անգլերեն թարգմանեց նրա ուղերձը, որը նրանք «ուժեղ» անվանեցին: Այն վերահրատարակվում էր, դրանից մեջբերումներ էին արվում աշխարհի հայկական լրատվամիջոցներում: Հայկական համայնքները, այդ թվում նաև Իսրայելում, ողջունեցին նրա «արժեքավոր դիրքորոշումը», գնահատեցին «մարդու իրավունքների պաշտպանի դերակատարությունը» և երախտագիտություն հայտնեցին[1]:

Թուրքիայի արձագանքը լրիվ տարբեր էր: Համաձայն Անկարայում Անատոլիայի նորությունների և *Turkish Daily News* գործակալությունների (2000թ. մայիսի 3)՝ Թուրքիային հավաստիացրել էին, որ հայկական «այսպես կոչված ցեղասպանության» վերաբերյալ Իսրայելի քաղաքականությունը չի փոխվելու: Ըստ Իսրայելի դեսպան Ուրի Բար-Ների՝ Սարիդի հայտարարությունը վկայում է, որ Իսրայելը դեմոկրատական երկիր է, բայց կառավարության վերաբերմունքն այս հարցի նկատմամբ այլ է և հստակ: Դիվանագիտական աղբյուրները հայտնում են, որ Թել Ավիվում Թուրքիայի դեսպան Ահմեթ Ուզումչուի և Իսրայելի արտգործնախարարության պաշտոնյաների հանդիպման ժամանակ շեշտվել էր, որ Յոսի Սարիդի հայտարարություններն այսպես կոչված հայկական ցեղասպանության վերաբերյալ արտահայտում են նրա անձնական տեսանկյունը և Իսրայելի կառավարության պաշտոնական դիրքորոշումը չեն: Նրանք *Turkish Daily News* գործակալությանը հայտարարեցին, որ Իսրայելն այսուհետ ևս ցանկանում է ամրապնդել երկկողմանի հարաբերությունները Թուրքիայի հետ: Նրանք շեշտեցին, որ Իսրայելի քաղաքականությունը չի փոխվելու, նրանց դիրքորոշումն այն է, որ հարցը պետք է քննարկեն պատմաբանները, այլ ոչ թե քաղաքական գործիչները: *Turkish Daily News*-ին իսրայելցի անհայտ մի դիվանագետ ասել է. «Այս հարցի վերաբերյալ պաշտոնական հայտարարության կարիք չկա: Մենք չենք ուզում որևէ դիրք զբաղեցնել այս

[1] Նամակներ Յոսի Սարիդին, այդ թվում՝ Իտալիայի Հայերի միությունից, 2000թ. մայիսի 16; Հայկական կրթական և մշակութային ընկերությունից, 2000թ. մայիսի 19; «մի մարդուց, որը կորցրել է իր ընտանիքի անդամներին 1915թ.», 2000թ. մայիսի 10:

հարցում: Մենք այն թողնում ենք պատմաբաններին: Երկու նախարարների հայտարարություններն արտահայտում են նրանց անձնական կարծիքը և կապ չունեն կառավարության պաշտոնական քաղաքականության հետ»:

Թուրքիայի կառավարության հակազդեցության, ինչպես նաև Հոլոքոստի նշանակությունը նվազեցնելու երկյուղի պատճառով Հայոց ցեղասպանության մասին չի դասավանդվում Իսրայելում[1]:

Հայոց ցեղասպանության հարցը բարձրացվել է նաև Իսրայելի խորհրդարանում 2007թ. մարտին: Քննարկումն առաջարկել էր Կնեսետի պատգամավոր Հայիմ Օրոնը (Մերեց): Նա Ցեղասպանության ճանաչում չէր պահանջում այդ փուլում, այլ ուղղակի առաջարկում էր քննարկել այն, իսկ ավելի ուշ՝ մեկ այլ նիստի ընթացքում, քվեարկության դնել հարցը և ճանաչել այն, եթե հնարավոր է:

Կառավարական կոալիցիան ընդդիմացավ այս առաջարկությանը, նույնիսկ դեմ էր, որ հարցը քննարկվի Կրթության կոմիտեի շրջանակներում, և հաղթեց Կնեսետի 120 պատգամավորների քվեարկության ժամանակ (16-ն ընդդեմ 12-ի): Կնեսետում որոշվեց, որ հարցը նույնիսկ չի կարող քննարկվել:

Հաջորդ տարի՝ 2008թ. մարտին, Օրոնը կրկին հարցը բարձրացրեց Կնեսետի առջև: Այս անգամ Կնեսետն ընդունեց Օրոնի առաջարկը և աննախադեպ քայլ կատարեց՝ որոշելով քննարկել Հայոց ցեղասպանության հարցը: Կնեսետի 11 անդամ նախաձեռնությանը կողմ քվեարկեց, ոչ ոք դեմ և ձեռնպահ չէր: Օրոնը պահանջեց, որ այն քննարկվի Կրթության կոմիտեում, բայց կառավարությունը որոշեց քննարկել Արտաքին գործերի և անվտանգության կոմիտեում, որպեսզի փակ լիներ մամուլի համար: Որքան մեզ հայտնի է, քննարկումն այդպես էլ տեղի չի ունեցել: Օրոնը հարցը բարձրացրեց նաև 2009-ի մարտին: Ավելացնենք, որ Իսրայելում Հայոց ցեղասպանության առնչությամբ մեծ տարբերություն չկա ձախ կամ աջ թևերի միջև, մանավանդ երբ նրանք կառավարությունում են:

Երկու թևերն էլ պրագմատիկ տեսանկյունից են մոտենում հարցին, *Real-politik*-ի տեսանկյունից՝ նախընտրելով հարաբերությունները Թուրքիայի հետ: Կնեսետում հարցը հիմնականում բարձրացվում է Մերեց կուսակցության պատգամավորների կողմից (սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկրա-

[1] «Ինչպիսի՞ն է Հայոց ցեղասպանության հարցն այսօր իսրայելական դպրոցներում» հարցին, որն ուղղել էր Իսրայելի Հայկական հարցի կոմիտեի նախագահ Ժորժետ Ավագյանը կրթության նախարարության գլխավոր տնօրեն Շլոմիտ Ամիչային, նախարարության մանկավարժական քարտուղարության նախագահ Մայքլ Աբիտբուլը (2001թ. հուլիսի 31) պատասխանեց, որ կրթության նախարարությունը շուտով հրատարակելու է համընդգրկուն գիրք Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ինչպես խոստացել էր կրթության նախկին նախարար Յոսի Սարիդը, գիրքը մատչելի կլինի պատմության այն բոլոր ուսուցիչների համար, ովքեր կցանկանան դասավանդել այդ առարկան 2000-2001 ուսումնական տարում: Մինչև այս հոդվածի գրվելը (2009) գիրքը լույս չէր տեսել: Մեր տվյալների համաձայն, մոտ ապագայում այն ևս լույս չի տեսնի: Այն բանից հետո, երբ կրթության նախարար դարձան սկզբում Լիքուդի, այնուհետև՝ լեյբորիստների ներկայացուցիչները, դրանից հետո՝ Լիքուդի մեկ այլ ներկայացուցիչ, ծրագրի իրականացման հեռանկարները գրեթե զրոյական են:

տական ուղղվածության), որը բավական փոքր կուսակցություն է և Կնեսետում ներկայացված էր հինգ, իսկ 2008-ից՝ երեք պատգամավորով: Նրանք համարում են, որ քաղաքականությունն ու բարոյականությունը չեն հակասում միմյանց, և որ պետության քաղաքականությունը կարող է և պետք է լինի բարոյական: Հանգուցյալ Յուրի Շտերնը (աջ կուսակցությունից Կնեսետի անդամ) կողմ էր Ցեղասպանության ճանաչմանը, ինչը ցույց է տալիս, որ երբեմն անձնական համոզմունքներն ավելի կարևոր են:

6. Թուրք-իսրայելական դաշինքը

Թուրք-իսրայելական հարաբերություններն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել Իսրայելի աշխարհաքաղաքական նկատառումները: Կարող են ասել, թե Իսրայելը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի դրանց: Կարող են ասել նաև, թե Իսրայելը դժվարին դրության մեջ է: Նրան դաշնակիցներ շատ են պետք: Թուրքիան, որն աշխարհիկ մուսուլմանական, մեծապես ռազմականացված երկիր է, որոշակի գործողությունների ազատություն է տալիս Իսրայելին, ի տարբերություն ծայրահեղականների՝ Իսրայել պետությունը և նույնիսկ բնակիչներին՝ հրեաներին վերացնելու ցանկության[1]:

Պրագմատիկ հիմնավորումները և *Realpolitik-ը* հասկանալու համար անհրաժեշտ է ներկայացնել այն նկատառումները, որոնք ազդեցություն են ունեցել Հայոց ցեղասպանության հանդեպ Իսրայելի վերաբերմունքի վրա: Ամեն դեպքում, թուրք-իսրայելական հարաբերությունների դիտարկումը դուրս է սույն հետազոտության շրջանակներից:

1990-ական թթ. Թուրքիան և Իսրայելն անհավանական դաշինք ստեղծեցին, որն առաջացրել է փորձագետների զարմանքը: Երկու երկրների սերտ հարաբերություններում կարծես ոչ մի պատմական կամ որևէ այլ տրամաբանություն չկա. մեկը մեծ և երկարամյա պատմություն ունեցող կայսրության հետնորդն է, մյուսը՝ անընդհատ հարձակման վտանգի մեջ ապրող պետություն, որի սահմաններին ու գոյությանը սպառնում են հարևանները: Մեկը՝ իսլամական է, մյուսը՝ հրեական: Թուրքիան նոր է ձերբազատվում երրորդ աշխարհի երկիր լինելու կարգավիճակից, մինչդեռ Իսրայելն ազատական ժողովրդավարական երկիր է (որտեղ ներքին լարվածություն կա այն պատճառով, որ դեմոկրատական երկիր լինելով՝ միևնույն ժամանակ հրեական պե-

[1] Այս մասին Իսրայելում շատ գրքեր և հոդվածներ են գրվել: Մեր հակիրճ ակնարկը հիմնված է հիմնականում *Ռաֆայել Իսրայելիի* “The Turkish-Israeli Odd Couple,” *Orbis*, volume 45 issue no. 1 (winter 2001), p. 65-79. աշխատության վրա: *Տե՛ս նաև Alon Liel,* Turkey in the Middle East, Oil Islam Politics (Tel-Aviv: Hakibbutz Hameuchad, 1994); *Alon Liel,* Tukey-Military, Islam and Politics 1970-2000 (Tel-Aviv: Hakibbutz Hameuchad, 1999); *Aryeh Shmuelevitz*, Turkey in the 20th Century: Between Modernization and Tradition (Tel-Aviv: Ministry of Defence, 1997); *Ehud R. Toledano*, An Introduction to the History of the Ottoman Empire (Tel-Aviv: Ministry of Defence, 1985).

տություն է, որը փաստացիորեն վերահսկում է մեկ այլ ժողովրդի): Թուրքիայում մեծ ազդեցություն ունեն զինվորականները, մինչդեռ Իսրայելը քաղաքացիական պետություն է: Մեկի տարածքն ու բնակչությունը մեծ են, մյուսը համեմատաբար փոքր է:

Թուրք-իսրայելական դաշինքում բազմաթիվ տարրեր կան, որոնցից յուրաքանչյուրն առանձին և բազմակողմանի ուսումնասիրության է արժանի: Տվյալ պարագայում մենք կարող ենք նշել միայն Հայոց ցեղասպանության նկատմամբ Իսրայելի վերաբերմունքի վրա ազդող գործոնները, որոնք են.

- հրեական համայնքը Թուրքիայում,
- ջրի, գազի և նավթի ներմուծումը Թուրքիայից,
- Թուրքիան՝ որպես ռազմական դաշնակից Իրանի և Իրաքի դեմ, որոնց հետ սերտ հարաբերություններ չի պահպանում,
- ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի հանդեպ և Թուրքիայի դերը,
- ԱՄՆ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, հատկապես նավթային ոլորտում, և Թուրքիայի ու Իսրայելի դերն այդ քաղաքականությունում:

Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունների վրա ազդող խնդիրների մեջ անվտանգության, ռազմավարության, ռազմական և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը գուցե ամենասուրն է և կարևորներից մեկը թուրք գեներալների համար, որոնք վերահսկում են իրենց երկրի քաղաքականությունը: Այնպես որ, զարմանալի չէ, որ ամենամեծ առաջընթացն այս երկրների հարաբերությունների մեջ արձանագրվել է ռազմական և ռազմավարական ոլորտներում: Թուրքիան իսրայելական զինամթերք և էլեկտրոնիկա է գնում, միասին զինավարժություններ են անցկացնում, համագործակցում են ահաբեկչության դեմ պայքարում և հետախուզության ոլորտում, փոխադարձ զինվորական այցելություններ են կատարվում: Այս ամենը հիմնված է այն նկատառումների վրա, որ ճիշտ չէր լինի Թուրքիայի կողմից, որը շրջապատված է թշնամական, ավտորիտար, անկանխատեսելի և հակաարևմտյան ռեժիմներով, չհամագործակցել Մերձավոր Արևելքում միակ ժողովրդավարական, կայուն, ուժեղ և արևմտամետ տերության հետ:

Անշուշտ, հարցի հիմքում ընկած է բարոյականությունն ընդդեմ քաղաքականության երկընտրանքը: Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունները հիմնված են երկկողմ շահերի վրա: Հարցն այն է, թե սխալվել է, արդյոք, Իսրայելը Հայկական հարցի վերաբերյալ Թուրքիայի հետ հարաբերությունների ավելի վաղ փուլերում: 1970-80-ականներին Իսրայելի կառավարության հիմնական բացատրությունը, թե ինչու է զիջում թուրքական ճնշումներին, այն էր, որ Թուրքիան միակ իսլամական երկիրն է, որը ցանկանում է այդ հարաբերությունները պահպանել: Ավելի կարևոր (և ավելի առեղծվածային) էր այն հայ-

տարարությունը, որը կապված էր հրեաների շահերի հետ. ինչպես բացատրեցին իսրայելցի պաշտոնյաները, Հայկական հարցի սատարումը կարող է վտանգել հրեաների կյանքը Թուրքիայում, ինչպես նաև այլ երկրներում (մինչ այդ խոսվում էր Սիրիայում հրեաների փրկության մասին, իսկ մեկ այլ դեպքում՝ հրեաներին Իրանից փրկելու մասին): Որոշ դեպքերում դա համարվում էր «կենսական շահերի» հետ կապված հարց:

Մենք չենք պատրաստվում քննել, թե արդյոք այս հարցերն իսկապես կապված են Իսրայելի և հրեաների «կենսական շահերի հետ»: Ենթադրենք, որ «կենսական շահերի» պատրվակը չի օգտագործվել: Ինչի՞ նման կլինեին թուրք-իսրայելական հարաբերությունները, եթե ցեղասպանության հարցը, ցանկացած ցեղասպանության հարց, երկու անկախ երկրների միջև բանակցությունների առարկա չդառնար, հատկապես երբ այդ երկրներից մեկը Հոլոքոստ ապրածների պետությունն է: Ի՞նչ կլիներ, եթե Իսրայելը բացատրեր Թուրքիային, որ այն, ինչ սովորում են իսրայելցի երեխաները դպրոցներում և ինչ հաղորդվում է իսրայելական հեռուստաալիքներով, դա Իսրայելի ներքին գործն է:

Հայերի թիվը Պաղեստինում կտրուկ աճեց Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ցեղասպանությունից փրկված հայ գաղթականների հաշվին: Բացի Երուսաղեմից, նրանք հաստատվեցին Ջաֆայում, Հայֆայում, Աքքեյում, մի քանի ընտանիք՝ Գալիլեա գյուղում: Այսօր 3000 հոգուց բաղկացած փոքրաթիվ հայկական համայնքը, որոնք բնակվում են Արևելյան Երուսաղեմում և Արևմտյան ափին, քաղաքական մեծ ուժ չունի: Արևելյան Երուսաղեմում հայերն ապրում են տարբեր համայնքներում, և եթե իսրայելցիներն ու պաղեստինցիները քաղաքական համաձայնության չգան, նրանց ապագան անորոշ է: Ո՞վ է վերահսկելու Հայկական թաղամասը: *Realpolitik*-ի տեսանկյունից՝ փոքր հայկական համայնքը, նրա ապրած ողբերգությունն ու անցյալի հիշատակն այնքան էլ մեծ կշիռ չունեն:

Հայկական հարցը հենց սկզբից էլ քաղաքական տեսանկյունից թույլ էր: Հայաստանը բարդ տնտեսական շրջափակման մեջ գտնվող փոքր երկիր է: Սփյուռքում ունի երկու մեծ և ազդեցիկ համայնք՝ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում (ինչպես նաև Ռուսաստանում - *խմբ.*):

Չնայած այլ երկրներում ևս հրեական համայնքը ներգրավված է ճանաչման պայքարում, կուզենայինք հակիրճ նշել ԱՄՆ-ում ծավալվող քննարկումների մասին:

Իսրայելը ներգրավված էր ԱՄՆ-ում ընթացող քննարկումներից մի քանիսում (1989, 2000)՝ ուղղակիորեն սատարելով թուրքական կողմին, իսկ որոշ դեպքերում՝ խնդրելով հրեական կազմակերպություններին հանդես գալ թուրքերի անունից:

Հրեաներն ու իսրայելցի դիվանագետներն աշխատում են թույլ չտալ Հայ-

կական Հոլոքոստի ճանաչումը («հոլոքոստ» բառն էր օգտագործվում, այլ ոչ թե «ցեղասպանություն»-ը). այսպիսին էր հրեական հեղինակավոր «Հաարեց» թերթի առաջին էջի խորագիրը (1989թ. հոկտեմբերի 17): Թուրքերը Վաշինգտոնի «հրեական լոբբիին» և Կոնգրեսում ներկայացված հրեաներին մեղադրեցին քննարկումների ժամանակ հայերին ստարելու մեջ: 1989թ. Թուրքիայի գլխավոր ռաբինը նամակ ուղարկեց ԱՄՆ Սենատի յուրաքանչյուր անդամի, որտեղ ասվում էր, որ այս նոր նախաձեռնությունը վտանգում է իրենց համայնքը:

Ե՛վ Իսրայելում, և՛ ԱՄՆ Սենատում բաց քննարկում տեղի ունեցավ գործին հրեաների և Իսրայելի ներկայացուցիչների ներգրավվածության շուրջ:

Կային մարդիկ, ինչպես նաև հրեական վերնախավի մի մասը, որոնք կողմ էին հրեական կազմակերպությունների և Իսրայելի ներգրավվածությանը գործընթացներին՝ ելնելով պրագմատիկ նկատառումներից: Թուրք-իսրայելական նկատառումների դեմ և՛ Իսրայելում, և՛ ԱՄՆ-ում փաստարկներ էին բերվում բարոյականության տեսանկյունից: Այս ոչ բնական զգացմունքայնությունը հրեական ներգրավվածության վերաբերյալ ավելի խորացավ Իսրայելի և սփյուռքի հարաբերությունների առումով: Ազատական հրեական կազմակերպությունները ԱՄՆ-ում տարակուսանքի մեջ էին: Նրանց մի մասը բացահայտ, իսկ ոմանք՝ գաղտնի քննադատում էին Իսրայելին: Ցույց տալու համար, որ Ամերիկայի հրեական միությունը 1989թ. նոյեմբերին որոշում կայացրեց երկու տարի ժամկետով նշելու հայերի հիշատակի օրը և սինագոգներում ժամանակակից պատմության ողբերգական այս էջերի փաստերն ու դասերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, սփյուռքի հրեաների և հրեական կազմակերպությունների վերաբերմունքն այս ամենին ավելի ընդհանրական է, քան Իսրայելինը, որն ավելի սիոնիստական ուղղվածություն ունի, ավելի պրագմատիկ և պակաս ընդհանրական է: Իհարկե, նրանք ավելի բաց են հայկական ողբերգությունը հասկանալու առումով, քան պետության պաշտոնական տեսակետն է: Մեր կարծիքով՝ իրական աշխարհում *realpolitik-ը* միշտ չէ, որ ավելի ուժեղ է գտնվում *moralpolitik*-ից, չնայած շատ դեպքերում տեղի է ունենում հակառակը: Բարոյական մոտեցումն իր ուժն ունի, եթե անհատները, կուսակցությունները կամ պետությունները հավուր պատշաճի են պայքարում հանուն արդարության (մեր դեպքում՝ ցեղասպանության դեմ և կատարված ցեղասպանությունները ճանաչելու հարցում): Եվ նրանք կարող են հասնել հաջողության: Քաղաքականությունն ու բարոյականությունը միմյանց չեն հակասում, և քաղաքականությունը կարող է ու պետք է բարոյական լինի:

Մեր կարծիքով՝ չեն կարող լինել միայն բարոյական կամ միայն ցինիկ որոշումներ: Եթե բարոյականությունն ու սեփական շահերի հետապնդումը դիտարկենք որպես երևույթներ, որոնք գտնվում են երկու հակառակ բևեռնե-

րում, ապա օպտիմալ որոշումը գտնվում է ինչ-որ տեղ՝ մեջտեղում: Ես անձամբ չեմ կիսում ըստ իս սխալ այն կարծիքը, թե անլուծելի հակասություն կա քաղաքական շահերի և բարոյական դիրքի միջև:

Ամփոփում

1990-ականներից Թուրքիայի և Իսրայելի միջև գոյություն ունեցող ամուր դաշինքը 2009-ին ճգնաժամի մեջ հայտնվեց: Թուրքիան բարձրաձայն դեմ արտահայտվեց Իսրայելի՝ Գազայում 2008-ի դեկտեմբեր-2009 հունվար ամիսներին կատարած գործողություններին: 2009թ. հոկտեմբերին հարաբերությունները խիստ սրվեցին, ճգնաժամը դարձավ բաց և հրապարակային:

Միևնույն ժամանակ, Թուրքիան Հայաստանի հետ պատմական համաձայնագիր ստորագրեց: Երկու կողմերը դիվանագիտական հարաբերությունները վերահաստատելու և սահմանները բացելու որոշում ընդունեցին: Հայոց ցեղասպանության մասին այնտեղ նշված չէր:

Իսրայելում Թուրքիայի՝ Իսրայելի նկատմամբ թշնամությունից վրդովված շրջանակներն առաջարկեցին, ի պատասխան, ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որպեսզի Թուրքիան վճարի Իսրայելի հանդեպ թշնամական վերաբերմունքի համար՝ Հայոց ցեղասպանությունը որպես հատուցման զենք օգտագործելով: Նման հաշվարկները, բարոյական նկատառումների իսպառ բացակայության պարագայում, կարող են դառնալ Ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարի էությունը, իսկ արարքի մասին հիշողությունը կարող է ջնջվել:

Նոյեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Harut Sassounian,* "Jewish Lobby Pledges All-Out Support for Turkey and Azerbaijan in Congress – Commentary," *California Courier On-Line*, August 5, 1999.
2. *Protocols of the Knesset*, April 27, 1994.
3. *Dadrian,* 1997, p. XIX, quoting *United Press International* and *Associated Press.*
4. *Lilly Galili,* "A Holocaust by Any Other Name," *Ha'aretz,* April 25, 2000.
5. *Selcuk Gultasli,* "Israeli Undersecretary Liel: We Are Disappointed in Turkey," *Turkish Daily News*, October 26, 2000. Dr. Alon Liel was nominated Foreign Ministry Undersecretary a short time before the interview, by the Foreign Minister Shlomo Ben Ami. Later he became the General Director of the office, until March 2001 - the beginning of the Sharon government.
6. "Turkey Punishes France," *BBC News*, January 23, 2001.

7. *Aluf Been,* "Turkey Hints That Israel May win $2 B Deal to Upgrade Turks," *Ha'aretz*, January 21, 2001; "Israel Company to Complete M-60 Tank Project," *Turkish Daily News*, January 26, 2001; Metehan Demir, "Mofaz to Visit Turkey," *The Jerusalem Post*, February 4, 2001.
8. "Peres: Armenians Allegations Are Meaningless," Turkish Daily News, April 10, 2001.
9. *Israel W. Charny,* A public letter to Shimon Peres, April 12, 2001 (it was reported in various press outlets, including an April 18, 2001 article by Robert Fisk in *The London Independent* and on April 19, 2001 in the *California Courier*); also Yair Auron, "As Tu Peres?" *Maariv* April 16, 2001.
10. *Jonathan Eric Lewis,* An Open Letter to Armenian-Americans, April 18, 2001.
11. "Israel Thinks it is Highly Important to Develop Links with Armenia," *Armenian News Network*, Groong, February 8, 2002.
12. "Declaration by the Armenian Council of America," *Armenian News Network*, Groong, February 21, 2002.
13. *Harut Sassounian,* "Israel's Ambassador should be Expelled from Armenia," *The California Courier*, March 14, 2002.
14. "Armenian Foreign Ministry Regrets Israeli Envoy's Genocide Remarks," *Armenian News Network/Groong*, February 11, 2002; "Diplomatic Incident: The Ambassador was not ready to compare the Armenian Holocaust to the Jewish Holocaust" [Israeli] *Ynet News Agency,* February 18, 2002; Corinna da Fonseca-Wollheli, "A Perplexing Indifference," *Jerusalem Post*, May 3, 2002; "Israel Replies to Armenian Protest Note, saying 1915 massacre was not Genocide," *Armenian News Network/Groong*, February 20, 2002.
15. *Yair Auron,* "It Was Genocide," *Ha'aretz*, March 3, 2002; Israel W. Charney, letter to Minister of Foreign Affairs, Shimon Peres.
16. *Ha'aretz* Editorial, "The need to learn and to remember," (April 27, 2000).

ПОЗИЦИЯ ИЗРАИЛЯ В ВОПРОСЕ ГЕНОЦИДА АРМЯН: ОТРИЦАНИЕ И ПРИЗНАНИЕ

Яир Арон

Резюме

В статье представлена позиция Израиля в вопросе Геноцида армян, что важно в том плане, что это – государство еврейского народа, ставшего жертвой Холокоста. Для армян, а также для турок и других важна позиция еврейского народа и, в частности, официального Израиля в вопросе Геноцида армян, поскольку израильское государство основал народ, ставший жертвой Холокоста. Представлены существующие в Израиле противоречивые подходы и их причины.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴՐԻ ՓՈՒԼԵՐԸ

Վահան Մելիքյան[*]

Համաշխարհային պատմության ընթացքում տարբեր ժողովուրդներ դրսևորել են ինքնակազմակերպման յուրահատուկ ձևեր ու եղանակներ: Ինքնիշխան հասարակության, անկախ պետականության ձևավորման կամ վերականգնման ճանապարհին միշտ չէ, որ ազատագրական պայքարը հանդես է եկել որպես առաջնային գործոն: Հնում գերիշխել են տնտեսական-առևտրային, երբեմն նաև հումքային-ռեսուրսային արժեքային համակարգերը: Հաճախ վճռորոշ դեր են կատարել հասարակության համեմատաբար արդար՝ համայնքային, հետո էլ՝ պոլիսային կառուցվածքները, քաղաքակրթական, հոգևոր-կրոնական արժեքները և այլն: Իսրայել պետության վերաստեղծումը, օրինակ, հնարավոր դարձավ նաև իրեական Հոլոքոստի ճանաչման արդյունքում:

Հայկական քաղաքակրթության և հայ ժողովրդի պատմության էական առանձնահատկությունն այն է, որ հազարամյակների ընթացքում, կապված լինելով ազգի և քաղաքակրթության աշխարհագրական միջավայրի հետ և այդ տարածքում ձևավորելով հզոր պետական կառույցներ, հասարակության ժառանգական պատմական հիշողությունը բարենպաստ իրավիճակում փորձում է վերագտնել կորստի միջուկը:

Դարերի ընթացքում առավելագույնին հասնելու ձգտումը վերածվել է նվազագույնով բավարարվելու գործընթացի, հիմնականում, ազգային-ազատագրական պայքարի ճանապարհով կամ երրորդ ուժի աջակցության միջոցով:

1. 1555 և 1639թթ. տեղի ունեցած երկու բաժանումներից հետո Հայաստանը, վարչական առումով, դարձավ Օսմանյան կայսրությանը և Սեֆյան Պարսկաստանին պատկանող տարածք. այդ ժամանակից սկսած՝ արմատավորվեցին Արևմտյան և Արևելյան Հայաստան հասկացությունները: Հայ իրականության համար այս դարաշրջանը բեկումնային է այն առումով, որ սկսած XIV դարից՝ երեքհարյուրամյա անկումային փուլը հասավ իր եզրակետին՝ կյանքի

[*] Հայ-ռուսական սլավոնական համալսարանի Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

բոլոր բնագավառների և մարդկային ռեսուրսների քայքայման ու դիմազրկման տեսանկյունից: Հազարամյակների ուղին հայ ժողովրդի համար այդ պահին, թերևս, կարող էր ընդհատվել: Պատմական այս ժամանակաշրջանից է սկսվում այն անօգնական վիճակի խորացումը, ինչն օգտագործվեց հատկապես Օսմանյան կայսրության կողմից. իրականացվեց նախացեղասպանություն: Նախ՝ դեպի Արևմտյան Հայաստան կազմակերպվեց քրդական զանգվածային ներգաղթ՝ կայսրության ժողովրդագրական պատկերը հօգուտ մահմեդականների արմատապես փոխելու նպատակով, ապա և դևշիրմեի (մանկահավաք) ու բազմաբնույթ հակահայ գործողությունների միջոցով Արևմտյան Հայաստանն սկսեց հայաթափվել: Որպես ազգային կառույց, հայկական էին մնացել միայն չորս կաթողիկոսությունները, որոնք նույնպես օգտագործվում էին հայությանը պառակտելու և եկեղեցի-ժողովուրդ միասնությունը թուլացնելու համար:

Ինչ վերաբերում է Շահ Աբասի կազմակերպած արտագաղթին, ապա հարկ է նշել, որ նրա իսկ հովանավորությամբ ստեղծված Նոր Ջուղայի հայկական համայնքը տնտեսական հզորության հենքի վրա դարձավ հայության նոր վերելքի և ինքնակազմակերպման խորհրդանիշ:

2. XVI-XVII դարերում սկիզբ առած հայ ազատագրական գաղափարախոսությունը, անցնելով եվրոպական ու ռուսական տնական քաղաքական կողմնորոշումների փուլերը, Ռուսաստանի առաջավորասիական արտաքին քաղաքականության արդյունքում ի վերջո հանգեցրեց Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Պարսկաստանի տիրապետությունից արևելահայ հատվածի ազատագրումը, ի տարբերություն արևմտահայության, հայ ժողովրդի այս հատվածի համար ձևավորեց հարաբերական զարգացման պայմաններ և կայուն կարգավիճակ:

3. XIXդ. 50-60-ական թթ. հայ իրականության երկու հատվածներում ու գաղթօջախներում սոցիալ-քաղաքական արմատական տեղաշարժերը սկզբնավորեցին հայ հասարակական-քաղաքական դաշտը: Հանդես եկան հասարակական-քաղաքական երեք հոսանքներ, որոնք փորձեցին ի մի բերել մեր ժողովրդի բազմադարյան քաղաքական փորձը և ինքնակազմակերպման ուղիներ նախանշեցին: Դա, նախ և առաջ, պետականության բացակայության պայմաններում դրսևորվում էր հայության ազգային ինքնության պահպանման հարցադրմամբ, ապա և հավաքականության ու համազգային նպատակի շուրջ համախմբվելու արտահայտմամբ:

Արևմտահայերի սահմանադրական շարժումը հայության ներքին կյանքը կազմակերպելու համար առաջադրեց թուրքական պետության ներսում հայկական օրենսդիր և գործադիր մարմինների՝ Ազգային ժողովի ու Ազգային կենտրոնական վարչության ստեղծման գաղափարը: Ինքնակազմակերպման սկզբունք

հոչակվեցին հայկական առևտրական կապիտալի և տնտեսության զարգացումը, ինչպես նաև գաղթօջախների տնտեսական համագործակցությունը:

4. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում բարձրացվեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը, որն ավարտվեց Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության առարկայի, առաջացմամբ: Կ.Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հրաժարվեց *միայն* թուրքական կառավարության միջոցով բարեփոխումների հասնելու արմատացած գաղափարից և 1877թ. հոկտեմբերի 21-ի Ազգային ժողովի նիստում որոշեց Հայկական հարցի լուծումը վստահել Ռուսաստանին, ինչն էլ և Հայկական հարցի միջազգայնացման մեկնարկ հանդիսացավ:

Հայկական պահանջներում շեշտվում էր «Արարատյան մարզ» ձևակերպումը և դրա կցումը Մեծ Հայքին (Արևմտյան Հայաստան), ինչը 1919թ. Փարիզում դարձավ երկու հայկական պատվիրակությունների բանակցությունների խնդրո առարկան:

5. Բեռլինի վեհաժողովին հայկական պատվիրակությունները ներկայացրել էին երկու փաստաթուղթ. ա) Ն.Վարժապետյանի «Ծրագիրը» պահանջում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն՝ Էրզրումի, Վանի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթներում՝ ներառյալ Ռիզե նավահանգիստը, բ) Պողոս Նուբար փաշայի ծրագիրը մերժում էր ինքնավարությունը և բավարարվում էր բարենորոգումների պահանջով: Նշվում էր Երևանի նահանգի օրինակը, որտեղ Ռուսաստանին միանալուց 30 տարի անց Արևելյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակը կրկնապատկվել էր: Նա ընդունում էր հայ ժողովրդի երկու հատվածների միջև պատմականորեն առաջացած տարբերությունները, շեշտում էր, որ բարենորոգումների խնդիրը կապվում է միայն արևմտահայերի հետ և Բ. Դռանը խորհուրդ էր տալիս հետևել Ռուսաստանի օրինակին ու արևմտահայերի համար բարվոք պայմաններ ստեղծել: Ի դեպ, Մ.Խրիմյանը հակված էր ընդունելու Պ.Նուբարի ծրագիրը:

6. Բալկանյան պատերազմները վերաբացեցին հայկական բարենորոգումների խնդիրը: 1912թ. հոկտեմբերին Թիֆլիսում գումարված Ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումարն ընտրեց Ազգային բյուրո: Կ.Պոլսում նույնպես ստեղծվեց նման մարմին՝ Ապահովության հանձնաժողով: Այս երկու մարմինները տարանջատված, սակայն համատեղ զբաղվելու էին Հայկական հարցով: Եվրոպայում գործող հայկական ազգային պատվիրակության նախագահ նշանակվեց Պողոս Նուբարը: Վերջինս մտադիր էր Ռուսաստանի միջամտությունը չշահարկելու համատեքստում պատվիրակությունը ձևավորել միայն արևմտահայերից:

7. 1915թ. մարտի 1-2-ը Ս. Էջմիածնում հրավիրվեց «գաղթականական» համագումար, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանի փախստականների

օգնության համար միավորել բոլոր հայկական կազմակերպություններն ու բարեգործական ընկերությունները: Համագումարը Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվավոր նախագահությամբ ընդունեց գործողությունների համակարգված ծրագիր: Որոշվեց դիմել մեծ տերությունների միջնորդությանը՝ պատերազմի հասցրած վնասի մասին միջազգային օրենքը հայ գաղթականության հանդեպ նույնպես կիրառելու նպատակով: Դաշնակից երկրների ընդունած հռչակագրի համաձայն՝ առաջարկվեց տեղեկություններ հավաքել թուրքական բարբարոսությունների մասին, բացահայտել մեղսակիցներին: Վերջում համագումարը որոշեց կրկին համաժողովի հավաքվել Երևանում կամ Թիֆլիսում:

8. 1916թ. մայիսի 10-13-ը կայացավ Պետրոգրադի Հայկական համագումարը: Թերևս, դա հայկական առաջին համաժողովն էր, որը հնարավորություն ունեցավ բացահայտել հայկական խնդիրները և բարձրաձայնել դրանց մասին: Համագումարն ի հայտ բերեց փորձի պակասը, նախապատրաստական կազմակերպության անկատարությունը, նախագահության անօգնականությունը, մի խոսքով, այն ամենը, ինչով անխուսափելիորեն ուղեկցվում են հասարակական մեծ գործի առաջին քայլերը: Միաժամանակ, համագումարը բացահայտեց մեկ այլ՝ առավել կարևոր հանգամանք. հայկական կազմակերպությունները ներկայացնող 150 պատգամավորների խորաթափանց վերաբերմունքը քննարկվող հարցերի նկատմամբ: Առաջին կարևոր արդյունքը եղավ այն, որ ռուս հասարակայնությունը տեղեկացավ հայ ժողովրդի մեծագույն տառապանքների մասին, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, ուր ապաստան էր գտել արևմտահայ գաղթականության մի զգալի հատվածը: Այնուհետև քայլեր ձեռնարկվեցին հայանպաստ գործի միավորման համար, որոշվեց ձևավորել կենտրոնական համակարգող մարմին:

Հայկական համաժողովի ամենակարևոր նվաճումն այն էր, որ դրա գումարման ընթացքում հայկական հասարակությանը բնորոշ կուսակցական տարաձայնություններ գրեթե չառաջացան: Բոլորը լծված էին մեկ ընդհանուր գործի և գիտակցում էին, որ տվյալ պարագայում կուսակցական հակամարտությունը միայն խոչընդոտ կարող է դառնալ և ոչ էական տարաձայնությունները կարող են անդառնալիորեն վարկաբեկել բոլորի համար թանկ նվաճումը: Մեծանուն հայագետ Ալեքսեյ Ջիվիլեգովի կարծիքով՝ «համատեղ աշխատանքը կայացավ. հարկավոր է ավելի վճռական քայլ՝ դեպի այդ ուղին: Այդ է պահանջում Հայաստանի շահը» [1]:

Պետրոգրադի Հայկական առաջին համագումարը կարևորվում է կազմակերպչական հարցադրումներով: Համագումարում որոշվեց ընտրել 9 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ Հայկական համագումարների կենտրոնական կոմիտե ստեղծելու համար: Վերջինս ինքնալրացման (կոոպտացիայի)

սկզբունքով, ձայնի իրավունքով պետք է հրավիրեր արտասահմանյան ազգային կազմակերպությունների ներկայացուցիչների: Հայկական համագումարների կենտրոնական կոմիտեն ղեկավարվելու էր իր կանոնադրությամբ: Նաև «կոչ էր արվում համայն հայությանը, գիտակցելով բոպեի լրջությունը, միանալ ընդհանուր գործին և ազգային դատի լուծման խնդրին» [2]:

9. 1916թ. դեկտեմբերին Բաքվում հրապարակվում է «Հայերի ինքնօգնության կազմակերպումը» փաստաթուղթը, որն ամփոփելով համաշխարհային պատերազմի երկու տարիների արդյունքները և կանխատեսելով Ռուսաստանում հասունացող հեղափոխությունը՝ առաջադրում էր խնդիրներ և ուղիներ՝ դարակազմիկ մեծ ցնցումներին պատրաստ լինելու ուղղությամբ:

10. 1917 և 1919թթ. Երևանում հրավիրվեցին Արևմտահայ երկու համագումարները: Երկու խորհրդաժողովներն էլ Առաջին աշխարհամարտի, Մեծ եղեռնի, Հայկական հարցի նոր դրսևորումների օրինաչափ հետևանքն էին: Առաջին համագումարը հրավիրվեց Փետրվարյան հեղափոխությունից, իսկ երկրորդը՝ Հայաստանի Հանրապետության առաջացումից հետո:

1916թ. ապրիլին հայկական ազգային-դեմոկրատական ավանդական կուսակցությունների գործիչները, հետևելով Գևորգ Ե կաթողիկոսի և Պողոս Նուբարի միավորիչ նախաձեռնությանը, որոշեցին հրավիրել «Արևմտահայ մտավորականության և այլ հասարակական գործիչների համագումար»: Որպես ելակետային սկզբունք՝ ընդունվեց հայկական բոլոր կուսակցությունների հավասար մասնակցությունը: Որոշվեց Հայկական հարցը՝ «արտաքին գործը», հանձնել Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության, իսկ «ներքին գործը»՝ Անդրկովկասի ազգային-տարածքային խնդիրները, արևելահայության և կովկասահայության ներկայացուցչության իրավասությանը:

Արևմտահայերի առաջին համագումարը կայացավ Երևանում, 1917թ. մայիսի 2-11-ը: Այն ընտրեց Արևմտահայ Ազգային խորհուրդ և Ազգային ժողով: Համագումարի կենտրոնական որոշումներից մեկով Հայկական հարցի լուծումը վստահվում էր Եվրոպայում գործող հայկական պատվիրակությանը, որի կազմը պետք է համալրվեր արևմտահայերով: Առաջին համագումարում գլխավոր հակասությունների պատճառ դարձավ այն հարցը, թե արդյոք համագումարն իրավասո՞ւ է իրեն համարելու Արևմտյան Հայաստանի բոլոր հայերի կամքի և նպատակների արտահայտիչը:

Համագումարը բացահայտեց արևմտահայ և արևելահայ խորացող առճակատումը, ինչը դրսևորվեց Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումով և այնտեղ ՀՅԴ գերակշռությամբ: Պարզ է, որ հայ իրականության մեջ, մասնավորապես ցարիզմի անկումից հետո, դաշնակցության հեղինակությունն ու ազդեցությունն օրինաչափ էր: Սակայն մյուս կողմից, վերջինիս հզորությունն առարկայորեն մեկուսացնում էր մյուս ազգային կազմակերպություններին՝

նրանց վերածելով անհաշտ հակառակորդների: Արտակ Դարբինյանն իր անհանգստությունն էր հայտնում Արամ Մանուկյանին՝ Անդրանիկի այն համոզման առթիվ, թե «կովկասահայ դաշնակցականները պիտի հակառակին Տաճկահայերու որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկավարողի դերին մեջ չգտնուին» [3, էջ 208]: Ուշագրավ է, որ Արամը նույնպես հակված էր այն մտքին, թե կովկասահայ դաշնակցականները չպետք է միջամտեն փախստականների գործերին, ավելին՝ նա գտնում էր, որ արևմտահայ դաշնակցականները նույնպես ուզում են անկախ մնալ կովկասահայ գործընկերներից:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Արևմտահայ ազգային խորհրդի իրավասությունները հիմնականում փոխանցվեցին Ա.Մանուկյանի նախաձեռնությամբ Երևանում ստեղծված Ազգային և Ապահովության խորհուրդներին, որոնք կազմակերպեցին և գլխավորեցին հայկական ինքնապաշտպանությունը, 1918թ. Մայիսյան հերոսամարտերը, այսպիսով նաև՝ Հայաստանի Հանրապետության առաջացման գործընթացը:

11. Արևմտահայերի երկրորդ համագումարը նախորդից առանձնանում էր նախ և առաջ նրանով, որ արտահայտում էր անկախություն հռչակած հայության մի հատվածի կամքը: Նոր համագումարը կազմկոմիտեի արևմտահայ գործիչների կողմից դիտվում էր որպես Հայաստանի Հանրապետության արևմտահայերի ներկայացուցչական, քաղաքական մարմին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ կազմկոմիտեն պատվիրակների ընտրությունն իրականացրեց ոչ կուսակցական, երկաստիճան սկզբունքով: 300-500 արևմտահայեր տեղերում պետք է ընտրեին շրջանային պատգամավորներ:

Արևմտահայերի երկրորդ համագումարը կայացավ 1919թ. փետրվարի 6-13-ը՝ Երևանում: Արևմտահայության վերաբերյալ մի շարք կենսական որոշումներին զուգահեռ, համագումարի կենտրոնական որոշումը վերաբերում էր «Ազատ և միացյալ Հայաստանի» անկախության հռչակմանը: «Քաղաքական բանաձևում» համագումարը վստահություն էր հայտնում «Ազատ և միացյալ Հայաստանի» առաջին վարչակազմին՝ Պողոս Նուբարի կաբինետին, հայտարարում էր միացյալ քաղաքական և պետական կամքի ու նպատակների միասնությունը, նորընտիր «Գործադիր մարմնին» պարտավորեցնում էր հարաբերությունների մեջ մտնելու ՀՀ կառավարության հետ: Համագումարն ընտրեց նաև «Արարատյան հանրապետությունում բնակվող արևմտահայերի գործադիր մարմին»: Գործադիր մարմինը պետք է ձևավորվեր պետական սկզբունքներով, նախագահը և անդամները հանդես էին գալու որպես նախարարներ:

1919թ. փետրվարի 25-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց այդ փաստաթղթին: ՀՀ Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց, ըստ որի Հայաստանի խորհրդի կազմը համալրվում էր արևմտահայ 12 ներկայացուցիչներով: 1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցն առաջին ան-

գամ հանդես եկավ համահայկական քաղաքական ծրագրի տեսքով:

12. Խաղաղարար վեհաժողովի նախաշեմին 1919թ. Փարիզում հրավիրված հայկական Ազգային համագումարը նպատակ ուներ ի մի բերելու արևմտահայության և հայկական գաղթօջախների դիրքորոշումը միասնական ազգային պահանջների շուրջ և ընտրելու մի մարմին, որը կստանձներ դրա իրականացումը:

1918թ. հոկտեմբերի 15-ին և 1919թ. հունվարի 1-ին Պ.Նուբարը հանդես եկավ նամակ-շրջաբերականներով: Համագումարին մասնակցելու էին հրավիրվել 8 արևմտահայ, 8 արևելահայ (կովկասահայ) ու ևս 22 ներկայացուցիչ՝ 10 երկրներից: Նման ներկայացուցչության միջոցով Պ.Նուբարը ձգտում էր հրավիրել համահայկական համագումար, ստեղծել ավելի հեղինակավոր պատվիրակություն, կազմել հայկական պահանջների միասնական ծրագիր և ապա Փարիզում ձևավորել համահայկական կառավարություն:

Համագումարը բացվեց 1919թ. փետրվարի 24-ին, ունեցավ 43 նիստ և փակվեց ապրիլի 22-ին: Մասնակից 38 պատգամավորների թվում էին Լևոն Շանթը, Միքայել Վարանդյանը, Գաբրիել Նորատունկյանը, Վահան Թեքեյանը, Արմեն Գարոն, Միհրան Տամատյանը, Վահան Փափազյանը, Հովհաննես Խան Մասեհյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ:

Ավ.Ահարոնյանը և Հ.Օհանջանյանը հրաժարվեցին ձայնի իրավունքով մասնակցությունից՝ նշելով, որ լիազորված են մասնակցելու միայն Հաշտության վեհաժողովին: Լիազորված կարգավիճակով արևելահայերի ներկայացուցիչների բացակայությունը շատերին հնարավորություն չէր տալիս համագումարը համազգային կոչել: Այն հռչակվեց Ազգային և պետք է ներկայացներ արևմտահայությունն ու գաղթօջախները:

1919թ. ապրիլի 24-ին Ավ.Ահարոնյանը ՀՀ արտաքին գործերի նախարար Ս.Տիգրանյանին ուղղած նամակում հանրապետության հանդեպ արևմտահայ գործիչների, մասնավորապես Պ.Նուբարի վերաբերմունքը որակում էր որպես «վախի» արտահայտություն: Այդ «վախը» նախ բացատրվում էր նրանով, որ «Թուրքիոյ հայութիւնը կուլ կերթայ ռուսահայերին, քանի որ վերջիններս աւելի ուժեղ են թւով, տնտեսապէս եւ իմացականութեամբ», այնուհետև այն հանգամանքով, որ ՀՅԴ զուտ ընկերավարական է և իշխելու միտված, ապա և գլխավորը՝ Խորհրդային Ռուսաստանն ի վերջո հզորանալու և տիրանալու է Կովկասյան Հայաստանին, ուստիև ճիշտ չէ Արևմտյան Հայաստանը նրան միացնելը: Նախ՝ պետք է կազմակերպել Արևմտյան Հայաստանի պետությունը, որին և կմիանա կովկասահայ հանրապետությունը [4]:

Ռամկավարները չէին թերագնահատում նաև այն իրողությունը, որը բխում էր 1920թ. ապրիլին ԱՄՆ նախագահ Վ.Վիլսոնի հայտարարությունից: Վերջինս, ողջունելով Հայաստանի անկախությունը, նշում էր, որ ԱՄՆ կառա-

վարությունը վերջնական սահմանագծումը պատրաստվում է կատարել Ռուսաստանի հավանությամբ և աշխատակցությամբ: Այս մոտեցմամբ է, հիմնականում, բացատրվում «Միացյալ ազատ Հայաստանի» հռչակման նկատմամբ նրանց թերահավատությունը և խորհրդարանի կազմից դուրս գալը:

Արդյունքում՝ համագումարն Ազգային պատվիրակությանը հանձնարարեց Հայաստանի Հանրապետության կառավարության հետ լուծել Միացյալ կառավարության և խորհրդարան ձևավորելու հարցը: Վեհաժողովում Ազգային պատվիրակությունը ներկայացնելու էր արևմտահայերին, ՀՀ պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, որոշվեց դրանք միավորել Ամբողջական Հայաստանի պատվիրակության մեջ:

1919թ. հոկտեմբերի կեսերին Ամբողջական Հայաստանի վարչակազմի խնդրի լուծման համար Երևան ժամանեց Ազգային պատվիրակության առաքելությունը՝ նախագահ Վ.Թեքեյանի գլխավորությամբ: Այս հարցը զուգահեռաբար քննարկում էր նաև ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը: Պատվիրակությունը (Ն.Ստեփանյան՝ անկուսակցական, Ս.Հարությունյան՝ ՀԺԿ) մոտ մեկ ամիս բանակցեց ՀՀ կառավարության հետ և զիջումներ արեց Պ.Նուբարի հարցում՝ նրան թողնելով արտաքին գործերի նախարարի պաշտոնում: Սակայն այդ ամենն ապարդյուն էր: Ազգային պատվիրակության առաջարկները չընդունվեցին կառավարության ու դաշնակցության համագումարի կողմից:

1920թ. մարտի 25-ին կոալիցիոն կառավարություն ձևավորելու, համաձայնության եզրեր գտնելու փորձ արեց նաև Սամսոն Հարությունյանը՝ այս անգամ ներկայացնելով ոչ թե Փարիզի, այլ Թիֆլիսի կարծիքը: Սակայն պարզ դարձավ, որ ՀՅԴ-ն փոխել է վերաբերմունքը կոալիցիայի հանդեպ: Հակասություն էր առաջացել նաև Հայաստանի մանդատի հարցի շուրջ: Դաշնակցությունը դեմ էր այդ գաղափարին. «Ինչպէս ստեղծինք այսօրուան անկախ Հայաստանը, այնպէս ալ պիտի ստեղծենք միացեալ և անկախ Հայաստանը եւ պիտի պահպանենք» [3, էջ 253]:

Առջևում Սևրն էր և մեծ հիասթափությունը:

Մեր օրերում, Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման ու Արցախի ազատագրման պատմական իրողության համատեքստում հայկական պահանջատիրությունը կրկին բախվում է հայության ինքնակազմակերպման խնդրին, որը նոր, բազմաբնույթ լուծումներ է պահանջում: Այդ շարքում մեկնարկային դեր կարող է խաղալ Արևմտահայերի երրորդ համագումարի հրավիրումը և նրա միջոցով հայկական կարող ու լայնախոհ ուժերին համազգային գաղափարի շուրջ միավորելու հեռանկարը: Համաշխարհային հայությանը ուծացումից փրկելու, ինչու ոչ՝ նրան վերելքի նոր հանգրվանի հասցնելու գործընթացը նաև կարող է հայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխիք հանդիսանալ:

Ապրիլ, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Армянский вестник (Москва), 22 мая 1916г. Հղվում է ըստ. Дж. Киракосян. Алексей Дживилегов и его историко-публицистическое наследие. Ереван, 2007, с. 157-159.
2. Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 122-123:
3. *Արտակ Դաբբինյան,* Հայ ազատագրական շարժման օրերէն յուշեր 1890էն 1940, Երևան, 2003:
4. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 18-19:

АРМЯНСКИЙ ВОПРОС И ЗАДАЧИ САМООРГАНИЗАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

Ваан Меликян

Резюме

В контексте исторических реалий восстановления независимости Республики Армения и освобождения Арцаха Армянский вопрос вновь сталкивается с проблемой самоорганизации Армянства, требующей новых, разнотипных решений. Среди них стартовую роль может сыграть созыв Третьего съезда западных армян и перспектива консолидации дееспособных и широко мыслящих армянских сил вокруг общенациональной идеи. Процесс спасения мирового Армянства от ассимиляции и, почему бы и нет, обеспечения его нового подъема может стать гарантом безопасности Армянства и Республики Армения.

ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գևորգ Պողոսյան[*]

Հայոց սփյուռքը Մեծ եղեռնից հետո իր գրեթե հարյուրամյա պատմության մեջ զարգացման մի քանի փուլեր է անցել: Սփյուռքի պատմությունը հատվածաբար ուսումնասիրված է բավականին մանրամասն: Սակայն կարծում ենք, որ այն ընդհանրացման և ամբողջական իմաստավորման կարիք ունի: Այստեղ մենք կփորձենք դիտարկել միայն մի քանի հայեցակարգային կետեր:

Հայ սփյուռքի առաջին սերնդի հիմնական խնդիրն էր ֆիզիկապես վերապրել ու ամրապնդվել նոր բնակատեղերում:

Թեև հայկական գաղթօջախները գոյություն ունեին շատ վաղուց, երբ Հայաստանը կորցրեց իր պետականությունը, սակայն դրանք ընդլայնվեցին Հայոց ցեղասպանությունից հետո: Մեկուկես միլիոն հայեր ոչնչացվեցին, մյուսներին հաջողվեց փախչել և բնակություն հաստատել Արևելյան Եվրոպայի, բալկանյան և միջինարևելյան տարբեր երկրներում: Բազմահազար հայեր հիմնավորվեցին Արևմտյան Եվրոպայում, ինչպես նաև Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներում: Զգալի թվով հայկական համայնքներ գոյություն ունեն նաև Ռուսաստանում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի նախկին խորհրդային հանրապետություններում: Հայկական համայնքներ կարելի է գտնել նաև Հնդկաստանում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Աֆրիկայում (Եթովպիայում, Սուդանում և Հարավային Աֆրիկայում), ինչպես նաև ավելի հեռավոր արևելքում, օրինակ՝ Սինգապուրում, Մյանմարում, Հոնկոնգում:

Տարբեր փորձագիտական գնահատականների համաձայն՝ հայերի թիվն աշխարհում այսօր հասնում է 8 միլիոնի:

Այսօր հայերի մեծ համայնքներ կան Ռուսաստանում, որը, ըստ համայնքների մեծության, առաջին տեղում է, այնուհետև Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Իրանում (թեև 1970-ականներից սկսած՝ համայնքի հայերի թիվը նվազել է), Լիբանանում, Վրաստանում, Սիրիայում, Արգենտինայում, Կանադայում և Ուկրաինայում:

---

[*] ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Երկիրը	Հայերի թիվը
Հայաստան	3,215,800
Ռուսաստան	1,130,491 (2002թ. տվյալներ)
ԱՄՆ	1,000,000
Ֆրանսիա	500,000
Իրան	400,000
Վրաստան	248,900 (2004թ. տվյալներ)
Սիրիա	190,000
Լիբանան	140,000
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	138,000
Արգենտինա	130,000
Ուկրաինա	99,894 (2001թ. տվյալներ)
Լեհաստան	92,000
Թուրքիա	40,000 - 70,000 (համշենահայերը ներառված չեն)
Հորդանան	70,000
Ուզբեկստան	70,000
Գերմանիա	42,000 - 60,000
Կանադա	40,505 (2001թ. տվյալներ) (մի քանիսը նշում են 60,000)
Հունաստան	35,000 - 55,000)
Բրազիլիա	40,000 - 50,000)
Ավստրալիա	45,000
Աբխազիա	44,869 (2003թ. տվյալներ)
Իսպանիա	42,000
Թուրքմենստան	30,000
Բուլղարիա	30,000
Բելառուս	25,000
Ղազախստան	25,000
Իրաք	20,000
Ուրուգվայ	19,000
Անգլիա	18,001
Հունգարիա	15,000
Բելգիա	10,000
Չեխիա	10,000
Իսրայել	9,800
Եգիպտոս	8,200
Մոլդովա	7,000

Երկիրը	Հայերի թիվը
Նիդեռլանդներ	6,000
Տաջիկստան	6,000
Լատվիա	5,000
Շվեյցարիա	5,000
Շվեդիա	5,000
Քուվեյթ	5,000
Ղրղըզստան	3,285
Միացյալ Արաբական Էմիրություններ	3,000
Դանիա	3,000
Ավստրիա	3,000
Նիկարագուա	2,907
Էկվադոր	2,800
Կիպրոս	2,740 (1987թ. տվյալներ)
Վենեսուելա	2,500
Լիտվա	2,500
Իտալիա	2,500
Էստոնիա	2,000
Ռումինիա	1,780
Նորվեգիա	1,000
Ֆինլանդիա	1,000
Չիլի	1,000
Սուդան	1,000
Թաիլանդ	1,000
Հոնդուրաս	900
Նոր Զելանդիա	600
Մեքսիկա	560 – 10,000
Ալբանիա	500
Հնդկաստան	500
Կոլումբիա	250–300
Մոնակո	200
Հարավաֆրիկյան Հանրապետություն	200
Կատար	150
Կուբա	100
Եթովպիա	100
Դոմինիկյան Հանրապետություն	75

Երկիրը	Հայերի թիվը
Իռլանդիա	50
Կոստա Ռիկա	40
Սինգապուր	35
Պերու	35
Զիմբաբվե	28
Ինդոնեզիա	20
Պակիստան	20–200
Ճապոնիա	20-100
Գվատեմալա	20–50

Իրաքի հայ համայնքը նվազել է 2003թ. Միացյալ Նահանգների՝ Իրաք ներխուժելուց հետո:

Սակայն սրանք շատ ընդհանուր տվյալներ են: Հասկանալի է, որ սփյուռքահայության թվաքանակը, նրա ներուժը և աշխարհի բազմաթիվ երկրներում զբաղեցրած դիրքն ու դերն անհրաժեշտ է լրջորեն ու գիտական մեթոդներով ուսումնասիրել: Իրական պատկերն ստանալու համար անհրաժեշտ է անցկացնել մարդահամարի կարգի ուսումնասիրություն բոլոր այն երկրներում, ուր հայության թիվը հասնում է զգալի չափերի, օրինակ՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Վրաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Իրանում և այլուր: Սա ամենևին էլ դյուրին գործ չէ: Այն սոսկ ցանկությունից իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է համախմբել սփյուռքի և Հայաստանի Հանրապետության ջանքերը:

Նման համահայկական մարդահամարի անցկացումը կարելի է դիտել որպես համազգային առաջին ծրագիր: Եվ այսպիսի համազգային ծրագրերը կարող են մի քանիսը լինել: Այսօր հայության միայն մեկ երրորդն է բնակվում Հայաստանում:

Երկրորդ սերունդը հիմնադրեց սփյուռքում գործող բազմաթիվ կառույցներ: Ժամանակի ընթացքում ցեղասպանությունից փրկված հայերը սփյուռքում հիմնավորվեցին՝ կառուցելով եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային, համայնքային կենտրոններ և այլն: Այնտեղ, որտեղ հայերի զգալի քանակ կար, սկսեցին գործել զանազան քաղաքական կուսակցություններ և բարեգործական միություններ, ինչպիսիք են՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Ռամկավար Ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):

Հայերը, ինչպես հայտնի է, ունեն երկու կաթողիկոս: Նրանցից մեկին, որի նստավայրը գտնվում էր Էջմիածնում, սատարում էին խորհրդային իշխանությունները, հնչակները և ռամկավարները: Մյուս կաթողիկոսարանին, որը

գտնվում էր Անթիլիասում (Լիբանան), աջակցում էին դաշնակցականները: Եգիպտոսում և Սիրիայում՝ պան-արաբիզմի, Իրանում՝ իսլամիզմի և Լիբանանում քաղաքացիական պատերազմի հետևանքով տասնյակ հազարավոր հայեր Միջին Արևելքից գաղթեցին ու հիմնավորվեցին ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում և այլ վայրերում: Այնտեղ նրանք հիմնադրեցին լոբբիստական կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետությանն աջակցելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործն ընդլայնելու նպատակով: Ստեղծվեցին նաև քաղաքական կազմակերպություններ, որոնցից են Իրավունքի և դեմոկրատիայի եվրոպական հայկական միությունը, Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն, Հայոց հարցի պաշտպանության կոմիտեն, Հայոց ցեղասպանության ճանաչման արշավը, Կանադայի Հայկական ազգային կոմիտեն, Միջին Արևելքի հայկական ազգային կոմիտեն:

Նոր, երրորդ սերնդի խնդիրները, մեր կարծիքով, կապվում են սփյուռքի անելիքների, տեղի ու նրա պատմական դերի լուրջ ուսումնասիրության հետ: Անհրաժեշտ է սփյուռքում գործող նոր կառույցներ հիմնել. ասել է թե՝ ժամանակակից «think tank» կոչված մտածողական կենտրոններ հիմնադրել, որոնք գիտականորեն կուսումնասիրեն իրավիճակը, հետագա անելիքներն ու զարգացման ծրագրերը:

Հայությունն այսօր աշխարհին ներկայանում է իր երեք հատվածներով՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն և սփյուռքահայություն: Ընդ որում, այս երեք հատվածները ներկայացնում են ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող միջազգային հարաբերությունների կարևորագույն սուբյեկտներ՝ անկախ պետություն, չճանաչված պետություն (կամ տարածք) և միջազգային շարժում (տվյալ դեպքում՝ էթնիկական կամ ազգային շարժում):

Այսօր աշխարհին ավանդական պատկերացումներից շատ է հեռացել: Այն սոսկ անկախ պետությունների ընտանիք չէ միայն, այլ շատ ավելի բազմազան ու բազմադեմ է: Այսօր այն հանդես է գալիս նաև որպես տարաբնույթ կառույցներ՝ միջպետական, վերպետական ու անդրպետական, ինչպես նաև չճանաչված պետական գոյացումներ, ոչ պետական, ոչ պաշտոնական շարժումներ ու միավորումներ: Այսպիսով, հայությունն աշխարհին այսօր ներկայացված է պետական, չճանաչված պետականության ու միջազգային անդրպետական շարժման երեք ձևերով:

Այս հանգամանքը կարելի է օգտագործել որպես մեծ առավելություն, եթե այդ երեք հատվածները գործեն համակարգված ու նպատակաուղղված: Այլ կերպ ասած, եթե նրանք դիտարկվեն որպես ընդհանուր համազգային ծրագրերի իրագործման կատարողներ: Ժամանակակից հայության այս երեք հատվածների փոխհարաբերությունները, նրանց ներդաշնակ ու ազգանպաստ

զարգացումը և դերակատարության ու մասնաբաժինների հայեցակարգային գաղափարախոսության մշակումը կարող են դիտարկվել որպես ևս մեկ համազգային գիտական ծրագիր:

Ավանդաբար սփյուռքահայության գործողություններն ուղղորդվել են Հայ Առաքելական եկեղեցու, Հայ Կաթոլիկ եկեղեցու, Ավետարանչական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների (դաշնակցություն, ռամկավար-ազատական, հնչակյան), մշակութային ու հայրենակցական միությունների և բարեգործական հաստատությունների կողմից: Սակայն վաղուց արդեն ժամանակն է, որպեսզի պատմականորեն կյանքի կոչված այս կառույցները համակարգվեն ու միավորվեն մեկ համազգային ընտրովի մարմնի կողմից, որը կիրականացնի նաև ներկայացուցչական գործառույթներ: Արդեն կայացած սփյուռքահայ կառույցները յուրօրինակ «նախարարությունների» դեր են կատարել սփյուռքի համար, որոնք չունեն և չեն էլ կարող ունենալ *պետության կառուցվածք*:

Եթե համեմատությունը պետության հետ տեղին կլինի, ապա կարելի է ասել, որ սփյուռքի «նախարարությունները» վաղուց արդեն ապացուցել են իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը: Այսօր խոսվում է այն մասին, թե ժամանակն է մտածել սփյուռքի կառույցները համակարգող մարմին՝ Համազգային ժողով կամ Պառլամենտ ստեղծելու մասին, որն իր օրենսդիր որոշումներով կուղղորդի դրանց գործունեությունը: Անկասկած, դրա ժամանակն արդեն վաղուց է հասունացել և նույնիսկ այդ մասին խոսվում է մեծ ուշացումով: Ամենևին հարցականի տակ չդնելով այս կարևոր խնդրի լուծումը՝ հարկ է նկատել, որ սփյուռքը, այնուամենայնիվ, պետության կառուցվածք չունի և չի կարող ունենալ: Սփյուռքին, հատկապես Հայ սփյուռքին, հատուկ է ցանցային համակարգի կառուցվածքը, և այս ուղղությամբ պետք է անպայման մտածել՝ *ցանցային կառույցին համապատասխան* միավորներ հիմնելու համար:

Սփյուռքի ներդրումը ՀՀ-ի տնտեսության մեջ բավականին մեծ է: Այդ են վկայում սփյուռքից ստացվող ուղղակի ներդրումների չափերը. Ռուսաստանից՝ 29%, ԱՄՆ-ից՝ 17%, Իրանից՝ 14% *(www.crrc.am):* Մենք գնահատում ենք սփյուռքի ֆինանսական օգնությունը: Սակայն այժմ ակնհայտ է, որ Հայաստանը ավելի շատ սփյուռքի մտավոր ներուժի կարիքն ունի, քան սոսկ ֆինանսական ներդրումների:

Հայաստանի Հանրապետությունը սփյուռքահայության հետ նախաձեռնել է մի շարք արժեքավոր մեծածավալ միջոցառումներ. Հայաստան-Սփյուռք համաժողովները (1999, 2002, 2006թթ.), համահայկական օլիմպիական խաղերը (1999, 2001, 2003, 2007թթ.) և տարբեր մարաթոնները («Մեկ ազգ՝ մեկ մշակույթ», «Ոսկե ծիրան» և այլն): Վերջապես, 2005թ. ՀՀ Սահմանադրության նոր խմբագրումը նախատեսեց երկքաղաքացիության օրենսդրական հիմքերը, իսկ

2007թ. Ազգային ժողովն ընդունեց համապատասխան օրենք: ՀՀ կառավարությունը նախատեսեց 2008թ. աշնանը սփյուռքի նախարարություն ստեղծել:

Ամեն մի հայ պետք է գիտակցի, որ համազգային նշանակություն ունեցող միջոցառումները շատ ավելի կարևոր են, քան մասնակի ու առանձին ընտանեկան կամ անձնական տոնախմբությունները: Այսինքն՝ մենք պետք է հասնենք այն բանին, որ հայ մարդկանց գիտակցության մեջ արմատական փոփոխություններ տեղի ունենան: Քանի դեռ Կալիֆորնիայի հայերի հարսանիքներն ու կնունքներն ավելի շքեղ են կազմակերպվում, քան աշխարհասփյուռ հայության կենսական կարևորության հարցերին նվիրված խորհրդակցությունները, կարող ենք փաստել, որ հայերի պատմական և քաղաքական գիտակցությունը լուրջ բուժման խնդիր ունի: Սեփական ազգի նպատակներն ու գործերը հայերը պետք է ավելի բարձր դասեն իրենց մասնավոր նպատակներից (այդ թվում՝ ընտանեկան ու անձնական գործերից):

Ցանկացած ազգ, որը պետություն է կազմել, ունի նաև սփյուռք: Այլ կերպ ասած, ցանկացած պետություն միավորում է տվյալ (կամ, այսպես կոչված, հիմնական) ազգի զգալի մասը և, որպես կանոն, տվյալ ազգի որոշ թվով ներկայացուցիչներ բնակվում են այդ պետության սահմաններից դուրս՝ արտերկրում: Սա օրինաչափ երևույթ է և, ինչպես ցույց է տալիս փորձը, աշխարհի գրեթե բոլոր ազգային պետություններում բնակվում է այդ ազգի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը, իսկ պետությունից դուրս՝ տվյալ ազգի փոքր մասը: Այդ մասը երբեմն շատ փոքր ու աննշան է լինում, իսկ երբեմն էլ կազմում է տվյալ ազգի 15-20%-ը և նույնիսկ ավելին: Սակայն Հայաստանի դեպքում գործ ունենք մի բացառիկ երևույթի հետ, երբ հայ ազգի մեկ երրորդն է բնակվում Հայաստանի Հանրապետությունում, իսկ երկու երրորդը՝ հանրապետությունից դուրս՝ բազմաթիվ այլ երկրներում: Սա մի բացառիկ երևույթ է, երբ սփյուռքն իր թվով երկու-երեք անգամ գերազանցում է տվյալ պետության հիմնական բնակչությանը: Այստեղ համեմատություն կարելի է անցկացնել միայն հրեաների և իռլանդացիների հետ: Ոչ մի այլ ազգության պարագայում նման երևույթ չի արձանագրվում: Սակայն հայերի բացառիկությունը չի սահմանափակվում միայն սրանով: Պարզվում է, որ երկրի ներսում նույնպես հայոց պետությունն ազգային կառուցվածքի միատարրության առումով բացառիկ պատկեր է ներկայացնում: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության բնակչության 97%-ը կազմում են հայերը: Սա նույնպես բացառիկ երևույթ է, և աշխարհում ընդամենը մի քանի պետություններ կան, որոնց բնակչությունն այս աստիճան միատարր է:

Հայաստանի Հանրապետության բնակչության միայն 3%-ն են կազմում այլ ազգությունների ներկայացուցիչները: Հիմնականում դրանք քրդերն (եզդիներն) են ու ռուսները: Կան նաև այլ ազգային փոքրամասնություններ ներկա-

յացնող փոքրաթիվ խմբեր: Համաշխարհային փորձը վկայում է, որ տարբեր ազգային պետություններում ազգային փոքրամասնությունները կազմում են, որպես կանոն, բնակչության 10-25%-ը, երբեմն ավելի շատ՝ մինչև 50-60%-ը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը թե՛ ներքին ազգային կառուցվածքով, թե՛ իր մեծամասնություն կազմող սփյուռքով մի բացառիկ երևույթ է: Այս բացառիկության պատմական պատճառները հիմնականում պարզ ու հասկանալի են: Դրանք բացատրվում են հայոց պետականության ստեղծման, ցեղասպանության ու սփյուռքի ձևավորման պատմական գործընթացներով: Սակայն այս բացառիկության հետևանքներն ու հայոց պետականության հետագա զարգացման հեռանկարները դեռ բավարար ուսումնասիրված չեն: Կարելի է նույնիսկ ասել՝ բնավ ուսումնասիրված չեն:

Հայաստանի Հանրապետությունում գործող Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նմանությամբ անհրաժեշտ է հիմնել սփյուռքի միջազգային հետազոտական կենտրոն-ինստիտուտ: Հզոր մի հետազոտական կառույց՝ «think-tank», որը կունենա մշտական աշխատողներ և հնարավորություն՝ տարբեր երկրներից հրավիրելու բազմաթիվ գիտնականներ (ոչ միայն հայազգի), որոնք պայմանագրային կարգով կհամագործակցեն նշված ինստիտուտի հետ: Մեկ րոպե անգամ չեմ կասկածում, որ սփյուռքը և ցեղասպանությունը մեկ հարցի՝ Հայկական հարցի փոխկապված խնդիրներ են: Պարզապես, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ուսումնասիրությունների կենտրոնում պատմական անցյալն է, իսկ սփյուռքի ինստիտուտը հայացքը պետք է ձգի ապագային:

Մեր կարծիքով՝ սփյուռքի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները և, ընդհանրապես, գիտական մոտեցումները շատ են ուշացել: Սակայն չմոռանանք, որ դրա պատճառը խորհրդային գաղափարախոսությունն էր: Մենք բոլորս շատ լավ գիտենք, որ կոմունիստները երկար տարիներ արգելում էին ոչ միայն ցեղասպանության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, այլև նույնիսկ ցեղասպանության հիշատակումը: Այս առումով, Խորհրդային Միությունը թուրք ցեղասպանների մեղսակիցն էր: Այժմ մենք նախաձեռնում ենք այն, ինչը պետք է արվեր նախորդ սերունդների կողմից, 50-80 տարի առաջ: Ցեղասպանության ազատ ուսումնասիրություններն սկսվել են, կարելի է ասել, ընդամենը 20 տարի առաջ (նույնիսկ ոչ 1965 թվականից): Այսինքն՝ նշանակում է, որ մենք շատ ժամանակ չունենք, պետք է շտապենք և լրացնենք լռության տասնյակ տարիների ընթացքում գոյացած բացը: Խորհրդային Միությունն ամեն ինչ արեց, որպեսզի Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնվի: Բայց դա նրան չհաջողվեց:

Վերադառնալով գիտական ուսումնասիրություններին՝ պետք է լավ գիտակցենք, որ խնդրի իրավաբանական խորազնին մշակումը չափազանց

կարևոր է, բայց դրան զուգահեռ պարզապես խիստ անհրաժեշտ է փնտրել հարցի ոչ ավանդական, նորարարական լուծումներ: Մենք պետք է գնանք բոլոր հնարավոր ճանապարհներով:

Որքան ավելի մոտենանք Հայկական հարցի ճիշտ ու արդյունավետ լուծմանը, այնքան ավելի են աճելու թուրքական պետության ազդեցությունն ու գործակալական ակտիվությունը, ընդհուպ մինչև Հայաստանում հեղաշրջում կազմակերպելու փորձերը:

Մենք չպետք է գերագնահատենք մեր հակառակորդներին, քանզի դա կանխելու է մեր համարձակությունը: Սակայն ավելի վտանգավոր կլինի, եթե մենք թերագնահատենք նրանց, քանի որ դա կձախողի մեր գործը:

Ապրիլ, 2008թ.

ПРОБЛЕМЫ ТРЕТЬЕГО ПОКОЛЕНИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Геворг Погосян

Резюме

За свою почти вековую историю после Геноцида армян армянская диаспора прошла несколько этапов развития. Определенные отрывки истории Диаспоры изучались достаточно подробно. Однако нам представляется, что она нуждается в обобщении и целостном осмыслении. В статье рассмотрены лишь некоторые концептуальные пункты этого процесса.

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ (1918թ. երկրորդ կես - 1919թ.)[1]

*Էդուարդ Լ. Դանիելյան**

Հայկական լեռնաշխարհում հայ ազգի տեղաբնիկությամբ և մշակութակերտ գործունեությամբ է պայմանավորված հինգհազարամյա Հայոց պետականության ներդաշնակումը քաղաքակրթական արժեհամակարգին՝ վկայված հին հայոց թագավորությունների (գագաթնակետն է Մեծ Հայքի Տիգրան Բ Մեծի տերությունը) պատմամշակութային ժառանգությամբ: Հայկյան ոգեղեն ակունքներից սնվող ազատագրական պայքարը V դարում առաջնորդել է Հայոց պետականության կրող նախարարական համակարգի ընտրանին՝ Վարդան Մամիկոնյանի (450-451թթ.) և այնուհետև Վահան Մամիկոնյանի (481-484թթ.) գլխավորությամբ: Ազատագրական պայքարի շնորհիվ Հայաստանի մեծագույն մասում վերականգնվեց պետականությունը՝ ի դեմս Տանուտերական իշխանապետության [1, էջ 76] և Արցախում ու Ուտիքում հիմնված Հայկազուն-Սիսակյան-Առանշահիկ Վաչագան Բարեպաշտի թագավորության [2, էջ 41, 47, 89; 3, էջ 41-92]: Հետագա դարերում Հայոց Բագրատունյաց, Վասպուրականի, Կարս-Վանանդի, Տաշիր-Ձորագետի՝ Կյուրիկյանների, Փառիսոսի, Սյունիքի, Կիլիկիայի թագավորությունների և Զաքարյանների, Արցախ-Խաչենի և Սյունիքի իշխանապետությունների բարձրացման պատմական իրողությունները նույնպես պայմանավորված էին ազատագրական պայքարով:

1918թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերի ռազմավարական էությունը ազգային և պետական գործիչ Արամ Մանուկյանի և նրա զինակիցների ազգանվեր մտածողության արգասիքն էր: Սարդարապատում թուրքերի ջախջախման և Հայոց հաղթանակի կերտման գործում ծանրակշիռ ներդրում ունեցավ արցախահայ զինվորականությունը:

Իսկ Թուրքիան արդեն հայտնի էր որպես հանցագործ պետություն: Հա-

[1] Զեկուցում՝ կարդացված «Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ» միջազգային գիտագործնական կոնֆերանսում, 21-24 մարտի 2010թ., ԼՂՀ, ք. Ստեփանակերտ:

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմագիտության դոկտոր:

յոց ցեղասպանության դաժանագույն ժամանակաշրջանում՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի հայտարարությունը «մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի հանցագործություններ»-ի մասին [4, p. 16]՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման առաջին միջազգային իրավական փաստաթուղթն է 20-րդ դարում:

Հայտնի է, որ քաղաքակրթության ակունքները Հայաստանում են: Դեռևս XVIII դարում ֆրանսիացի աստվածաբան Կալմեն (1672-1757) գրել է. «Հայաստանը քաղաքակրթության օրրանն է» [5, p. 162; տես՝ 6], իսկ Մեծ Բրիտանիայի պետական գործիչ, նախկին վարչապետ Գլադստոնը, դատապարտելով հայերի դեմ թուրքերի ցեղասպան ոճրագործությունները, 1895թ. հայտարարել է. «Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը»: Դաշնակից տերությունների ներկայացուցիչները 1917թ. հունվարին՝ ԱՄՆ նախագահ Վիլսոնին ուղղված պատասխանում հայտարարել էին, «որ իրենց նպատակներից մեկն է Եվրոպայից դուրս մղել Օսմանյան կայսրությունը՝ որպես որոշակիորեն օտար Արևմտյան քաղաքակրթությանը» [7, ch. III]:

1918թ. երկրորդ կեսին Թուրքիան սեփական օրինակով աշխատում էր արհեստածին՝ ցեղասպան վտանգներով լի օղուզ-թաթարական ավազակապետությանը կենդանություն տալ՝ ի հաշիվ զավթումների: Ի կատարումն համաթրքական-համաթուրանական ծրագրի՝ Իրանական Ադրբեջանը նույնպես զավթելու նպատակով, թալանվեց նրա անվանումը և տրվեց մերձկասպյան տարածքում ստեղծվող խամաճիկային, պետական կազմավորմանը [8, էջ 685; 9, էջ 297]: Իրանի պաշտոնական շրջանակները բողոք ներկայացրին Թուրքիային այդ արհեստածին նորակազմ քաղաքական կազմավորումն «Ադրբեջան» անվանակոչելու կապակցությամբ [10, p. 2]: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին Վրաստանում ՀՀ հավատարմատարը 1918թ. սեպտեմբերի 25-ի գրությամբ հայտնում էր. «Բաքվի անկումից հետո համառ լուրեր էին պտտվում այն մասին, որ Ադրբեջանը և թուրք հրամանատարությունը իրենց հերթական խնդիրն են դարձրել Ղարաբաղն (Արցախ) ընկճելը» [8, էջ 639]: Ալ.Խատիսյանը Արցախահայության հերոսականության մասին գրել է, որ գերմանա-թուրքական ուժերն Անդրկովկաս արշավելիս օժանդակություն էին ստանում «Ադրբեջանի» զորամասերից, սակայն Արցախը նվաճելու նրանց բոլոր ջանքերը փշրվեցին հայության հերոսական դիմադրության շնորհիվ [8, էջ 730]:

Արցախահայության 1918-1920թթ. ընթացքում տեղի ունեցած ինը համագումարների մեծագույն մասը հայկական պետականության արտահայտությունն էր: Արցախի լիազոր ներկայացուցիչների ընտրած Ժողովրդական կառավարությունն ու Ժողովրդական խորհուրդն իրականացնում էին հայկական պետական իշխանության գործառույթները: 1918թ. հուլիսի 22-26-ը Շուշիում կայացած Առաջին համագումարն Արցախը հռչակեց Հայաստանի Հանրապե-

տության անքակտելի մաս: Համագումարն ընտրեց Արցախի կյանքի տարբեր բնագավառների խնդիրներով զբաղվող յոթ անդամներից բաղկացած կոալիցիոն կառավարություն, որի կենտրոնն էր Շուշին [8, էջ 653]:

Թուրքական և օղուզ-թաթարական «Ադրբեջանի» հրոսակները 1918թ. սեպտեմբերի 15-ին Բաքուն գրավելուց և այնտեղ հայերի կոտորածն իրագործելուց հետո սպառնում էին հարձակվել Արցախի վրա: Թուրք-մուսավաթական մեծաքանակ հրոսակները շարժվեցին դեպի Շուշի՝ ճանապարհին մահ ու ավերածություն սփռելով:

Արցախահայությունը չհանդուրժեց թշնամու բռնությունները: Միայն թուրք-մուսավաթական հրոսակների կողմից կատարված թնդանոթային ռմբակոծությունից և բռնություններից հետո մի քանի գյուղերի բնակիչները ստիպված հանձնեցին զենքը: Զենքն անհատական էր՝ որսով զբաղվելու, իսկ վտանգի պահին՝ ընտանիքները պաշտպանելու համար: Սակայն, սարսափով հիշելով հայոց աննկուն ֆիդայիների սխրանքներն Արևմտյան Հայաստանում, թուրքերը բռնությունների միջոցով հայ գյուղացիներից առգրավում էին զենքը: Իսկ հավաքված զենքով սայլերը ճանապարհին հաճախ անսպասելիորեն չքանում էին: Այդ խիզախ գործողությունն իրենց կյանքի գնով իրականացնում էին հերոս հայորդիները:

1918թ. սեպտեմբերի վերջին թուրք-թաթարական հրոսակները ներխուժեցին Շուշի: Սակայն արցախահայությունը շարունակում էր պայքարը: Պաշտպանության կենտրոն էր դարձել Ավետարանոց գյուղն՝ Արցախի զորքերի ընդհանուր հրամանատար Սոկրատ-բեկի գլխավորությամբ: «Արցախի զորքերի դրոշակների վրա ասեղնագործված էր՝ «Մահ կամ ազատություն» [8, էջ 641]: Արցախում հայկական պետականության դրսևորումն էր ինքնապաշտպանության նպատակով ստեղծված չորս հրամանատարական շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի համակարգը [8, էջ 674; 11, էջ 329], որոնց ներկայացուցիչներն անգլիական պաշտոնյաների հետ բանակցելիս հայտարարում էին, որ «Արցախի հայությունը չի ճանաչել ո՛չ թուրքական և ո՛չ էլ Ադրբեջանի կառավարությունը, չի ճանաչում և չպիտի էլ ճանաչի. նա կռվել է նրանց դեմ մինչև վերջին րոպեն, որպես Անգլիայի դաշնակից, և զենքը ցած է դրել միայն գեներալ Թոմսոնի կարգադրության համաձայն: Մեր ձգտումն է քաղաքական տեսակետից միանալ Արարատյան Հանրապետության հետ ի միասին մայր Հայրենիքի (Արևմտյան Հայաստան)... » [8, էջ 670]:

Առաջին աշխարհամարտի ավարտով՝ պարտված Թուրքիայի զորքերը հեռանում էին Անդրկովկասից, սակայն լարվածությունը տարածաշրջանում չէր նվազում: Մուսավաթականներին զինում էին նահանջող թուրքերը, որոնց քաղաքական ասպարեզում փոխարինելու եկավ անգլիական հրամանատարությունը:

Անգլիացիների հայտարարությունը, թե իրենք իբրև թե եկել էին ճանապարհներ բացելու և խաղաղություն հաստատելու նպատակով, շատ կարճ

ժամանակում հակառակ արդյունքն ունեցավ: Պաշտպանելով «Ադրբեջանի» ավազակապետության՝ անգլիացիներն իրենց սեփական շահն էին հետապնդում՝ Բաքվի և Մոսուլի նավթահանքերից մինչև Հնդկաստանի հարստությունները: Համաթրքության արյունարբու ծրագրի հունն էր մտնում նավթային գիշատիչ քաղաքականությունը: Ալ.Խատիսյանը գրել է. «Նավթը շատ զորավոր զենք էր Ադրբեջանի ձեռքին ընդդեմ մեզ: Բայց հակառակ ատոր մենք մինչև վերջ անդրդվելի մնացինք Ղարաբաղի հարցին մեջ» [12, էջ 168]:

Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Վահան եպիսկոպոսը քայլեր էր ձեռնարկում կրթական գործը վերականգնելու ուղղությամբ, ինչպես վկայում է 1918թ. դեկտեմբերի 4-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ին գրած զեկուցագիրը. «Դպրոցական կյանքն Արցախում գրեթե դադարած է: 60-ից ավելի դպրոցներից ոչ մեկը գոյություն չունի գյուղերում... Միայն Շուշիում նոր բացվել է Մարիամ-Ղուկասյան դպրոցը, իսկ դեկտեմբերի 1-ից՝ Թեմական դպրոցը... Հազիվ թե դրանք էլ կարողանան շարունակել իրենց գոյությունը նյութական պատճառով...»: Թուրք-մուսավաթականների կատարած ավերածությունների և հանցագործությունների մասին Վահան եպիսկոպոսը տեղեկացնում էր. «Թուրք-ադրբեջանական ներխուժումը մեր թեմում ավերել է 35-ի չափ հայ գյուղեր... Ժողովուրդն այդ տեղերից ցիր ու ցան փախստական է դարձել զանազան կողմերում, տներն ավերված են, կողոպտված, ժողովրդի մի մասը՝ կոտորված, եկեղեցիները՝ նույնպես կողոպտված: Ամարասի վանքն ավերված է, շինությունները՝ քանդված, բոլոր միջի հարստությունը՝ կայք, գույք տարած… Սպանված է մի քահանա... իսկ մոտ տասը գյուղի քահանաներ վախճանվել են, և ժողովուրդը մնացել է առանց քահանայի: Մի քանի գյուղեր համախոսական խնդիրներ են ներկայացրել և խնդրում են նորերի ձեռնադրություն, իսկ մի քանիսը հովվում են մոտ գյուղերի քահանաները…»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ստացված պատասխանում ասվում էր. «...Նորին Սրբությունն ի նկատի ունենալով թեմիդ կարիքները... բարեհաճ արտոնել է Ձեզ... ձեռնադրել Ձեր պատասխանատվությամբ արժանավոր քահանայացուներին...» [8, էջ 662-663, 676]:

Արցախահայերը բացարձակապես չէին ընդունում որևիցե համագործակցություն այսպես կոչված «ադրբեջանական»՝ թուրք-թաթարական խամաճիկային կազմավորման հետ: Վահան եպիսկոպոսի նախաձեռնությամբ 1918 թվականի դեկտեմբերի 2-ից Արցախի զորահրամանատարների ներկայացուցիչների և քաղաքական ուժերի պատվիրակների խորհրդակցություններ տեղի ունեցան: Ընտրվեց Ժամանակավոր Ազգային խորհուրդ, որն առաջին իսկ քայլերով ցուցաբերեց իր վճռականությունը՝ Հայրենիքի պաշտպանության գործում [8, էջ 679]:

Պոլսում գտնվող բրիտանական զորքերի գլխավոր շտաբի 1919թ. ապրիլի 4-ի զեկուցագրում ասվում էր, որ հունվարի 15-ին Ղարաբաղում նշանակված նահանգապետ Սուլթանովը թուրքական գործակալ էր: Հայաստանի Հան-

րապետության արտգործնախարար Ս.Տիգրանյանը վճռական բողոք ուղարկեց Ադրբեջանի կառավարությանը և Անդրկովկասում տեղակայված անգլիական զորքերի հրամանատարությանը՝ հայտարարելով, որ Արցախն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են [11, էջ 330]:

1919թ. փետրվարի 10-20-ը թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Արցախի հայության 4-րդ համագումարը, որը միաձայն որոշեց, որ Արցախը հանդիսանում է Հայաստանի տարածքներից մեկը, որը պետք է միացվի Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս: Համագումարն ընտրեց Արցախի Ազգային խորհուրդ, որն օժտված էր երկրամասը կառավարելու լայն լիազորություններով [11, էջ 331]:

Ապրիլի 16-ին ՀՀ արտգործնախարար Ս.Տիգրանյանը բրիտանական կովկասյան հրամանատարությանը հեռագիր հղեց, որում նշում էր. «Տեղական բնակչությունը և մեր կառավարությունը չեն կարող հաշտվել, որ Զանգեզուրն ու Հայկական Ղարաբաղը ենթարկվեն Ադրբեջանի կառավարության կողմից կարգված իշխանությանը» [11, էջ 332]:

Փարիզի Խաղաղարար վեհաժողովին Ա.Խատիսյանի ներկայացրած պաշտոնական հաղորդագրությունում նշվում էր. «Ղարաբաղի 355 հազար հայ ազգաբնակչությունը կազմում է Հայաստանի ամբողջության մասը»: Նա հայտնում էր, որ «Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղի և Նախիջևանի նվաճման ծրագիրը նպատակ ունի համաթուրանական ձգտումների իրականացումը, որով այն աշխատում է միացնել Ադրբեջանը, Արցախի և Նախիջևանի վրայով, Թուրքիային և Պարսկաստանին, այսպիսով ստեղծել մուսուլմանական կուռ զանգված, կտրել Արևելյան Հայաստանն Արևմտյան Հայաստանից՝ ոչնչացնելով Միացյալ Հայաստանի ստեղծումը»: Հայաստանի կառավարությունը հայտնում էր իր վստահությունը, որ Հաշտարար կոնֆերանսն «ուշադրության կառնի Հայաստանի Հանրապետության համար այնքան կենսական եղող Ղարաբաղի (Արցախ) հարցը» [11, էջ 730-731]:

Նավթային տենդով գրգռված անգլիական հրամանատարության սադրանքների և մուսավաթականների ավազակային հարձակումների պայմաններում 1919թ. ապրիլի 23-24-ին տեղի ունեցավ Արցախահայության 5-րդ համագումարը, որը մերկացրեց Թուրքիայի և «Ադրբեջանի» համաթրքական մերձեցումը: Համագումարը շեշտը դրեց հայ ազգի քաղաքակրթական որակներով պայմանավորված Արցախի անսասանության վրա՝ նշելով. «Մենք համոզված ենք, որ արդի Ադրբեջանն իր մեծ եղբոր՝ Թուրքիայի օրինակին հետևելով՝ ձգտում է բնաջինջ անել հայերին, որպես միակ կուլտուրական ու դեպի Եվրոպան և ոչ թե դեպի Արևելք ձգտող տարրի, մանավանդ Արցախի հայերին, որոնք պաշտպանել են մինչև հիմա իրենց ազատությունը և դեռևս չեն ենթարկվել ավերածության և բարբարոսությունների» [8, էջ 684]:

Հայաստանի արևելյան շրջանների՝ Արցախի և Զանգեզուրի քաղաքա-

կրթական արժեքների մասին խոսելիս անհրաժեշտ է հիշել, որ XXդ. շեմին Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ) Արցախի բարձր մշակութային արժեքների՝ Տաթևի վանքի և, հատկապես, Գանձասարի վանքի նկատմամբ մեծ հոգածություն էր ցուցաբերել [13, հ. Գ, էջ 5752]: Փարիզի Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շարլ Դիլը համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցների շարքում հայ ճարտարապետական արվեստի հինգ լավագույն հուշարձանների շարքում նշել է Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին [14, p. 43]:

Արցախահայության 5-րդ համագումարը՝ հավատարիմ ազգային արժեքներին, քաղաքակրթական, պատմա-իրավական հիմքի վրա և ժողովրդավարության չափանիշներին համապատասխան՝ հայտարարեց. «Արցախի հայության քաղաքական, պատմական, կուլտուր-իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի շլինքին փաթաթելու Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը: Այդ ամենի հիման վրա, Արցախի հայության 5-րդ համագումարն անհնարին է համարում ընդունել Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձև և հայտնում է, որ նա իր որոշումը հիմնել է իրեն ընտրող ժողովրդի անհողդողդ ու հաստատուն կամքի վրա, որի մեջ անգլիական հրամանատարությունը եթե կամենա՝ կարող է համոզվել համաժողովրդական ռեֆերենդումի միջոցով» [8, էջ 684]: Համագումարն անգլիական կառավարությանը կոչ էր անում Արցախի նկատմամբ զերծ մնալ բռնություններից և, նկատի ունենալով հայության քաղաքակրթական բարձր արժեհամակարգը, նշում էր. «Միանգամայն պարզ գիտակցելով, որ նման կարևոր քաղաքական հարցերի լուծման ժամանակ չափազանց խոշոր նշանակություն և ուժ ունեն կուլտուր-տնտեսական գործոնները, համագումարը... անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Արցախի ամբողջ հայության անհողդողդ կամքով, որին դավաճանել ոչ մի դեպքում չեն ուզում և չեն կարող համագումարի անդամները և որոնք ոչ մի պատասխանատվություն չեն կարող վերցնել իրենց վրա՝ Ադրբեջանի իշխանության բռնի հաստատման հետևանքներով գալիք արյունոտ փորձությունների համար» [8, էջ 684]:

1919թ. փետրվարին, Արևմտահայերի 2-րդ համագումարում, Միացյալ Հայաստանի մասին ընդունված պատմական որոշմանն անդրադառնալով՝ Ալ.Խատիսյանը գրել է. «Հայությունը հասել էր ազգային այնպիսի գիտակցության, որ չէր կարող ճանաչել սահմանների պատահական բաժանում և հատվածների գոյություն, այն իրեն կը զգար իբրև մեկ ամբողջություն...» [12, էջ 150]: 1919թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանում Միացյալ Հայաստանի հռչակմամբ հայ ժողովուրդն ի լուր աշխարհի ազդարարեց իր ամբողջական Հայրենիքի վերակերտման միասնական կամքը:

Քաղաքակրթական բարձր արժեքներով բնութագրվող Հայոց միասնա-

կանության գաղափարով Հայկական Սփյուռքն իր քաղաքական գնահատականներում և գործողություններում մշտապես նեցուկ է եղել Արցախի հայության հայրենանվեր, արդարացի պայքարին ընդդեմ վայրենի մակարդակի վրա գտնվող օղուզ-թուրք-թաթարական արհեստածին «Ադրբեջանի» իշխանությունների ոտնձգությունների: ԱՄՆ Բոստոն քաղաքում լույս տեսնող «Հայրենիք» օրաթերթի 1919թ. հունիսի 22-ի համարում հրապարակվեց Փարիզից ուղարկված «Արցախը Հայաստանի անբաժան մաս» հոդվածը, որի հեղինակը՝ հայ ազգային գործիչ Բերունին, հիմնարար տեղեկություններ հաղորդելով Հայոց Արցախ աշխարհի մասին, շեշտադրել է քաղաքակրթական պատմությամբ բնորոշվող Հայոց ազգային միասնականությունը՝ մշակութային ամբողջության մեջ դիտելով Արցախի և Հին Վանի, այսինքն՝ Արարատյան թագավորության ժամանակները. «Արցախը կապված լինելով բնական-աշխարհագրական կապերով Հայկական Բարձրավանդակի հետ՝ կապված է նաև պատմությամբ ու քաղաքակրթությամբ: Արցախը Գանձակի լեռնային մասի, Ղազախի (Գուգարաց աշխարհի Կողբոփոր գավառը [13, հ. Ա, էջ 1049; 15, էջ 60]) լեռնային շրջանի, Սևանի, Դիլիջանի, Լոռու հետ միասին միանում է Արարատին և նրանով Հայկական Բարձրավանդակին որպես նույն կրոնի և ազգային միևնույն ավանդույթների ընտանիք: Պատմական շիրիմներն ու հնությունները, որ գտնվել են Արցախում, ապացուցում են, որ ամենահին ժամանակներից սկսած՝ այդ երկրամասի մշակույթը միացած է եղել Հին Վանի մշակույթին: Այսպիսով, աշխարհագրական-բնական նույն միջավայրում ստեղծվել է միևնույն պատմությունը, միևնույն քաղաքակրթությունը»:

Հայկական լեռնաշխարհում Արցախի ռազմավարական և քաղաքական կարևորագույն դիրքի մասին Բերունին գրել է. «Առանց Արցախի՝ Միացյալ Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան սահմանները կլինեն միանգամայն անպաշտպան: Եթե մի անգամ արտաքին որևէ ուժ բարձրացավ Արցախի լեռնաշխարհ՝ նա անարգել կարող է առաջանալ դեպի Հայաստանի սիրտը - Արարատը, Հայաստանի Բարձրավանդակը: Արցախի լեռները Հայաստանի հյուսիսարևելյան դռներն են, որոնց գավթումն օտարի կողմից անմիջական և հարատև վտանգի մեջ կպահի Հայաստանը: Բնական-աշխարհագրական պայմաններից բխող մի անխուսափելի պարագա է սա: Հայաստանի Բարձրավանդակի ուղղակի շարունակությունն է Արցախի լեռնաշխարհը և նրա հետ կապված է պաշտպանության ամենամեծ կապերով: Մյուս կողմից՝ Հայաստանի երկարատև պատմությունն ապացուցում է շատ որոշ կերպով, թե որ աստիճան անհրաժեշտ երկրամաս է Արցախն ամբողջ հայության համար: Այն ժամանակ, երբ մեր Հայրենիքի շատ կենտրոններ նվաճվել են արտաքին ուժերից, Արցախը մնացել է աննվաճելի... Արցախը կարողացավ փրկել մի մեծ հայություն՝ արևելքի բռնակալներից... Արցախը շնորհիվ իր աշխարհագրական-բնական պայմանների և առանձնահատուկ ազգային ոգու,

կարողացել է հետ մղել թշնամիներին և լեռների վրա պահել իր ազգային անկախությունը, իր ազգային ոգին, պատմությունը, քաղաքակրթությունը և ավանդությունները... Պարզ է միանգամայն, որ Արցախը եղել է միշտ հայ ազգային անկախության հայտնի կենտրոններից մեկը և հայ ազգային ոգու պաշտպանը, որ ունեցել է Հայկական Բարձրավանդակի հետ միևնույն մշակույթը, միևնույն պատմությունը, միևնույն քաղաքակրթությունը և միևնույն քաղաքական կյանքը – չի կարելի բնավ անջատել նրանից: Արցախը Հայաստանի անբաժան մասն է» [8, էջ 717-718]:

Այսօր, երբ Արցախյան ազատամարտի հերոս հայորդիների արյան գնով վերականգնվում է պատմական արդարությունը, ավելի քան արդիական են Հայոց միասնական պետականության վերականգնման և ամրապնդման համահայկական գործում Արցախի ռազմավարական, քաղաքական և մշակութային՝ քաղաքակրթական նշանակության գաղափարի գիտակցումը և իրականացումը:

Եզրակացություններ

1. 1918-1919թթ. Արցախահայության ազատագրական պայքարի հիմքում էր հայկական պետականության քաղաքակրթական արժեհամակարգից բխող Հայոց միասնական Հայրենիքի գաղափարը:
2. Հայաստանի Հանրապետությունը վճռականորեն պաշտպանել է Արցախի՝ Հայաստանի անբաժան մասը լինելու ճշմարտությունը և իրողությունը:
3. «Ադրբեջան» կոչված արհեստածին կազմավորումը բացարձակապես օտար երևույթ էր մերձկասպյան տափաստաններում, և նրա այսպես կոչված կայացումը համաթրքական-համաթուրանական արյունարբու ծրագրով կապվում էր տարածքային բռնազավթումների հետ:
4. Միջազգային պաշտոնական ոլորտները չէին գտնվում մարդկային և քաղաքակրթական այն բարձրության վրա, որ իրենց սեփական շահերը մի կողմ թողնեին և արդարացի քաղաքականություն իրականացնեին Արևմտյան Հայաստանի, Արցախի, Նախիջևանի և Ջավախքի՝ Հայոց ամբողջական Հայրենիքի անբաժան մասերի նկատմամբ:
5. Հազարամյակների խորքից եկող Հայոց ազատատենչ անկոտրում կամքն իր վառ արտահայտությունն է ստացել Արցախի ազատամարտում, և այսօր ազատամարտիկների սուրբ արյամբ ձեռք բերված հաղթանակով հայրենի տարածքների՝ հայոց զինուժով ամրապնդման, քաղաքակրթական իմաստավորման և շենացման ժամանակն է:

Մարտ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Պատմութիւն Սեբէոսի: Աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979:
2. *Մովսէս Կաղանկատուացի,* Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ.Առաքելյանի, Երևան, 1983:
3. *Ուլուբաբյան Բ.Ա.,* Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998:
4. History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War. London, 1948, p. 35, W.A. Shabas. Genocide in International Law, Cambridge, 2000.
5. Calmet (Rev. Pére Dom Augustin) in Dictionnaire de la Bible-Paris: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846.
6. *Léonian R.,* “Les Arméniens de France sont-ils assimilés ?”, Issy-les-Moulineaux, 1986.
7. *Hacobian A.P.,* Armenia and the War. An Armenian’s Point of View with an appeal to Britain and the Coming Peace Conference with a Preface by the Rt, Hon. Viscount Bryce, O.M. London, New York., Toronto, 1917.
8. Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ, Երևան, 2001:
9. *Բալայան Վ.,* Արցախի պատմություն, Երևան, 2002:
10. *Galichian R.,* The Invention of History, London-Yerevan, 2009.
11. *Վրացյան Ս.,* Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
12. *Խատիսյան Ալ.,* Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
13. *Օրմանեան Մաղաքիա արք.,* Ազգապատում, հ. Ա, հ.Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:
14. *Diehl Charles,* Byzantine Portraits, New York, 1927.
15. *Երեմյան Ս.Տ.,* Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

СИСТЕМА ЦИВИЛИЗАЦИОННЫХ ЦЕННОСТЕЙ В АРЦАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ (вторая половина 1918г. –1919г.)

Эдуард Л. Даниелян

Резюме

В период существования первой Республики Армения (1918-1920гг.) съезды армян Арцаха явились выражением армянской государственности и свободолюбивого духа армянского народа. Армяне Арцаха, сражаясь против банд турок-мусаватистов, вместе с тем идеологически противостояли врагу, опираясь на систему цивилизационных ценностей армянской государственности.

ԵՐԿՐԻ ԻՄԻՋԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. XXI ԴԱՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԸ

*Լիանա Այվազյան**

Հոդվածը գրվել է մեր երկրի՝ գերազանցապես այլ դերակատարների կողմից ստեղծվող իմիջի վերլուծության հիման վրա՝ որպես օրինակ ունենալով Հայաստանի իմիջը ամերիկյան, այսպես կոչված, «որակյալ» մամուլում, քանի որ այդ լրատվամիջոցների ազդեցությունը կարևոր քաղաքական որոշումների ընդունման վրա վաղուց քաջ հայտնի է: Դրանք են «Վաշինգտոն Փոստը», «Նյու Յորք Թայմսը» և «Ուոլ Սթրիթ Ջորնալը» (1991-2009թթ. բոլոր նյութերը) [1]: Ցավոք, հակառակ գործընթացի (մեր կողմից ձևավորվող իմիջի) մասին խոսելն առայժմ դժվար է: Մյուս կողմից՝ կարծում ենք, որ այս վերլուծությունը և բերված օրինակները սեփական իմիջը կերտելիս կարող են ավելի օգտակար լինել, քան սոսկ հայտնի *PR* մեթոդների վերաշարադրանքը: Վերջապես, թեև օրինակները բերված են տպագիր լրատվամիջոցներից, բայց մեր վերլուծությունը կատարվել է տարածաշրջանի այլ երկրների իմիջի, գլոբալ, տարածաշրջանային և ներքին զարգացումների վերաբերյալ ավելի ընդարձակ նյութի, այդ թվում՝ պաշտոնական տեղեկատվության, ակադեմիական և փորձագիտական հետազոտությունների, հրապարակումների համեմատության, ինչպես նաև դիվանագետների, փորձագետների, լրագրողների հետ Վաշինգտոնում (հունիս, 1998թ.) և Երևանում անցկացված մի շարք հարցազրույցների հիման վրա:

Իմիջի՝ որպես ընկալումների նպատակաուղղված կառավարման արվեստի ձևավորումը կամ, ինչպես այսօր ընդունված է ասել՝ հասարակական դիվանագիտությունը մարդկությանն ուղեկցել է նրա զարգացման առաջին քայլերից [2]:

Բայց «իմիջ» հասկացությունն ուսումնասիրության առարկա դարձավ միայն XX դարի առաջին կեսին, երբ համաշխարհային երկու պատերազմները ցույց տվեցին, թե ինչ սարսափելի գին ես ստիպված վճարել «թշնամու իմիջ» ստեղծելու, քարոզելու և տարածելու դիմաց: Դիվանագիտությունը դադարել

* *CANDLE* հանրային կապերի պատասխանատու:

էր «թագավորների սպորտ» լինելուց, ինչպես XIX դարում էր [3, с. 59]: 1945թ. սկսած՝ զանգվածային լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսության, իսկ հետագայում նաև այլ նոր տեխնոլոգիաների զարգացումը փոխեց միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատկերը՝ ազդեցություն գործելով կարևորագույն որոշումների ընդունման և ԶԼՄ-ում դրանց ներկայացման վրա:

Ֆիլիպ Թեյլորն իր «Գլոբալ հաղորդակցությունը, միջազգային հարաբերությունները և ԶԼՄ-ները 1945 թվականից հետո» գրքում, Ալվին Թոֆլերի ոգով ընդգծելով հաղորդակցության դերն արդի աշխարհում, միջպետական հարաբերություններում դիվանագիտական, տնտեսական և ռազմական ուղղությունների կողքին առանձնացնում է չորրորդը՝ այն անվանելով հոգեբանական կամ *տեղեկատվական ուղղություն*. «Այս ուղղությունը ներառում է տեղեկատվության, գաղափարների, ընկալումների և ուղերձների կուտակումն ու փոխանցումը: Իրականում այն առկա է նաև մյուս ուղղություններում, սակայն դարձել է միջպետական հարաբերությունների ինքնուրույն կողմ: ...Ցանկացած հաղորդակցություն ենթադրում է մի բանի փոխանցում և ընդունում: Այդ ինչ-որ բանը տեղեկատվություն է, որը միշտ որևէ ազդանշան կամ ուղերձ է պարունակում և կարող է իրազեկել, համոզել, դաստիարակել, քարոզել, ոգևորել կամ զվարճացնել: Տեղեկատվությունը կարող է հանդես գալ ձայնի, բառի, կերպարի կամ դրանց միաձուլման տեսքով, իսկ այսօր այն այլ ձևեր էլ է ընդունել, օրինակ՝ թվային» [3, с. 21]:

Առաջարկվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են մեդիա դիվանագիտությունը *(media diplomacy), CNN* դիվանագիտությունը *(CNN diplomacy),* հեռուստատեսային դիվանագիտությունը *(TV diplomacy*): Թվում է՝ դեռ երեկ էր, որ ի հայտ եկան հասարակական/ժողովրդական դիվանագիտություն կամ «փափուկ ուժ» (*soft power*) հասկացությունները, և շատ երկրներ այն ներառեցին իրենց արտաքին քաղաքականության ոլորտում, բայց արդեն աներևակայելի արագությամբ երևան են գալիս նորերը, որոնց հայերեն համարժեքն էլ դեռ չենք հասցրել ստեղծել՝ ցանցային դիվանագիտություն *(net diplomacy),* խորշային դիվանագիտություն[1] *(niche diplomacy),* տեղեկատվական բաց աղբյուրների հասարակական դիվանագիտություն *(open-source public diplomacy)* (վերջինի մասին տե՛ս *Fisher Ali, Music for the Jilted Generation: Open-Source Public Diplomacy)* և այլն:

Այսօր դիվանագիտության կերպարը՝ որպես միայն միջպետական հարաբերություններ, հնացած է այնքան, որքան, ասենք, մագաղաթը և փետուրը՝ գիտության համար: Տեղեկատվական հեղափոխությունը փոխել է նաև գլոբալ

[1] Դիվանագիտություն, որն ուղղված է այն բանին, որ երկիրը զբաղեցնի որոշակի դիրք, տեղ՝ ելնելով դրա համար նպաստավոր այս կամ այն պայմանից:

հանրությունը: Այսօր ոչ ոք տեղեկատվական մենիշխանություն չունի: *Պետություն-պետություն* դիվանագիտության հարացույցը փոխվում է *հասարակություն-հասարակություն (people-to-people)* ձևաչափի [4]: Արդեն կանխատեսումներ են արվում վերջինի՝ այլ երկրների հասարակությունները փոխակերպելու հսկայական հնարավորության մասին:

Փոխվում է նաև ողջ միջազգային համակարգը, ի հայտ են գալիս նոր տեսություններ, որոնց հեղինակները ջանում են ոչ միայն բացատրել ընթացող նոր իրողությունները, այլև կանխագուշակել միջազգային հարաբերությունների տեկտոնական փոփոխությունները, զգուշացնել վտանգների մասին, ինչպես նաև ցույց տալ դրանց հնարավորությունները: Իսկ հետմոդեռնի ժամանակաշրջանում, ասպարեզ են ելնում մեդիան, զանգվածների հույզերը, առանձին (ներառյալ անդրազգային) խմբերի կամ տարածաշրջանների շահերը: Համատեքստի, հասարակության տրամադրությունների և անհատների դերը շատ ավելի մեծ է, քան ներկայացվում է դասագրքերում: Արտաքին քաղաքականությունը դառնում է ներքին քաղաքականության շարունակությունը [5]:

Տեղեկատվական պայթյունի, գլոբալացման, միջազգային հաղորդակցությունների զարգացման և միջազգային հարաբերություններում հասարակական կարծիքի դերի ինտենսիվացման այս պայմաններում *պետության, երկրի իմիջի* նշանակությունը դառնում է անվիճելի: Ընդ որում, գործընթացին ներգրավվում են ոչ միայն ավանդական սուբյեկտ-պետությունները, այլև բիզնեսը, միջազգային, հասարակական կազմակերպությունները, անհատական հաղորդակցությունը և այլն: Ըստ բազմաթիվ հեղինակների՝ տեղեկատվական հեղափոխությունը փոխել է միջազգային համակարգի այնպիսի հիմնարար բնորոշիչի էությունն ու բնութագրերը, ինչպիսին Ուժն է: Ըստ Մ.Կունչիկի («Ազգերի իմիջը և միջազգային հասարակական կապերը»), այսօր իմիջի կերտումը պետության հզորության կեսն է, իսկ մեդիա դիվանագիտության դարաշրջանում, նախազգուշացնում է նա, *կառավարման արվեստը* (*statecraft*) կարող է դառնալ *բեմականացման արվեստի* (*stagecraft*) պատանդը [6]:

Հաշվի առնելով միջազգային քաղաքականության արմատական փոփոխությունները, աշխարհաքաղաքական գործընթացները տարածաշրջանում և հայ-թուրքական նախաձեռնությունները՝ այժմ կարելի է խոսել տարածաշրջանում իմիջի աշխարհաքաղաքականության մասին:

Ամեն ինչ ցույց է տալիս, որ այստեղ սկսվել է ընկալումների նպատակաուղղված կառավարման *(perception management*), օրակարգի (*agenda setting*), հորինվող վստահության *(fabricated credibility)* և նոր իմիջների ստեղծման գործընթաց, որին ներգրավված են բազմաթիվ դերակատարներ, դրված են

նպատակներ (երկարաժամկետ և կարճաժամկետ), օգտագործվում են զանազան միջոցներ (բաց և փակ): Մենք, հավանաբար, գործ ունենք այն բանի հետ, ինչն ամերիկացիներն անվանում են ռազմավարական հաղորդակցություն (*Strategic Communication*): Օրինակ, ամերիկացիները ռազմավարական հաղորդակցությունը և հրապարակային դիվանագիտությունը հաջող են համարում, եթե դրանք հասցեագրված են և՛ զանգվածային լսարանին, և՛ հատուկ խմբերին, որոնք իրենց փորձի, դիրքի, առաջնորդական կարողությունների չափով ազդում են մարդկանց որոշումների և կարծիքների վրա (քաղաքական, բիզնես ասպարեզների լիդերներ, զինվորականներ, հոգևորականներ, հայտնի լրագրողներ, կրթության և գիտության ոլորտի, կանանց կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք):

Երկարաժամկետ նպատակների և բաց միջոցների համար առաջին հերթին գործադրվում է հրապարակային դիվանագիտությունը (այդ թվում մշակութային, մարզական, թանգարանային, մեդիա դիվանագիտությունը): Ընդ որում, ազդեցության զորեղացման համար բանավոր տեղեկատվությանն ավելանում են տեսաշարային, իսկ որ ամենազլխավորն է՝ իրադարձային հարթությունները: Մյուս բնութագիրն առնչվում է լսարանին. այն ընդլայնվում է և տեղայինից վերածվում գլոբալի (կարևոր է դառնում ոչ միայն այն, թե ով, ինչ, որտեղ, երբ և ինչպես է ասում, այլ նաև՝ թե *ում* է այդ խոսքն ուղղված): *Լեգիտիմությունը, վստահությունը, հեղինակությունը, լիդերները,* առանձին *անձինք, ժողովրդական հույզերը, վախերն ու ակնկալիքները, խորհրդանիշերը, ինքնությունը* և անգամ հենց՝ *պատմությունը,* այս գործընթացում դառնում են անհրաժեշտ միջոցներ:

Նոր միտումները հայ-թուրքական հարաբերություններում ցույց տվեցին, որ «մենք պատրաստ չենք պաշտպանել մեր հասարակությունը» և որ օտարերկրյա գործիչների հայտարարությունները մեզ վրա ավելի շատ են ազդում (Վիգեն Սարգսյան, «Հայլուրի» կիրակնօրյա ծրագիր):

Տարածաշրջանում բախվում են տարբեր իմիջներ. ընդ որում.

1. դրանք միայն տարածաշրջանում չէ, որ կերտվում են, ավելի ճիշտ՝ ոչ այնքան այստեղ,
2. այս գործընթացում ներգրավված են զանազան դերակատարներ, որոնք տարբեր նպատակներ ունեն,
3. արտաքին քաղաքականությունը և իմիջը հաճախ ներքին քաղաքականության շարունակությունն են,
4. ընթանում է *ինքնության հաստատման* կամ *ժխտման* պայքար,
5. իմիջը կամ դրա մոդելավորումը հաճախ քաղաքականության տեղ է մատուցվում:

Ընդ որում, ոչ ճիշտ վերլուծությունը կարող է մոլորության մեջ գցել, խանգարել կարճաժամկետ նպատակներին, բայց ամենավտանգավորն այն է, որ կարող է գործիք դառնալ ուրիշների երկարաժամկետ ծրագրերում: Տպավորությունների կառավարման (ընդ որում՝ տարբեր դերակատարների կողմից) էությունն ու բարդությունը չհասկանալը կարող է հանգեցնել համոզմունքների անցանկալի փոփոխությունների, և ոչ միայն հասարակ մարդկանց, այլև լիդերների մակարդակով, իսկ դա նշանակում է, որ վճռորոշ որոշումները կարող են անշրջելի դառնալ:

Հիշեցնենք, որ *ընկալումների կառավարումը* (*perception management*) տեղեկատվության և ազդանշանների փոխանցումը կամ փոխանցումից հրաժարումն է *օտարերկրյա լսարաններին* (նրանց հույզերի և դատողությունների օբյեկտիվության վրա ազդելու նպատակով), ինչպես նաև հետախուզական կառույցներին և բոլոր մակարդակների *լիդերներին*՝ ընդունվող որոշումների և պաշտոնական գնահատականների վրա ազդեցություն գործելու նպատակով, ինչի արդյունքում այնպիսի վարքագիծ են դրսևորում և կատարում պաշտոնական այնպիսի գործողություններ, որոնք նպաստավոր են այդ գործընթացը կառավարողի մտադրությունների համար: Այն տարբեր ձևերով ներառում է ճշմարտությունը, սուտն ու կեղծիքը, հոգեբանական գործողությունները: Ավելին, չի բացառվում, որ մենք գործ ունենք կամ գործ կունենանք նաև *կոգնիտիվ վիրուսների* հետ: Որոշ մասնագետներ, այդ թվում և արդի *տեղեկատվական պատերազմ* հասկացության հեղինակ Թոմաս Ռոնան, ընդլայնեցին մեմերի (*memes*) մասին գաղափարը՝ այն ներառելով տեղեկատվական պատերազմի համակարգում (թեև կարծիք կա, որ այն գիտական բավարար հիմնավորում չունի): Թ.Ռոնան է առաջարկել *«սոցիալական իմունային անբավարարության վիրուսի»* (*societal immunodeficiency virus - SIV*) գաղափարը, որից մարդիկ, ըստ նրա, արդյունավետ պաշտպանվելու միջոց չեն կարող ունենալ: Մեմը մշակութային տեղեկատվության միավոր է, ինչպես, ասենք, գաղափարը կամ հմտությունը, որը մի մարդուց փոխանցվում է մյուսին (*from one mind to another*) բանավոր կամ կրկնվող գործողությունների միջոցով: Գ.Սթեյնը և Ռ.Զաֆրանսկին դրանք նկարագրում են որպես մշակութային կրկնօրինակման հիմնաքարային միավորներ, որպես մշակույթի, մտածողության և վարքագծի կառուցման կաղապարներ, որոնց օգնությամբ սոցիումը վերարտադրում է ինքն իրեն [7]:

Այս պայմաններում հրատապ են դառնում տեղեկատվության վերծանումը, արժեքավոր ազդանշանների և իմիջի առանձնացումը համապատասխանաբար՝ աղմուկից և իրականությունից: Տեղի է ունենում այն, ինչը Հարվարդի համալսարանի առաջատար պրոֆեսորներից մեկը՝ «փափուկ ուժի» գաղափարի հեղինակ Ջոզեֆ Նայն անվանել է *«ավելցուկի պարադոքս»* (*paradox of*

plenty): Այսօր տեղեկատվությունից ավելի շատ *ուշադրությունն* է դառնում պահանջված ռեսուրս, և նա, ով կկարողանա արժեքավոր ազդանշանները տարբերակել աղմուկից, ավելի ուժեղ կդառնա: Ջ.Նայը գրում է, որ աճող տեղեկատվական հոսքի պայմաններում քաղաքական պայքարն ընթանում է վստահելիություն (*credibility*) ձևավորելու կամ այն փլուզելու համար: Կառավարությունները հանուն վստահելիության մրցակցում են ոչ միայն այլ կառավարությունների, այլ նաև՝ մեդիայի, կորպորացիաների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների, գիտական հանրության հետ, փաստում է նա: Քաղաքականությունը դառնում է ավելի թատերականացված և գլոբալ լսարանին ուղղված, իսկ տեղեկատվական դարաշրջանում, ըստ Նայի, հաղթում է այն կողմը, որն *ավելի լավ պատմություններ ունի* (*In an information age, it is often the side which has the better story that wins*) [8]:

Հավելենք, որ *վստահության,* սեփական *օրակարգի* առկայությունը, ինչպես նաև *իմաստների* ստեղծումը (և ոչ թե փլուզումը), հարգալից վերաբերմունքը *խորհրդանիշերին* (և ոչ թե վերացումը կամ ծաղրը) ապահովում են այն նվազագույն ամբողջական շաղախը, որը կարող է պաշտպանել հասարակական գիտակցությունը: Երկրի ինքնաիմիջի և միջազգային իմիջի առումով ևս սա շատ կարևոր գործընթաց է, իսկ դրա բացակայությունը, կամ որ ավելի վատ՝ ուրիշին հանձնելը՝ խիստ վտանգավոր: Օրինակները ոչ այնքան հեռու անցյալում են, ասենք, այն երկրի փլուզումը, որի մի մասն էինք նաև մենք: Այսպես, Գ.Պոչեպցևը նշում է. «Միջազգային իմիջն, առաջին հերթին, կապերի և դրանց գոյությունն ապահովող շրջանակների ու կանոնների համակարգ է: Ըստ էության, ԽՍՀՄ պարտությունը սառը պատերազմում հենց Խորհրդային Միության իմիջի, հետևաբար և կապերի համակարգի կորուստն էր» [9, с. 414]:

Այս համապատկերին իմիջը՝ որպես պետության հզորության ոչ նյութական կարևոր գործոն, այլ գործոնների կողքին դառնում է էլ ավելի պահանջված, իսկ ընկալումների կառավարման ավելի լայն համատեքստում՝ ռազմավարական ռեսուրս: Բացի այդ, եթե պետության քաղաքականությունը չի օրինականացվում միջազգային կարևոր դերակատարների կողմից, ապա վերջիններս կիակազդեն պետության քաղաքական գծին՝ օգտագործելով ազդեցության առկա լծակները:

Այս առնչությամբ հատկանշական է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Հայաստանի Հանրապետական կուսակցության համագումարում, որտեղ նա ընդգծեց հետևյալը. «Մենք մեր գործունեությունն այսօր կառուցում ենք որպես XXI դարի կուսակցություն: Այսօր գրեթե չկան հարցեր, որոնք հետաքրքրում են միայն մեզ: Մեզ հուզող բոլոր լուրջ հարցերը գտնվում են գլոբալ շահերի համատեքստում: Հարկավոր է լինել լավ իրազեկված համատեքստի բովանդակության մասին: Նկարչի վրձնահարվածը կարող է ճիշտ լինել

միայն ամբողջ նկարի համատեքստում»:

Ահա թե ինչու XXIդ. պայմաններում միջազգային հարաբերությունների վերլուծության համար երկրների իմիջը հաշվի առնելն անհրաժեշտ է: Հայաստանի դրական արտաքին քաղաքական իմիջի կազմավորումը պետք է իրականացվի XXI դարի նոր իրողությունների, աշխարհում և տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունների և, առաջին հերթին, ազգային շահերի հաշվառմամբ: Իմիջի ձևավորման, կառավարման, ճշգրտման ռազմավարությունը և մարտավարությունը պետք է համապատասխանեն պետության հնչեցված և չհնչեցված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներին:

Բայց ի՞նչ է երկրի իմիջը: Կարելի՞ է արդյոք կառավարել այն կամ շտկումներ անել:

Երկրի իմիջի խնդիրը բավական հիմնավոր է մշակվել, մասնավորապես, արտասահմանյան գրականության մեջ: Բայց մոտեցումները խիստ բազմազան են: Իմիջը դիտարկվում է տարբեր՝ միջազգային հանրային կապերի *(International PR),* ռազմավարական հաղորդակցության և հասարակական (կամ՝ ժողովրդական) դիվանագիտության, հոգեբանության, հանրային կարծիքի, մեդիայի, բրենդինգի, մարքեթինգի և այլնի համատեքստում: Հարցեր են առաջադրվում, որոնց միանշանակ պատասխանները չկան: Սակայն շատ երկրներ իմիջի և հեղինակության իրենց ծրագրերում հսկայական փողեր են ներդնում: Իմիջի ձևավորումը, ինչպես և *PR*-տեխնոլոգիաները հիմնված են սոցիալական և քաղաքական հոգեբանության, այդ թվում և սոցիալական ճանաչության, ազդեցության հոգեբանության, զովազդի, քաղաքական և կառավարման հոգեբանության ուսումնասիրությունների և արդյունքների վրա:

XXդ. 60-70-ական թթ. միջազգային հարաբերություններում իմիջի դերի խնդրով սկսում են հետաքրքրվել քաղաքագետներն ու միջազգայնագետները: Առաջին աշխատանքը, որտեղ ներկայացվեց միջազգային հարաբերությունների վրա իմիջի ունեցած ազդեցության վերլուծությունը, Կ.Բոլդինգի «Իմիջ» (1962թ.) գիրքն էր: Ներկայացնելով «ազգային իմիջ – միջազգային համակարգ» փոխհարաբերությունները՝ Բոլդինգը «իմիջ» հասկացությունը ձևակերպեց որպես իմացական *(cognitive)*, հուզական *(affective)* և արժևորման *(evaluative)* համակարգ [10, с. 423]:

Երբ խոսում ենք միջազգային ասպարեզում առկա իմիջների մասին, անհրաժեշտ է երկու դիտարկում անել: *Առաջին*՝ հարկավոր է որոշակիացնել երկու զանազան՝ «իմիջ» և «կերպար» հասկացությունները, և *երկրորդ*՝ տարբերել «երկրի իմիջ», «էթնիկական/ազգային իմիջ», «ինքնաիմիջ», «մեդիաիմիջ», «արտաքին քաղաքական իմիջ» և այլ հասկացությունները:

Ե՛վ առօրյա խոսքում, և՛ հրապարակախոսության մեջ, և՛ գիտական

գրականության մեջ «իմիջ» հասկացությունը կիրառվում է բացառապես ծրագրված ազդեցության և նպատակաուղղված ձևավորման համատեքստում, ինչը մատնանշում են Ա.Բոդալևն ու Լ.Լապտևը: Այսպես, Ե.Բ. Պերելիգինան ցույց է տալիս, որ «...իմիջը ստեղծվող կերպարն է, այսինքն՝ այն կերպարը, որն առաջ է գալիս որոշակի գործունեության, աշխատանքի արդյունքում»: Ավելի հստակ ձևակերպում են ներկայացնում Ե.Ն. Բոգդանովան և Վ.Գ. Զազիկինը. *«...իմիջը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հատուկ կառուցված հոգեբանական կերպար՝ ստեղծված միանգամայն որոշակի նպատակներով»:* Այդ նույն տեղում հեղինակները, շարունակելով, գրում են. «Այլ խոսքերով՝ օբյեկտի կերպարը կարող է գոյություն ունենալ «բնականորեն», իսկ «իմիջ» հասկացությունը երևան է գալիս այն ժամանակ, երբ ծագում է խմբային կամ անհատական գիտակցության մեջ այդ կերպարի շտկման խնդիրը» [11, с. 36-37]:

Իմիջի այս նույն ակտիվ, ֆունկցիոնալ էությունն է ընդգծում մեկ այլ հետազոտող՝ Էրաստ Գալումովը՝ կատարելով մի քանի կարևոր եզրահանգում [12].

Առաջին՝ իմիջը կառավարվող կատեգորիա է, որը կարելի է համահաբաբերակցել, կերտել և վերափոխել՝ ելնելով մեր ցանկություններից:

Երկրորդ՝ պետության իմիջն իր գինն ունի և մրցակցային խնդիրների լուծման գործիք է հանդիսանում:

Երրորդ՝ իմիջը ոչ միայն տեղեկատվական, այլև մարտնչող տեղեկատվական հասկացություն է:

Մ.Կունչիկը գրում է. «Իմիջն այն է, ինչ ստեղծվում և մշակվում է նրանց կողմից, ովքեր այն ունեն, այսինքն՝ մի բան, որի վրա կարող են ազդել *PR*-գործողությունները: Ի տարբերություն իմիջի, նախապաշարմունքները և կարծրատիպերը ստեղծվում են միջավայրի կողմից և նրան վերագրվում են: Այս իմաստով... իմիջը միշտ ակտիվ բաղադրիչ է ներառում» [6, с. 39]: Միևնույն ժամանակ, սոցիալական հոգեբանները եկել են այն եզրակացության, որ, անկախ գործադրվող ջանքերից, «մարդկանց մտածելակերպը և պատկերացումները խիստ կայուն են շրջապատի անսպասելի ճնշման հանդեպ», այնպես որ՝ «բնակչության 40%-ի մոտ գրեթե ոչինչ չի կարող փոխել այս կամ այն երկրի իմիջը նույնիսկ 20-30 տարվա մեջ»:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել Ռոբերտ Ջերվիսի դիտարկումները ևս [13, с. 6].

- երկրները՝ առանց փոխելու վարվող քաղաքականությունը, ունակ են ներազդելու այլ պետությունների վրա՝ սոսկ փոփոխելով իրենց իմիջը
- պետության՝ միջազգային հարաբերություններում իր նպատակներին դյուրին հասնելու գործում իմիջը կարող է լինել հիմնական գործոն
- անցանկալի իմիջի գինը պետության համար անչափ մեծ կարող է լինել:

Այսպիսով, ընդհանրացնելով վերն ասվածը՝ կարող ենք ամփոփել.

- «իմիջ» հասկացությունը պետք է կիրառվի բացառապես *ծրագրված ներգործության* և *նպատակաուղղված ձևավորման* նշանակությամբ,
- «ուրիշների» *(others)* մասին մարդկանց ընկալումները և պատկերացումները խիստ կայուն են շրջապատի հանկարծակի ճնշման հանդեպ,
- իմիջը բաղկացած է իմացական *(cognitive),* հուզական *(affective)* և արժևորման *(evaluative)* բաղադրիչներից,
- հարկավոր է տարբերակել երկրի իմիջ և ազգային/էթնիկ իմիջ հասկացությունները:

Վերջին կետի առնչությամբ հարկ է նշել, որ միջազգային հարաբերություններում իմիջի դերն ուսումնասիրելիս տարբեր հեղինակներ ընդգծում են «ինքնաիմիջ», «մեդիա-իմիջ», «արտաքին քաղաքական իմիջ», «աշխարհաքաղաքական իմիջ», «լիդերների իմիջ», «տարածքային իմիջ» հասկացությունների կարևորությունը: Սակայն դրանք կարելի է անվանել երկրի *ենթաիմիջներ*: Արևմտյան ուսումնասիրողներն այս խնդիրների շուրջ հիմնականում ընթացել են հետազոտությունների մի քանի ուղղություններով: Դրանցից առանձնացնենք երեքը, որտեղ երկրի իմիջը ներկայացվում է որպես.

- ***«ազդանշաններ»***, որոնք միմյանց են հղում միջազգային դերակատարները, այսինքն՝ մտադրությունների, շահերի և այլնի մասին կոդավորված տեղեկություններ (Օ.Հոլսթի, Ռ.Ջերվիս),
- ***«զտիչ»*** *(filtr)* արտաքին քաղաքական որոշումներ կայացնողների գիտակցության մեջ (Կ.Շիմկո, Մ.Կոտամ),
- ***ազգային ինքնության գործոն***, մասնավորապես, քաղաքական դիսկուրսի միջոցով ազգային իմիջ ձևավորելիս (Հ.Լարսեն):

Կարևոր է հավելել, որ այս բուն ***իմիջային*** մոտեցումից բացի երկրի իմիջը նաև ***մարքեթինգային*** *(Place Marketing)* և ***բրենդինգային*** *(Competitive Identity) հետազոտությունների առարկա է*[1]: Բայց դրանց դիտարկումը մեր խնդիրը չենք համարել:

Որպես ***իմիջի գործառույթներ*** գրականության մեջ հիմնականում ուրվագծվում են հետևյալները.

- ինքնության հաստատում
- իդեալականացում
- հակադրում:

[1] Տե՛ս *Peter van Ham,* The Rise of the Brand State: The Postmodern Politics of Image and Reputation, ինչպես նաև *Simon Anholt,* Countries Must Earn Better Images through Smart Policy.

Իսկ երկրի իմիջը միջազգային հարաբերություններում ի՞նչ դեր կարող է խաղալ, միջպետական հարաբերություններում ի՞նչ գործոն կարող է լինել: Երկրի իմիջի հետ անարդյունավետ աշխատանքի պարագայում ինչպիսի՞ հետևանքներ կունենանք: Թեև հոդվածի ձևաչափը թույլ չի տալիս մանրամասն պատասխանել բոլոր այս հարցերին, այնուամենայնիվ, փորձենք տալ դրանց պատասխանները:

Երկրի իմիջի դերն ընդհանրացնելով ընդգծենք, որ այն այսօր կարող է հանդես գալ որպես.

- միջպետական հարաբերությունների գործոն/գործիք,
- ռազմավարական հզորության մի մաս,
- ինքնության հաստատում, մերժում, կամ՝ կերտում,
- փոխազդեցության այլընտրանքային ուղի,
- ռեսուրս, որն ազդում է մեկ այլ ռեսուրսի՝ հանրային կարծիքի շնորհիվ,
- նպատակին հասնելու էժան միջոց,
- գաղափարախոսական հայեցակետ,
- փափուկ/խելամիտ ուժի կիրառում (*Soft/Smart Power*) [14],
- ներքին քաղաքականության շարունակություն,
- երկրի գրավչություն (*attraction*) և մրցակցային խնդիրներ լուծելու միջոց,
- ներդրումների և օգնության դիվանագիտության մաս (*Aid Diplomacy, Diplomacy of Deeds*):

Ուսումնասիրելով ԱՊՀ երկրների իմիջը միջազգային ԶԼՄ-ում՝ կարելի է նկատել, որ այն *ընդգրկում է՝*

ա) ցանկալի իմիջի պարամետրերը (ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, կայունություն և այլն),

բ) ներկայացնում է պատճառահետևանքային կապերը (իրադարձությունները մեկնաբանելիս),

գ) վերագրում է պատասխանատվությունը,

դ) տալիս է որոշակի գնահատական:

Իմիջի ձևավորման միջոցներն այդ լրատվամիջոցներում տարբեր են: Նշենք դրանցից մի քանիսը.

- լուրերի կառավարում *(news management),*
- օրակարգի ձևավորում *(agenda setting),*
- շրջանակների ձևավորում *(framing),*
- անվանում *(naming),*
- փաթեթավորում *(packaging),*

- դիսկուրս,
- իրադարձությունների կառավարում,
- «կեղծ» իրադարձություններ *(pseudo-events),*
- մանիպուլյացիա,
- ներկայություն/բացակայություն *(visibility, low or high profile),*
- ցցունություն *(saliency),*
- գաղափարների տարածում:

Այս առնչությամբ ներկայացնենք մեկ հարցազրույցի պատմություն, որը բավական ուսանելի է միջոցը ձևավորող վերոնշյալ միջոցների վերլուծության առումով: Այսպես, հատկանշական է, որ Հայաստանի իմիջի մասին Փոլ Գոբլի հետ իմ հարցազրույցում (Վաշինգտոն, 1998թ., նախատեսված չի եղել հրապարակման համար) իր առաջարկած Մեղրու միջանցքի գաղափարի նպատակի մասին իմ հարցին նա պատասխանեց, թե այն ձեզ՝ հայերիդ պետք է վարժեցներ փոխզիջման գաղափարին, իսկ Ղարաբաղը, նրա կարծիքով, հայկական հող է: Հետաքրքիր է, թե Գոբլը ինչպես անվանեց այդ գործընթացը: Նրա խոսքով՝ դա պետք է լինի Մեծ գործարք *(Great Deal, Great Bargain)*: Քանի որ նույն այս տեսքով նա գաղափարը շրջանառության մեջ էր դրել մամուլում, փորձենք այն վերլուծել երկրի իմիջի՝ մեր այս հոդվածում ներկայացված եզրահանգումներից և վերոշարադրյալ կետերից ելնելով:

Նախ, կարծում եմ՝ գործ ունենք, առաջին հերթին, այստեղ արդեն հիշատակված մեմետիկ կամ կոգնիտիվ վիրուսի հետ (փոխադարձ զիջման գաղափարի տեսքով): Բացի այդ, այն, թե ինչ անվանում ենք տալիս *(naming)* ենթադրյալ գործընթացին (այս դեպքում՝ *Great Deal, Great Bargain),* **երրորդ**, ինչ տեսքով ենք մատուցում, փաթեթավորում այն *(packaging),* իսկ հետո էլ, չորրորդ՝ փորձում կառավարել նորությունների գործընթացը *(news management)*, վերջապես՝ դառնում ենք օրակարգի *(agenda setting)* և դիսկուրսի նախաձեռնողը, դրանով միաժամանակ նպատակ ունենալով կառավարել լսարանի ընկալումները *(perception management)* և այսպես շարունակ, կարող է շատ անդրադառնալ երկրի համար կարևոր որոշումների ձևակերպման, հետապնդման և, վերջապես, ընդունման վրա: Եթե վերհիշենք, թե Գոբլի գաղափարն անցած տասնհինգ և ավելի տարիների ընթացքում ինչպիսի արդյունքի է հանգեցրել (զիջել/չզիջելու առումով), ապա պետք է արձանագրենք իմիջի ևս մեկ կարևոր առանձնահատկություն. կառավարվող իմիջները մոդելավորում են նաև իրականությունը:

Այդ նույն ամերիկյան որակյալ մամուլում *(Quality, Elite կամ Prestige Press)* 1991-2009 թվականների Հայաստանի իմիջի օրինակով ևս կարելի է արձանագրել (նշենք, որ հոդվածը նպատակ չունի մանրամասնել ՀՀ իմիջն ամե-

րիկյան մամուլում, որն առանձին թեմա է), որ մեդիա-իմիջը կարևոր գործոն է միջազգային և, մասնավորապես, միջպետական հարաբերություններում: Մեկ անգամ ևս հիշեցնենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է «Վաշինգտոն Փոստ», «Նյու Յորք թայմս» և «Ուոլ Սթրիթ Ջորնալ» լրագրերում Հայաստանի մասին այդ թվականներին հրապարակված բոլոր նյութերը, որի հիման վրա էլ կարող ենք ընդհանրացնել, որ լրատվամիջոցներում երկրի իմիջը կարևոր գործոն է ինչպես միջպետական հարաբերություններում, այնպես էլ գլոբալ քաղաքականության առումով: Երկրի մեդիա-իմիջը կարող է լինել, դառնալ կամ նշանակել հետևյալը.

- ազդանշան,
- սպառնալիք,
- նախազգուշացում,
- զոնդաժ,
- գնահատական,
- խրախուսում,
- օրակարգի կառավարում,
- լռության մատնում,
- վարկաբեկում,
- ներքին կյանքի գործընթացների կառավարում և այլն;

Երկրի իմիջի մասին դատողություններ անելիս կարևոր է նկատի ունենալ մի քանի հանգամանք ևս: *Նախ,* երկրի իմիջը ձևավորող դերակատարները տարբեր են՝ պետություններ, միջազգային կազմակերպություններ, կորպորացիաներ, շահագրգիռ խմբեր, ուղեղային կենտրոններ, մասնավոր միջնորդներ, անհատներ *(brokers),* ԶԼՄ, ակադեմիական շրջանակներ, մշակույթի գործիչներ, Սփյուռք (կուսակցություններ, կազմակերպություններ, համայնք), նաև՝ հատուկ ծառայություններ և այլն: *Երկրորդ,* որևէ երկրում առկա մեդիա-իմիջի վերլուծության, նոր իմիջի ճշգրտման կամ կերտման համար շատ կարևոր է իմանալ <u>*որոշումների ընդունման ճանապարհը*</u> տվյալ երկրում: *Երրորդ,* ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, այնպիսի փոքր երկրի մեդիա-իմիջը, ինչպիսին Հայաստանն է, ոչ միայն և ոչ այնքան զուտ ժուռնալիստիկայի արդյունքն է, որքան՝ միջպետական հարաբերությունների գործոն: *Չորրորդ,* այն կարող է լինել քարոզչության, լոբբինգի, *PR*-ի (այդ թվում միջազգային), հասարակական դիվանագիտության (մշակութային, մեդիա, մարզական, թանգարանային և այլն), բրենդինգի, հոգեբանական, տեղեկատվական պատերազմի/գործողությունների, նաև՝ հատուկ ծառայությունների միջամտության[1] և այլնի մասը կամ բաղադրիչը:

[1] Մասնավորապես տե՛ս *Boyd-Barret, Miller,* The New York Times, and the Propaganda Model.

Երկրի իմիջի կառուցվածքը մենք կառաջարկեինք ներկայացնել հետևյալ կերպ.

- միջուկ (էություն),
- շերտեր կամ ենթաիմիջներ (*sub-images*),
- թաղանթ (ներկա իրավիճակը, թեմաները, իրադարձությունները):

Նշենք մի քանի կարևոր նկատառում ևս, որոնք կարևոր են երկրի իմիջի վերլուծությունների, արտաքին քաղաքական կանխատեսումների համար: Հայաստանի իմիջի մեր նույն այդ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իմիջը գնահատելիս և քաղաքական կանխատեսումներ կատարելիս կարևոր է նկատել հետևյալ փոփոխությունների առկայությունը: *Նախ*, միանակա՞ն է արդյոք իմիջը, թե՞ երկատված (երկատվածության օրինակ է արդեն հիշատակված վաշինգտոնյան հարցազրույցը Փոլ Գոբլի հետ, երբ Հայաստանը նշվեց մի երկիր, որն ունի *ազնիվ անցյալ, խնդրահարույց ներկա՝ noble past, troubled present*): *Այնուհետև՝* իմիջի ո՞ր գծերը կամ բաղադրիչներն են անփոփոխ և որո՞նք՝ ոչ: Օրինակ, Հայոց ցեղասպանության հիշատակումները միշտ առկա են բոլոր հրապարակումներում, անկախ լուսաբանվող թեմայից (թեև *Genocide* բառը մինչև վերջին ժամանակներս չէր ընդունվում ամերիկյան որակյալ մամուլում): Ակնհայտ էր, որ նման մշտական ներկայությունը միջազգային քաղաքականությունում երբևէ որպես գործոն դառնալու վկայությունն էր և է, ինչն էլ ցույց տվեցին վերջին իրադարձությունները: *Հաջորդը*. հարկավոր է ուշադիր լինել՝ իրո՞ք փորձեր են արվում փոխելու իմիջի միջուկը (ինքնությունը), թե՞ դրանք վերաբերում են սոսկ ենթաիմիջներին (օրինակ՝ լիդերին) և կամ էլ՝ սոսկ իրադարձային են: *Վերջապես*, շատ կարևոր է մեկ հանգամանք ևս. թեմայի շուրջ հրապարակումներից և երկրի ներկայացվածության աստիճանի *(visibility)* փոփոխություններից բացի (երկրի մասին հրապարակումների թվի, նյութերի ծավալի, խմբագրականների, պատկերաշարի ավելացում և այլն), արդյոք միաժամանակ առկա՞ է այն, ինչը ես կանվանեի *զուգահեռ աջակցություն,* այն է՝

- երկրի և ժողովրդի մասին նյութեր նույն թերթի մարզական, մշակութային և այդօրինակ այլ էջերում,
- միջազգային և այլ կազմակերպությունների տարբեր զեկույցների հրապարակումներ, հայտարարություններ, երկրների ղեկավարների հեռախոսազրույցներ և այլն,
- զանազան սոցհարցումների արդյունքների հրապարակում,
- հասարակական դիվանագիտություն (մշակութային, մարզական, թանգարանային և այլ միջոցառումներ և իրադարձություններ, հայտնի մարդկանց մասնակցություն (*Celebrity diplomacy*):

ԶԼՄ-ում երկրի իմիջը գնահատելիս կարևոր է հաշվի առնել արևմտյան կամ՝ տվյալ երկրի լրագրողական չափորոշիչները *(Journalism standards)* և նորությունների արժեքները *(News values):* Չնայած փորձը ցույց է տալիս, որ *միջազգային ժուռնալիստիկայում ազգային շահերը* վեր են ամեն ինչից, այդ թվում և՝ օբյեկտիվությունից ու անաչառությունից: Տվյալ ԶԼՄ-ի պատկանելությունը, դասը (որակյալ մամուլ և այլն), էջը, ժամանակը (հեռուստատեսությունում), ժանրը, ծավալը, վերնագիրը, հղումները, աղբյուրները, լեզվական միջոցները, հեղինակներին, լուսանկարները, գծանկարները, քարտեզները և էլի մի քանի հանգամանքներ ևս շատ կարևոր են:

Ինչպես վերը նշեցինք, երկրի իմիջը միջազգային հարաբերություններում ունի իր *գինը* կամ *հետևանքները* ՝ բացասական կամ դրական: Ընդհանրացնելով՝ նշենք դրանցից մի քանիսը.

- վստահություն, համբավ, հեղինակություն,
- ոչ ճիշտ/սխալ որոշումների կայացում,
- մեկուսացում, ներդրումային ակտիվության նվազում,
- միջազգային տարբեր կազմակերպություններում ի վնաս Հայաստանի և Հայության ընդունվող որոշումներ,
- ազդեցություն երկրի ներքին գործընթացների վրա,
- ինքնագնահատման, ինքնաիմիջի փոփոխություն դեպի բացասական բևեռ,
- հասարակության «իմունային համակարգի անբավարարություն»,
- ազգային ինքնության, արժեքների փոփոխություն (երկարատև հեռանկարում) և այլն:

Այժմ կրկին փոքր պետությունների իմիջի առանձնահատկությունների մասին, արդեն հաշվի առնելով տեղեկատվության բաց հոսքերի հանգամանքը ժամանակակից աշխարհում: Ելնելով վերոշարադրյալ կետերից՝ ասենք, որ քանի որ նման պետությունների համար (այդ թվում՝ ֆինանսների պատճառով) մշտական դրական իմիջի ստեղծումը, ինչպես նաև հասարակության պաշտպանությունը այս կամ այն միջազգային դերակատարի կողմից ստեղծվող բացասական իմիջից հաճախ դժվար է, չափազանց կարևոր է դառնում մի բանի առկայությունը, ինչը կանվանեի *«արգելապատնեշ»:* Այն թույլ կտար պաշտպանել ազգի և հասարակության «իմունային համակարգը»: Նման արգելապատնեշի ստեղծման ռեսուրսները, կարելի է ասել, «մեր ձեռքի տակ են».

- ինքնություն,
- սեփական օրակարգ, իմաստներ, խորհրդանիշեր,
- *ռազմավարական հաղորդակցության* պլանի մշակում կարևորագույն ազգային խնդիրների գծով,
- ոչ թե տեղեկատվության վերահսկողություն, այլ կառավարում,

- կրթյալ հասարակություն,
- պատմագրության, հայագիտության զարգացում և պաշտպանություն և այլն:

Բայց ամենակարևորը ձևակերպված ազգային շահեր, հանրային վստահություն, իշխանության անթերի լեգիտիմություն ունենալն է, արդարության առկայությունը, մի խոսքով՝ *անհրաժեշտ է լինել, այլ ոչ թե թվալ:*

Իրավիճակային հետազոտություն (Case Study). Թուրքիա-Հայաստան (ֆուտբոլային դիվանագիտություն)

Հենվելով հոդվածում ներկայացված նյութերի և հիմնական գաղափարների վրա՝ կունենանք գործընթացի զարգացման առանձնահատկությունների հետևյալ մոտավոր պատկերը.

- գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումների մաս,
- ընկալումների կառավարում,
- ինքնությունների փոփոխությանն ուղղված ջանքեր,
- վերբալ, տեսողական, իրադարձային բաղադրիչներ,
- աշխատանք խմբերի հետ (Բրաուն) [9, с. 733]:

Թուրքիա

ա) ԱՄՆ-ում, ԵՄ-ում և այլ երկրներում (ընկալումների կառավարման գործընթաց)

- Ցեղասպանության ճանաչման գործընթաց (ԱՄՆ, Կոնգրես, նահանգներ, այլ երկրներ),
- հասարակական դիվանագիտություն *(track 2)* [15],
- հասարակական դիվանագիտություն, ոչ պաշտոնական շփումներ *(TARC* և այլն),
- բանկային ավանդների վերադարձում,
- դեսպաններ (Էվանսին հետ կանչելը, Հոգլանդին չհաստատելը),
- Կոնգրեսի լսումների ուղիղ հեռարձակում,
- հասարակական դիվանագիտություն (մշակութային/կրթական/ակադեմիական բաղադրիչը և այլն),
- Փիթըր Բալաքյանի և այլոց գրքերը,
- «Արարատը» և այլ կինոնկարներ,
- *«System of a Down»* խումբ,
- *Լրատվամիջոցներում G word-ի նոր քաղաքականություն,*
- փոփոխություններ դասագրքերում,
- Օրհան Փամուկ (Նոբելյան մրցանակ) և այլք,

- Հայոց ցեղասպանության թանգարան Վաշինգտոնում,
- դուդուկ և այլն,
- ֆուտբոլային դիվանագիտություն:

բ) Բուն Թուրքիայում («նոր քաղաքականություն», վստահության ֆաբրիկացիա, իմիջը փոխելու ճիգեր, ինչպես նաև՝ հայերի միջև բաժանարար գծերի ստեղծման ջանքեր)

- Ցեղասպանության ժխտում (եղել է տեղահանություն, բայց ոչ Ցեղասպանություն),
- զոհի կերպարով ներկայանալը (զոհեր եղել են երկու կողմից),
- Ցեղասպանության համար պատասխանատվությունից խուսափում («ռազմական դրություն էր»),
- Հրանտ Դինք,
- Բոլորս հայ ենք (ապրումակցում, *Empathy*), ինչպես նաև «մենք-նրանք»-ի սահմանները վերացնելու փորձեր,
- Ներեցեք մեզ, հայեր (ֆրագմենտացիա, ամբողջի փոխարինում հասարակության մի մասով, ինչպես նաև հուզականության կառուցում և դրանից դուրս գալու ելքի ցուցադրում),
- Էրգենեքոն, գործընթացի «թեր» և «դեմ» կողմեր,
- իբր հակադրություն Ադրբեջանի հետ,
- Ադրբեջանի կրկնվող սպառնալիքներ,
- ծպտյալ հայեր,
- լուրերի արտահոսք (իբր Գյուլի մայրը հայ է և այլն),
- Թուրքիայում հայերի ավանդի մատնանշում,
- Աղթամար եկեղեցու և մի շարք այլ հուշարձանների վերականգնում,
- «մենք լսում ենք նույն երաժշտությունը»,
- Եվրատեսիլ երգի մրցույթ (Թուրքիայի քվեարկությունը),
- դրոշների «պատերազմ» և այլն,
- հարաբերությունների կարգավորումը Ղարաբաղյան գործընթացի հետ կապելու փորձեր և այլն:

Հայաստան
(սեփական օրակարգի բացակայություն և քաոս տեղեկատվական դաշտում. ընթանում ենք հոսանքի ուղղությամբ)

- հանրային գիտակցությունը պաշտպանված չէ,
- հղումներ միջազգային հանրությանը, ԶԼՄ-ին, հեղինակություններին՝ սեփական քաղաքականությանն աջակցելու համար,

- Հայաստանի ներկայացում որպես «փոքր երկիր», հիշատակումներ փակ ճանապարհների, զարգացման դժվարությունների և այլնի մասին,
- քաղաքական դաշտի վերաձևման փորձեր երկրի ներսում. 2012թ. նախագահական ընտրությունների նախապատրաստություն (առանձին քաղաքական ուժերի վարկաբեկում և այլն),
- հասարակության ներսում կապերի և արժեքների համակարգը փոխելու փորձեր (գրոհելու փորձեր ինքնության վրա),
- պատմության որոշ «պահերը», մշակույթը, գործիչներին վերաքննելու փորձեր,
- ազգայնականության քննադատություն,
- խորհրդանիշերը փոխելու փորձեր,
- Հայաստան-Սփյուռք լարվածության առաջացում,
- Թուրքիա-Ադրբեջան «հակասությունների» անընդհատ մատնանշում
- պահանջատերը Սփյուռքն է (*Recognition, Restitution*),
- *Celebrity Diplomacy* (Շառլ Ազնավուր) և այլն:

Հունվար, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Այվազյան Լիանա,* Ժողովրդավարություն, մամուլ, արտաքին քաղաքականություն. Հայաստանի իմիջը ամերիկյան մամուլում: Ժողովրդավարության զարգացումը Հայաստանում, Սեմինարի նյութեր. Երևան, 1999:
2. *Taylor Philip M.*, Munitions of the Mind. A History of Propaganda from the Ancient World to the Present Day. Manchester University Press, 1995.
3. *Taylor Philip M.*, Global Communication, International affairs and the Media since 1945. Routledge, 1997.
4. *Judith A. McHale* (U.S. Under Secretary for Public Diplomacy and Public Affairs), Remarks to Vilnius University, December 11, 2009
5. *Cooper Robert*, The Breaking of Nations.Order and Chaos in the Twenty-First Century. Grove Press, New York, 2003.
6. *Kunczik Michael*, Images of Nations and International Public Relations. Lawrence Erlbaum Associates, Publishers. Mahwah, New Jersey, 1997.
7. Metaphors and Modern War: Biological, Computer and Cognitive Viruses.
8. *Nye Jr. Joseph S.*, The Information Revolution and American Soft Power, *Asia-Pacific Review*, Vol. 9, No. 1, 2002.
9. *Почепцов Г.Г.,* Имиджелогия. Рефл-бук, 2000.
10. *Boulding, Kenneth,* National Image and International System. In James N. Rosenau (Ed.) International Politics and Foreign Policy (422-431). London: Collier Macmillan Inc., 1969.
11. Политическая Имиджелогия. М., Аспект Пресс, 2006.

12. *Галумов Э.А.,* Имидж России в качестве инструментального подхода.
13. *Jervis Robert,* The Logic of Images in International Relations. Columbia University Press. A Morningside Book, 1970.
14. *Joseph S. Nye, Jr., Get Smart:* Combining Hard and Soft Power, *Foreign Affairs,* July/ August, p. 160.
15. United States – Armenia Relationship, 1991-2007: A Conversation with Our First Five Ambassadors Webcast (Library of Congress).
16. *Лиана Айвазян,* Имидж России в СМИ Армении. Политическая Экспертиза (ПОЛИТЕКС), #3, 2007 (Доклад, Конференция «Политическая наука и политические процессы в РФ и в странах СНГ на постсоветском пространстве», Евразийская Сеть Политических Исследований, Москва http://www.politex.info/content/view/370/30/
17. *Tehranian Majid*, Global Communication and International Relations: Changing Paradigms and Policies. The International Journal of Peace Studies, Vol 2_1.
18. *Manheim Jarol B.*, Strategic Public Diplomacy and American Foreign Policy: The Evolution of Influence. New York, Oxford. Oxford University Press, 1994.
19. *Boyd-Barrett Oliver,* Judith Miller, The New York Times, and the Propaganda Model. Journalism Studies, Vol.5, Number 4, 2004, p. 435-449.
20. *Fisher Ali,* Music for the Jilted Generation: Open-Source Public Diplomacy. The Hague Journal of Diplomacy 3 (2008), 1-24.
21. *Peter van Ham,* The Rise of the Brand State:The Postmodern Politics of Image and Reputation (in Phil Taylor's Web Site).
22. *Simon Anholt:* Countries Must Earn Better Images through Smart Policy. Interviewee: Simon Anholt, Editor, Nation Branding and Public Diplomacy. November 6, 2007 Council of Foreign Relations (www.cfr.org).
23. *Хаас Ричард*, Эпоха бесполярного мира // Россия в глобальной политике, #4, 2008.
24. *Haas Richard,* Learning from the Cold War, Project Syndicate (www.project-syndicate.org).
25. *Най Джозеф,* «Мягкая» сила и американо-европейские отношения. «Свободная мысль – XXI», №10, 2004.
26. *Jervis Robert,* Perceptions and Misperception in International Relations. Princeton University Press. Princeton, New Jersey, 1976.
27. *Кашлев Ю., Галумов Э.,* Информация и ПР в международных отношениях. Москва, Известия, 2003.
28. *Информация, Дипломатия, Психология.* Дипломатическая Академия России. М., Известия, 2002.

ИМИДЖ СТРАНЫ И МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ: АТМОСФЕРА XXI ВЕКА

Лианна Айвазян

Резюме

Имидж страны могут сформировать различные акторы – государства, международные организации, корпорации, заинтересованные группы, мозговые центры, частные посредники, СМИ, академические круги, деятели культуры, Диаспора (партии, организации, община), спецслужбы и пр. Причем для анализа существующего медиа-имиджа, корректировки или построения нового имиджа в той или иной стране очень важно знать цикл принятия решений в этой стране.

Кроме того, нужно учесть, что медиа-имидж таких стран, как Армения, – это не только и не столько продукт чистой журналистики. Он может быть частью или составляющей пропаганды; лоббинга; пиара (в том числе, международного); публичной дипломатии (культурной, медиа, спортивной, музейной и т.д.); брендинга; психологической, информационной войны/действий; вмешательства спецслужб и пр.

Поскольку для небольших государств создание постоянного положительного имиджа (в том числе, из-за финансов), равно как и защита нашего общества от создаваемого тем или иным международным актором отрицательного имиджа (в условиях открытости информационных потоков), зачастую затруднено, крайне важным становится наличие того, что можно назвать ***«барьером»,*** который позволил бы защитить «иммунную систему» нации и общества.

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սևակ Սարուխանյան[*]

Էներգետիկ անվտանգությունը մշտապես հանգուցային տեղ է զբաղեցրել Հայաստանի ազգային անվտանգության համակարգում: Դա պայմանավորված էր նրանով, որ էներգետիկ ոլորտն առավել շատ էր տուժել Խորհրդային Միության փլուզումից: ԼՂՀ շուրջ ծագած հակամարտությունը հանգեցրեց Ադրբեջանի տարածքով էներգակիրների մատակարարումների դադարեցմանը, և 1990-ականների սկզբից այդ մատակարարումների միակ ճանապարհը դարձավ քաղաքական ճգնաժամ ապրող Վրաստանը[1]: Հոդվածը նվիրված է վերոնշյալ պայմաններում Հայաստանի էներգետիկ ապահովման և նոր էներգաբլոկի կառուցման վերաբերյալ հարցերի ուսումնասիրությանը:

1. Էներգետիկ ոլորտի ընդհանուր վիճակը

Հայաստանի էներգետիկ համակարգն արդեն 1980-ական թթ. վերջին, դեռ ԽՍՀՄ կազմում, զլոբալ փոփոխություն էր կրել. 1989թ., հիմնականում հանրության ճնշմամբ[2], Խորհրդային Հայաստանի իշխանությունները որոշում ընդունեցին Մեծամորի Հայկական ԱԷԿ-ի գործող երկու էներգաբլոկները փակելու մասին: 1970-ականների երկրորդ կեսին կառուցված կայանը, որն ուներ *WWER*-440 երկու ռեակտոր, այն ժամանակ ապահովում էր Հայաստանի տնտեսության և բնակչության սպառած էլեկտրականության մոտ 80%-ի արտադրությունը: Կարևոր այս բլոկների փակումը հանգեցրեց էներգետիկ ճյու-

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փոխտնօրեն, Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, քաղաքական գիտությունների թեկնածու:

[1] Խորհրդային ժամանակներում Հայաստան էր մտնում 5 գազատար, երկուսը՝ Վրաստանից, երեքը՝ Ադրբեջանից: ՀԽՍՀ-ն վերջիններիս միջոցով ստանում էր իրեն անհրաժեշտ բնական գազի մոտ 60%-ը: 1993-ից հետո, մինչև 2009 թվականը գազի ներմուծման վրացական երթուղին միակն էր Հայաստանի համար:

[2] 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո մտավորականության շատ ներկայացուցիչներ և անկախության համար պայքարի նոր սկսվող շարժման առաջնորդները սկսեցին հանրային գիտակցության մեջ ակտիվորեն ներմուծել այն համոզվածությունը, թե Մեծամորի ԱԷԿ-ը էկոլոգիական սպառնալիք է ներկայացնում երկրի համար, և նրա հետագա գործունեությունը Հայաստանը կկանգնեցնի անհետացման սպառնալիքի առջև: Ընդ որում, փորձագիտական և մասնագիտական ոչ մի գնահատական ԱԷԿ-ը փակելուց առաջ չի արվել, իսկ երկու էներգաբլոկների գործունեությունը դադարեցնելու մասին որոշումն ավելի շուտ քաղաքական էր:

դի կառուցվածքային փոփոխության, իսկ էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական ծանրությունն ընկավ ջերմաէլեկտրակայանների վրա: ԽՍՀՄ տարբեր մասերից բնական գազի և մազութի կայուն մատակարարումների պայմաններում հայկական խոշոր ՋԷԿ-երը՝ Հրազդանի և Երևանի ՋԷԿ-երը, կարողացան ապահովել Հայաստանի էներգետիկ համակարգի կայունությունը: Սակայն Ադրբեջանի տարածքով բնական գազի մատակարարումների դադարեցմամբ, Վրաստանի տարածքով անցնող գազատարի կայուն գործունեության խախտմամբ և Ռուսաստանը Վրաստանի ու Հայաստանի հետ կապող և Աբխազիայի տարածքով անցնող երկաթուղու գործունեության դադարեցմամբ Հայաստանի էներգետիկ համակարգը հայտնվեց կոլապսի վիճակում: Դրա արդյունքը դարձավ 1992-1994թթ. էներգետիկ ճգնաժամը, երբ էներգետիկ հզորություններն արտադրում էին Հայաստանի տնտեսությանն ու բնակչությանն անհրաժեշտ էլեկտրաէներգիայի 10-15%-ը:

Էներգետիկ ճգնաժամի պայմաններում ռացիոնալիզմը և պրագմատիզմը, որոնք անկախության համար պայքարի աճին զուգընթաց, դադարեցին որևէ էական դեր խաղալ Հայաստանի քաղաքական գործընթացներում (ինչի արդյունքն էլ դարձավ ԱԷԿ-ի և էկոլոգիապես վտանգավոր ներկայացվող քիմիական գործարանների փակումը), դարձան Երրորդ Հանրապետության քաղաքական որոշումների ընդունման գործընթացի գործոն: Հայաստանի տնտեսության կառուցվածքում հիմնարար փոփոխություններն էներգետիկ ճյուղից սկսվեցին գլխավորապես 1992-1994թթ. ճգնաժամի պատճառով:

Այդօրինակ փոփոխությունների կարևոր բաղկացուցիչներ դարձան.

1. ՀՀ կառավարության 1993թ. ապրիլի 7-ի որոշումը «Հայկական ԱԷԿ-ի վերականգնման աշխատանքներն սկսելու և երկրորդ էներգաբլոկի շահագործումը վերսկսելու մասին»[1]:
2. ՀՀ կառավարության 1997թ. սեպտեմբերի 9-ի որոշումը ռուս-հայկական «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ստեղծելու մասին: Ընկերությունն ստեղծվեց գազամատակարարման ծավալների ավելացման, տեղական գազատարների շինարարության, էլեկտրաէներգիայի արտադրության և ռուսական գազի տարանցման նպատակով: Բայց ընկերության ամենակարևոր խնդիրները դարձան ՀՀ և ԼՂՀ էներգետիկ ենթակառուցվածքի վերականգնումը և բնական գազի ներմուծումը գործող միակ՝ Վրաստանի տարածքով անցնող գազատարով:

[1] Առաջին էներգաբլոկը վերականգնման ենթակա չէ հիմնականում այն պատճառով, որ ԱԷԿ-ի փակվելուց հետո 4 տարվա ընթացքում այս էներգաբլոկի սարքավորումների մեծ մասն ապամոնտաժվել է ամենատարբեր նպատակներով:

ՀՀ կառավարության որոշումը հայ-ռուսական համատեղ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ստեղծման մասին, որում ռուսական «Գազպրոմի» բաժինը տարիների ընթացքում 45-ից հասցվեց 80%-ի, կարևոր իրադարձություն էր հայկական էներգետիկայի համար: Անցած տարիներին ընկերությունը կարողացավ հասնել «Գազպրոմի» կողմից սուբսիդավորվող գնային ցածր ռեժիմի, ինչը հայկական տնտեսությանը հնարավորություն տվեց արագ վերականգնվել արտաշուկայական ռեժիմով: Ընկերությունը մոտ $1 մլրդ ներդրեց Հայաստանի գազատրանսպորտային համակարգի վերականգնման, նոր տեղական գազատարների, ինչպես նաև Իրան-Հայաստան գազատարի հայկական հատվածի շինարարության գործում, որն այլընտրանք ստեղծեց վրացական երթուղով Հայաստան ներմուծվող բնական գազի համար:

Էներգետիկ համակարգի կայունության հարցը 1990-ական թթ. սկզբի ճգնաժամից հետո կարևոր տեղ է զբաղեցնում երկրի ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունում, ինչի արտահայտությունն է դրա առանձնահատուկ տեղը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում»[1]: Այստեղ, որպես Հայաստանի էներգետիկ անկախությունն ապահովող գործոն, նշված են հայ-ռուսական հարաբերությունները, ինչն, ըստ էության, արտացոլում է հայ-ռուսական էներգետիկ համագործակցության ռազմավարական և երկարատև բնույթը:

Այսօր Հայաստանի համար, որն էլեկտրաէներգիա արտահանող միակ տարածաշրջանային երկիրն է, ռազմավարական նշանակություն ունի էներգիա արտադրող նոր հզորությունների շինարարությունը, որոնք պետք է ապահովեն համակարգի կայունությունը 2016թ. Հայկական ԱԷԿ-ի փակվելուց հետո և ավելացնեն էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները: Դրանց թվում են [1, էջ 23].

1. Հայկական ԱԷԿ-ի ավելի քան 1000 մվտ հզորությամբ նոր էներգաբլոկի շինարարությունը:
2. Հրազդանի ՋԷԿ-ի 440 մվտ հզորությամբ էներգաբլոկի կառուցումը[2]:
3. Ավելի քան 200 մվտ հզորությամբ նոր գազատուրբինային սարքավորման տեղադրումը Երևանի ՋԷԿ-ում[3]:
4. 1100 մվտ հզորությամբ նոր ՀԷԿ-երի կառուցումը:
5. Ավելի քան 200 մվտ ընդհանուր հզորությամբ հողմային էներգակայանների կառուցումը:

---

[1] «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» հաստատվել է 2007թ. հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Անվտանգության խորհրդի և ստորագրվել ՀՀ նախագահի կողմից:

[2] Աշխատանքները կավարտվեն 2010թ. կեսին:

[3] Աշխատանքները կավարտվեն 2010թ. վերջին:

Հայաստանի համար կարևոր իրադարձություն է Իրան-Հայաստան գազատարի շինարարությունը, որը կարող է ՀՀ-ն ապահովել տարեկան մինչև 2,3 մլրդ $մ^3$ ծավալի բնական գազի մատակարարումներով, ինչը մոտավորապես հավասար է երկրի տարեկան սպառմանը: Չնայած Հայաստանն այսօր, Վրաստանի տարածքով անցնող գազատարի կայուն աշխատանքի պայմաններում, Իրանի գազի կարիքը չունի, իսկ այդ գազատարով եկող գազը կօգտագործվի էլեկտրականություն արտադրելու և Իրան արտահանելու համար, Հայաստան ռուսական գազի մատակարարումների հետ կապված ֆորս-մաժորային իրավիճակի դեպքում այս խողովակաշարը կարող է ապահովել հայկական տնտեսության կայուն գործառնությունը: Իրան-Հայաստան գազատարը սրանով իսկ ռուսական գազի այլընտրանքը չի հանդիսանում այնքան ժամանակ, քանի դեռ ռուսական գազը կայուն ռեժիմով մատակարարվում է Հայաստանին:

Չնայած Հայաստանի էներգետիկ ճյուղն անցած տարիներին ամրապնդվել է և երկրում ստեղծվել են նրա կայունությունն ապահովող մեխանիզմներ, այն առաջիկա տարիներին ստիպված կլինի լուծել կարևոր ռազմավարական խնդիր. Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությունը:

2. Ատոմային էներգետիկայի կարևորությունը և նոր էներգաբլոկի նախագիծը

1995թ. Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի վերագործարկումը լուծեց բնակչությանը և տնտեսությանն էլեկտրաէներգիայով ապահովելու հարցը: Հետագայում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն կարողացավ հասնել Հայաստան բնական գազի մատակարարման կայունության, ինչը բարձրացրեց երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը: Սակայն, չնայած հայկական ՋԷԿ-երի և խոշորագույն՝ Որոտանի ՀԷԿ-ի[1] աշխատանքի կայունությանը, ատոմային էներգետիկան, արտադրելով Հայաստանի ողջ էլեկտրականության մոտ 40%-ը, առ այսօր հայկական էլեկտրաէներգետիկայի հիմքն է մնում:

Հայկական ԱԷԿ-ի վերագործարկման հենց սկզբից եվրոպական շատ երկրներ, իսկ հետո նաև ԵՄ-ը, մտահոգություն հայտնեցին դրա անվտանգության հետ կապված, քանի որ Մեծամորի կայանի միջուկային ռեակտորը փաստորեն միակն է, որը վերագործարկվել է լրիվ կոնսերվացումից հետո: 1990-ականների վերջից Հայկական ԱԷԿ-ը կրկին փակելու հարցը կարևոր տեղ էր գրավում եվրոպական մայրաքաղաքների հետ Երևանի հարաբերություններում: 2003թ. ՀՀ կառավարությունը, ջանալով ապահովել ԱԷԿ-ի համար անհրաժեշտ միջուկային վառելիքի մատակարարումների կայունությունը, ինչպես նաև սարքավորումների և կայանի անվտանգության մշտական մասնագիտական հոգածությունը, այն հանձնեց «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ»-ի

[1] Ապահովում է երկրում էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 8%-ը:

վստահված կառավարմանը: Չնայած ահա արդեն մոտ 7 տարի Հայկական ԱԷԿ-ի անվտանգության համար պատասխանատու է ռուսական այս խոշոր ընկերությունը, ԵՄ՝ անվտանգության նկատառումներից ելնելով կայանը փակելու մշտական պահանջները չեն դադարում:

2007թ. «Եվրոատոմը» պաշտոնական բանակցություններ սկսեց Հայաստանի էներգետիկայի նախարարության հետ կայանը փակելու մեխանիզմների որոնման շուրջ, սակայն բանակցությունների տեխնիկական ձևաչափը չկարողացավ լուծել ամենագլխավոր խնդիրը. ի՞նչ կստանա Հայաստանը կայանը փակելու դիմաց: Խոսքն այլընտրանքային ջերմա-, հիդրո- և միջուկային էներգիա արտադրող հզորությունների մասին է: Ոչ «Եվրոատոմի», ոչ ԵՄ-ի կողմից հայկական կողմին այլընտրանքային հզորությունների շինարարության ֆինանսավորման իրական առաջարկություններ չեն արվել: Եվրոպական կողմը Հայաստանին առավելագույնն իր աջակցությունն է առաջարկել, որը Երևանում, «Հայաստան-ԵՄ» համագործակցության հանձնաժողովի 6-րդ նիստի ժամանակ հնչեցրեց Եվրահանձնաժողովի՝ Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ արտաքին կապերի գլխավոր վարչության պետ Հյուգ Մինգարելին. «Եթե Հայաստանի կառավարությունն ամենակարճ ժամկետում Հայկական ԱԷԿ-ը փակելու քայլեր ձեռնարկի, ապա Եվրամիությունը կանցկացնի դոնոր երկրների միջազգային կոնֆերանս՝ դրա համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակով» [2]: Խոսքը, փաստորեն, բացառապես կայանի անվտանգ փակման աշխատանքների ֆինանսավորման մասին է:

Այնինչ, հայկական կողմն արդեն 2005թ. նախագահի և վարչապետի մակարդակով հայտարարել էր, որ գործող ռեակտորի փակման միակ այլընտրանքը կլինի նորի կառուցումը: Հայաստանի նման դիրքորոշումն արժանացավ ԵՄ քննադատությանը, սակայն եվրոպական կառույցների՝ այլ նախագծեր առաջարկելուն և դրանք ֆինանսավորելուն պատրաստ չլինելը հանգեցրեց այն բանին, որ փոխվեց եվրոպական դիրքորոշումը նոր ռեակտորի հանդեպ: 2006թ. վերջին Վրաստանում և Հայաստանում Եվրահանձնաժողովի դեսպան Թորբեն Հոլցեն արդարացի համարեց գործող ռեակտորի փոխարեն նորը կառուցելու ցանկությունը [3]:

Չի բացառվում, որ նոր էներգաբլոկի վերաբերյալ եվրոպական քաղաքականությունը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանը հնարավորություն ունի ստեղծել միջուկայինին համարժեք ջերմաէներգետիկ հզորություններ: 2010թ. շահագործման կհանձնվի Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ բլոկը, որը գրեթե նույն հզորությունն ունի, ինչ փակման ենթակա միջուկային էներգաբլոկն իր *WWER-440* ռեակտորով: Բացի այդ, Հայաստանում իրագործվում են մի շարք այլ նախագծեր, որոնք կարող են կոմպենսացնել ԱԷԿ-ի փակումը,

որոնց թվում է փոքր և մեծ հէկերի կառուցումը. վերջիններից ամենամեծը Արաքսի վրա կկառուցվի Հայաստանի և Իրանի կողմից՝ մինչև 400 մվտ հզորությամբ:

Սակայն ատոմային էներգետիկ ռեակտորի առկայության խնդիրը Հայաստանի համար զուտ տեխնիկական չէ: Այն կապված է երկու կարևոր գործոնի հետ.

1. ***Իրադրությունը տարածաշրջանում.*** ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում ծայր առած էներգետիկ ճգնաժամը ցույց տվեց, որ էներգետիկ համակարգի կոլապսը կարող է վրա հասնել ոչ թե էլեկտրականություն արտադրող հզորությունների բացակայության, այլ էներգակիրների ներմուծման անհնարինության պատճառով: Բնական գազը, որը միջուկային վառելիքից հետո նշանակությամբ երկրորդ էներգետիկ հումքն է Հայաստանի համար, երկիր է ներմուծվում անկայուն Վրաստանի տարածքով, որտեղ անկայունության նոր ալիքի սկսվելու ռիսկը շատ բարձր է, և Իրանից, որը վաղը կամ մյուս օրը տարածաշրջանային հակամարտությունների նոր կենտրոն դառնալու «հնարավորություններ» ունի: Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանների պայմաններում Հայաստանը, փաստորեն, կախված վիճակում է գտնվում Վրաստանում իրերի դրությունից և Իրանի իրավիճակից: Իսկ Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման պարագայում չի կարելի սպասել, թե Երևանի հետ երկարատև կոնֆլիկտից հետո այդ երկու երկրները կարճ և նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում կարող են հուսալի էներգետիկ գործընկերներ դառնալ: Եթե վաղը բնական գազն անհնար լինի ստանալ ոչ հարավից, ոչ հյուսիսից, Հայաստանը, ԱԷԿ-ի բացակայության դեպքում, կհայտնվի այնպիսի ճգնաժամի մեջ, որն ունեցավ 1993-1995թթ.: Ուստի, նոր ռեակտորի շինարարությունը, որի համար վառելիքի ստացումը կախված չէ Վրաստանի կամ Իրանի տարանցման քաղաքականությունից, Հայաստանի համար առանձնահատուկ կարևորություն ունի:
2. ***Էներգետիկ բիզնես.*** Այսօր արդեն Հայաստանն արտադրում է էլեկտրաէներգիայի այնպիսի ծավալ, որը գերազանցում է իր պահանջարկը: 10 տարվա ընթացքում Վրաստան էլեկտրաէներգիայի արտահանումը հայկական կողմին, ճիշտ է՝ ոչ մեծ, բայց, այնուամենայնիվ, եկամուտ է բերում և մասամբ շահագրգռում վրացական կողմին՝ լավ հարաբերություններ պահպանել Հայաստանի հետ: Հայ-թուրքական սահմանի բացմամբ Երևանը հնարավորություն կունենա դուրս գալ Թուրքիայի էլեկտրաէներգետիկ շուկա, որի արևելյան գավառները էլեկտրականության մեծ պակաս ունեն, իսկ որոշ մասեր նոր-նոր են սկսում էլեկտրիֆիկացվել: Ակնհայտ է,

որ երբ *WWER*-440 ռեակտորի փոխարեն Հայաստանում հայտնվի նոր, հինգ ավելի քան երկու անգամ հզոր ռեակտորը, Հայաստանի էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունները կտրուկ կաճեն: Այս տեսակետից նոր ռեակտորը երկրի և նրա այն գործընկերների համար, որոնք ներդրումներ կանեն նոր կայանի շինարարությունում, կարող է լավ բիզնես-նախագիծ դառնալ: Այսինքն՝ զուտ տնտեսական տեսակետից նոր ռեակտորը կողմնորոշված կլինի հայ-թուրքական սահմանի բացմանը[1]:

Հայկական կողմը նոր ԱԷԿ-ի կառուցման հարցն իրավաբանորեն ներկայացրել է խորհրդարանի քննարկմանը, որը 2009թ. հոկտեմբերի 27-ին երրորդ վերջնական ընթերցմամբ ընդունեց 1200 մվտ հզորությամբ նոր էներգաբլոկի կառուցումը թույլատրող՝ «Հայաստանում նոր ատոմային էներգաբլոկի շինարարության մասին» օրինագիծը:

Հայկական կողմի համար մինչև վերջին ժամանակներս ամենամեծ խնդիրը կարելի էր համարել նոր էներգաբլոկի շինարարության համար ներդրողներ գտնելը: Ֆինանսավորման հնարավոր աղբյուրների քննարկումների հենց սկզբից նշվում էին ամենատարբեր երկրներ և կազմակերպություններ. ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Վերակառուցման և զարգացման ասիական բանկ և այլն: Հայաստանի վարչապետն այս առնչությամբ ասել է. «Շատ լուրջ հետաքրքրվածություն կա այս նախագծով: Ընդհանրապես, աշխարհում ատոմային կայանների շինարարությունը սահմանափակ է, 10 տարվա ռեակտորներն արդեն ռեզերվացված են, այդ թվում և Ռուսաստանում: Հայտնի է՝ որտեղ և ով է կառուցում, իսկ ներդրումներին մասնակցել ցանկացողները շատ շատ են, հատկապես այսօր, երբ շատ ներդրողներ փող ունեն և չգիտեն ինչ նախագծերում ներդնեն»[2]:

Սակայն իրական հարթությունում Հայաստանի ատոմային նախագծի հանդեպ Ռուսաստանից բացի որևէ երկիր ոչ մի նկատելի հետաքրքրություն չի հայտնել: Դա կապված է այն բանի հետ, որ այսօր նոր էներգաբլոկի շուրջ տեսանելի բիզնես-հետաքրքրություն չի առաջացել. հայ-թուրքական սահմանի բացման հարցը դեռ լուծված չէ, հայտնի չէ հայկական կողմի ֆինանսավորման իրական չափը, ինչպես նաև այն աղբյուրները, որոնցից Հայաստանը կֆինանսավորի այդ բաժինը, մինչև վերջ ճշգրտված չեն այլ ռիսկեր ևս: Նախագծի հանդեպ նվազ հետաքրքրվածության մեջ պակաս կարևոր դեր չի ունեցել նաև այն, որ հայկական կողմը որոնում է ինչպես շինարարության ներդրողին, այնպես էլ այն ընկերությանը, որը կկառուցի կայանը՝ փա-

[1] Ավելի շուտ սրանով կարելի է բացատրել թուրքական կողմին կայանի շինարարությանը մասնակցելու հրավերը, որն արել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը 2009թ. գարնանը:
[2] «Առկա» լրատվական գործակալություն, 2009թ. հոկտեմբերի 19:

տորեն, միայն շինհրապարակը տրամադրելով: Այս պայմաններում ներդրող ներգրավել հնարավոր է միայն երկու ճանապարհով.

- ցույց տալով, որ նրա ներդրումները համեմատաբար արագ կփոխհատուցվեն, և համեմատաբար ոչ հեռու ապագայում հնարավոր կլինի եկամուտ ստանալ,
- օգտագործելով նախագծի ոչ թե տնտեսական, այլ քաղաքական նշանակությունը, մի կողմ թողնելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ակնհայտ ծախսածածկումն ու մեծ եկամուտները:

Ամենայն համոզվածությամբ կարելի է ասել, որ հայկական կողմը հաջողություն է ձեռք բերել երկրորդ մասով, քանի որ առաջին մասով ակնհայտ փաստարկներ չկան: Նոր էներգաբլոկի կառուցման ֆինանսավորման հարցի լուծմանն ակնհայտորեն նպաստեցին ռուս-հայկական հարաբերությունները և Ռուսաստանի՝ տարածաշրջանի էներգետիկ շուկայում սեփական դիրքերն ամրապնդելու ռազմավարական հետաքրքրվածությունը: Խոսքն այստեղ միայն Հայաստանի մասին չէ, այլ նաև Թուրքիայի և Իրանի, ուր հետագայում կարող է արտահանվել Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկում արտադրված էլեկտրաէներգիան: Հայաստանն այսօր միակ տարածաշրջանային երկիրն է, որն այդպիսի արտահանման պոտենցիալ ունի: Նոր էներգաբլոկի կառուցմամբ այդ պոտենցիալը կարող է մեծանալ:

Հայ-ռուսական գրեթե բոլոր բանակցություններում՝ նախագահների և վարչապետերի մակարդակով, քննարկվել է Հայկական ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման հարցը: Արդյունքում՝ 2009թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց Հայկական (Մեծամորի) ԱԷԿ-ի նոր բլոկի շինարարության համար փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին որոշման նախագծին: Հավասար մասնաբաժիններով ՓԲԸ մտան ռուսական «Ատոմստրոյէքսպորտ» ընկերությունը և հայկական կողմը՝ հանձին էներգետիկայի և բնական պաշարների նախարարության: Հայկական ԱԷԿ-ի նոր՝ 1060 մվտ հզորություն, 60 տարվա շահագործման ժամկետ ունեցող ռեակտորը, ինչպես հայտարարվեց կառավարության նիստում, կլինի ռուսական արտադրության: Ինչպես հայտարարեց ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը, «ընդունվում է քաղաքական որոշում. համաձայնություն ենք տալիս մեր ռուս գործընկերների հետ համատեղ, մասնակցության հավասար մասնաբաժիններով ձեռնարկության ստեղծմանը»[1]:

Հայ-ռուսական պայմանավորվածությունը նոր ատոմային էներգաբլոկի կառուցման մասին կարելի է հայկական կառավարության վերջին տարիների ամենանշանակալից ձեռքբերումներից համարել, որը իրականություն է դարձել

[1] http://www.regnum.ru/news/1231523.html

Ռուսաստանի տարածաշրջանային շահերի գրագետ օգտագործման շնորհիվ:

Նոր էներգաբլոկի նախագիծը, որի շինարարությունը նախատեսվում է սկսել հաջորդ տարի, նախնական տվյալներով կարժենա մինչև $5 մլրդ: Ենթադրվում է, որ աշխատանքների կեսը կֆինանսավորի «Ատոմստրոյէքսպորտ» ընկերությունը, մյուս մասը՝ հայկական կողմը, որը, ամենայն հավանականությամբ, առանձին վարկ կստանա ՌԴ-ից՝ իր բաժին ծախսերը ֆինանսավորելու համար: Կայանում, հավանաբար, կտեղադրվի ռուսական *WWER*-1000 տիպի ռեակտոր:

Միջուկային ոլորտի մեկ այլ կարևոր ուղղություն կարելի է համարել ՀՀ-ում ուրանի հանքերի որոնման հայ-ռուսական նախագիծը: 2008թ. ստեղծվեց Հայաստանի տարածքում ուրանի երկրաբանական հետախուզման, արդյունահանման և վերամշակման համատեղ ձեռնարկություն՝ «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն» ՓԲԸ-ն, որը 2009թ. դաշտային աշխատանքներ սկսեց ՀՀ Սյունիքի մարզում, որտեղ, ինչպես ենթադրվում է, ուրանի հանքաշերտեր կան: Ամենատարբեր կանխատեսումներով՝ ուրանի պաշարները Հայաստանում տատանվում են 10-60 հազար տոննայի միջև: Հայաստանը 2008թ. պաշտոնապես միացել է Անգարսկում ուրանի հարստացման միջազգային կենտրոնին, որտեղ նախատեսվում է վերամշակել Հայաստանում արդյունահանված ուրանը: Ռուսական կողմը «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն» ՓԲԸ-ին, ուրանի երկրաբանական հետախուզման համար, հատկացրել է $3 մլն: Համատեղ ձեռնարկության կանոնադրական կապիտալը կազմում է 300 պարզ անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուր կողմը՝ 150-ական բաժնետոմս, մոտ $300 հազար անվանական կանոնադրական կապիտալով [4]:

Այս հարցի հետ կապված ամենազգայուն խնդիրներից մեկը ուրանը՝ հետագա վերամշակման համար, Հայաստանից Անգարսկ հասցնելն է: Հայաստանում արտաքին աշխարհի (Վրաստանից բացի) հետ երկաթուղային կապի բացակայությունը դժվարացնում է ուրանի արտահանումը մեծ ծավալներով: Տեսականորեն, այն տեղափոխելու համար կարող են օգտագործվել վրացական նավահանգիստները, սակայն ռուս-վրացական հարաբերությունները տվյալ պարագայում կարող են բացասական դեր խաղալ: Ապագայում ուրանի արտահանման հնարավորություն կարող է առաջանալ՝ կապված Հայաստանից Իրան երկաթուղու կառուցման հետ, բայց կողմերը դրա մասին դեռ ոչ մի որոշակի համաձայնագիր չեն ստորագրել: Մյուս կողմից՝ հայտնի չէ, թե երբ ռադիոկատիվ նյութերի արտահանումն Իրանի տարածքով, որոնք կարող են օգտագործվել ռազմական նպատակներով, ընդունելի կլինի միջազգային հանրության համար:

Թեև «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերության» աշխատանքները բավական ինտենսիվ են, բայց դեռ վաղ է խոսել Հայաստանում ուրանի արդյունահանման մասին:

Ամփոփում

Հայաստանի համար էներգետիկ անվտանգության ապահովումը կենտրոնական տեղ է զբաղեցնում ազգային անվտանգության համակարգում: Դրա շնորհիվ անցած տարիներին երկիրն առաջ է ընթացել էներգետիկ հատվածի կայունության և զարգացման ապահովման հարցում՝ ստեղծելով նոր հզորություններ և դիվերսիֆիկացնելով էներգետիկ հումքի ստացման երթուղիները:

Սակայն, չնայած ձեռք բերված արդյունքներին, Հայաստանը շարունակում է էներգետիկ առումով և քաղաքականապես կախյալ մնալ ատոմային էներգետիկայից, որն այսօրվա դրությամբ ազգային էներգետիկ համակարգի «ողնաշարն» է: Ուստի, Հայկական ԱԷԿ-ի գործող էներգաբլոկի փակման հարցը սպառնալիք է ներկայացնում Հայաստանի էներգետիկ անվտանգության համար, եթե այլընտրանքային հզորություն չստեղծվի:

Ելնելով ասվածից՝ ատոմային նոր էներգաբլոկի կառուցման մասին որոշումը համապատասխանում է Հայաստանի շահերին, իսկ հետագայում կապահովի երկրի էներգետիկ անվտանգությունը և էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորություններ կստեղծի: Կարևոր է նշել, որ կայանի կառուցման ծախսածածկումն ուղղակիորեն կապված է հայ-թուրքական երկխոսության հետ, որը կարող է հանգեցնել այն բանին, որ նոր էներգաբլոկի արտադրած էլեկտրաէներգիան արտահանվի Թուրքիայի Հանրապետություն:

Ապրիլ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Կարապետյան Գ.,* «Հայաստանի դերը Հարավային Կովկասի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ապահովման գործում», «21-րդ ԴԱՐ, # 4 (22), 2008:
2. Деловой Экспресс – Экономический еженедельник Армении // 30 июня - 6 июля 2005, №24 (632).
3. *Мовсесян Г.,* Будущее Армении – в развитии ядерной энергетики // Республика Армения, № 093 (479), 22 декабря 2006.
4. *Аванесов А.,* Кто будет строить новую АЭС в Армении // Мировая энергетика. - № 1 (60), январь 2009.

ПЕРСПЕКТИВЫ АТОМНОЙ ЭНЕРГЕТИКИ В АРМЕНИИ

Севак Саруханян

Резюме

Еще до обретения независимости Армения столкнулась с изменением всей энергетической системы. Решением правительства Арм.ССР были закрыты 2 действующих реактора ААЭС, которые составляли основну энергетики Советской Армении. С закрытием АЭС теплоэнергетика стала основой армянской энергетической системы, и такое положение дел изменилось лишь с перезапуском второго энергоблока Мецаморской АЭС.

В 2016г. должно начаться закрытие действующего энергоблока ААЭС, что приведет к новым изменениям в энергетической системе Армении. Несмотря на то, что в стране созданы альтернативные мощности, а поставки газа по территории Грузии и из Ирана осуществляются в стабильном режиме, Армении нужен новый ядерный энергетический реактор, который снизит риски для национальной энергетики, исходящие от региональных процессов и отношений.

Заинтересованность российской стороны в новой АЭС в Армении привела к созданию армяно-российского СП, которое и займется строительством реактора и, скорее всего, будет искать источники финансирования среди потенциальных российских инвесторов. На данном этапе можно сказать, что перспективы строительства станции в Армении достаточно основательные.

ԱՐԴՅՈ՞Ք ՊԵՏՔ Է ՄԻԱՎՈՐԵԼ ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԸ

Արծրուն Հովհաննիսյան[*]

20-րդ դարի սկզբին ինքնաթիռները սկսեցին կիրառվել ռազմական նպատակներով: Դրանք գրեթե անպատիժ մահ ու ավեր էին սփռում երկնքից, քանի որ գոյություն չունեին հակաինքնաթիռային միջոցներ:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918թթ.) տարիներին կարճ ժամանակում ստեղծվեց և մի շարք պետությունների զինված ուժերում հայտնվեց համապատասխան զենիթային հրետանի (ԶՀ): Որպես զենիթային միջոցներ՝ սկսեցին կիրառվել նաև գնդացիրները: Այնուամենայնիվ, Առաջին աշխարհամարտի ընթացքում կիրառված հակաինքնաթիռային միջոցներն ունեցան համեստ դերակատարություն [1, с. 232]:

1. Հակամարտությունների պատմությունից

Հակաինքնաթիռային միջոցների զարգացման միտումը շարունակվեց նաև հետպատերազմյան տարիներին: Զենիթային սպառազինության զարգացումը հիմնված չէր միայն զենքերի ստեղծման վրա, քանի որ օդուժի կիրառումը զարգանում էր շատ արագ և դառնում բարդ, մանրակրկիտ ծրագրվող օպերացիա: Հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) կազմակերպման գործում կարևոր տեղ էին զբաղեցնում նաև հայտնաբերման, նախազգուշացման և ուղղորդման հարցերը, որոնց լուծումները սկզբում կատարում էր մարդը, իսկ հետագայում ի հայտ եկան ձայնորսիչները, ՀՕՊ դիտակետերը, աերոստատները, լուսարձակները և այլն: Ի վերջո, առաջնությունը տրվեց «Լավագույն պաշտպանությունը հարձակումն է» սկզբունքին, և ստեղծվեց կործանիչ օդուժը:

Կործանիչները լայնորեն կիրառվում էին օդային գերազանցության համար և արդյունավետորեն պայքարում էին օդային ցանկացած նշանակետի դեմ: Գործընթացին ավելի կազմակերպված տեսք տալու համար հրամանատարներն սկսեցին կիրառել օբյեկտների բնագծային պաշտպանություն, որ-

[*] ՀՀ ԶՈՒ կապիտան:

տեղ կործանիչները համարվում էին առաջին բնագծի պաշտպանները: Նման պաշտպանության կիրառությունը հետագայում ապացուցեց, որ ամենաարդյունավետ ՀՕՊ համակարգը սկսվում է կործանիչով, քանի որ ՀՕՊ միայն այս միջոցն է սեփական սահմաններից առավելագույնս հեռու պայքարում հակառակորդի օդուժի դեմ և ամենաարագն արձագանքում հակառակորդի օդուժի գործողություններին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-1945թթ.) առաջ զարգացած երկրներում աշխատանքներ էին տարվում ՀՕՊ հայտնաբերման և ուղղորդման նոր միջոցների՝ ռադիոտեղորոշման կայանների (ՌՏԿ) ստեղծման ուղղությամբ: Այդ սարքերի միջոցով տեղեկություն էր ստացվում նաև ինքնաթիռի թռիչքի ուղղության և արագության մասին: Առաջին աշխարհամարտի համեմատ՝ օդուժում ռմբակոծիչ ավիացիայի տեսակարար կշիռն ավելացել էր 2.5 անգամ [2, с. 203]: ՌՏԿ-ների դերն աստիճանաբար բարձրանում էր, իսկ ՀՕՊ կազմակերպումը դառնում էր բարդ գործընթաց, որում պարտադիր էր կործանիչների և այլ միջոցների միասնական ղեկավարումը: 1944թ. ՀՕՊ կործանիչային օդուժի պարեկային սկզբունքով գործելու դեպքում, հակառակորդի յուրաքանչյուր խոցած ինքնաթիռի համար պահանջվել է 170 մարտական թռիչք, իսկ օդանավակայաններում մարտական հերթապահություն վարելիս, ինչը կատարվում էր ՌՏԿ-ների շնորհիվ, հակառակորդի յուրաքանչյուր խոցած ինքնաթիռի համար պահանջվել է ընդամենը 21,4 մարտական թռիչք[1]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի օդային մարտերի ամբողջ ընթացքը ներկայացնում է հենց ՀՕՊ և ռազմաօդային ուժերը (ՌՕՈւ) զորքերի միավորման անհրաժեշտության քննարկում: Պատերազմող բոլոր երկրներն էլ ունեցան խնդիրներ՝ կապված կործանիչ ավիացիայի և ՀՕՊ զորքերի համատեղման հետ: Հարցը հատկապես սուր էր ԽՍՀՄ-ում, որտեղ կործանիչներն առանձին էին ՀՕՊ-ից[2] [3, с. 10-11]: Բացառությունը միայն Անգլիան էր, որի ՀՕՊ-ն ամենաբարձր կենտրոնացվածության մակարդակի էր հասցվել: Այնպես որ, երբ 1940թ. հուլիս ամսից սկսած՝ ֆաշիստական Գերմանիան սկսեց Բրիտանական կղզիների զանգվածային ռմբակոծությունները (Ճակատամարտ Անգլիայի համար), պարզվեց, որ գերմանական ավիացիան ի վիճակի չէ կոտրել անգլիական դիմադրությունը: Ավարտվեց պատմության մեծագույն օդային մարտերից մեկը, որի արդյունքում Գերմանիան կորցրեց ավելի քան 1700 ինքնաթիռ [4, с. 443, 5, с. 231]: Ռազմական տեսաբանները միակարծիք են, որ անգլիական կործանիչների գործողությունների արդյունավետության գրավականը նրանց հմուտ ղեկավարումն էր գետնից: Առհասարակ, անգլիական ՀՕՊ-

[1] ЦАМО, ф. 112, оп. 158791, д. 1, л. 35-36.
[2] ЦАМО РФ. Ф. 35. Оп. 11280. Д. 126. Л. 22.

ը Երկրորդ համաշխարհայինի ժամանակ ցուցադրել է հիանալի արդյունավետություն: Դեպի կղզի բարեհաջող արձակած գերմանական մոտ 6000 «Ֆաու-1» հրթիռներից 1847-ն օդում ոչնչացրել են կործանիչ օդաչուները, 1878-ին խոցել են զենիթայինները, իսկ 232-ը դիպել են աերոստատներին [5, с. 229]:

Երկրորդ համաշխարհայինից հետո ՀՕՊ զարգացումը նշանավորվեց մեկ այլ հեղափոխական առաջընթացով, որը կապված էր զենիթահրթիռային համալիրների (ԶՀՀ) հետ: Դրանք պատերազմի ընթացքում աննշան կիրառում էին ունեցել: Նոր համալիրների անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված էր միջուկային սպառազինության գոյությամբ: Հարցն այն է, որ եթե նախկինում ՀՕՊ մակարդակի մասին կարելի էր խոսել հակառակորդի՝ խփված և բաց թողնված ինքնաթիռների հարաբերությամբ, ապա հետպատերազմյան տարիներին բաց թողնված թեկուզ միջուկային ռումբ կրող մեկ ինքնաթիռը կարող էր կաթվածահար անել մի ամբողջ պետություն: Հետևաբար, հարկավոր էր գերճշգրիտ, անվրեպ մի զենք, որը կխոցեր հակառակորդի բոլոր ինքնաթիռները: ԶՀՀ-ների ստեղծման համար, բացի վերը նշվածից, կար ևս մեկ պատճառ: Երկրորդ համաշխարհայինի արդյունքում պարզվեց, որ ԶՀ-ն, որքան էլ զարգացել էր Առաջին աշխարհամարտից հետո, միևնույն է, ավիացիայի զարգացման տեմպերից հետ էր մնում: Պատերազմի ընթացքում ԶՀ-ի կողմից խոցված յուրաքանչյուր ինքնաթիռի համար մեծ տրամաչափի հրանոթները ծախսում էին 200-300 արկ, միջին տրամաչափի հրանոթները ծախսում էին 400–500 արկ, իսկ փոքր տրամաչափի հրանոթները՝ 700–800 արկ[1]: Եվ այս ցուցանիշներն՝ այն պայմաններում, երբ ինքնաթիռների արագությունն առավելագույնը 600-700 կմ/ժ էր: Իսկ ռեակտիվ դարաշրջանի հենց սկզբից այդ արագությունն արդեն ավելացել էր ավելի քան 30 տոկոսով:

ԶՀՀ-ների առաջին մարտական կիրառությունն ապացուցեց նրանց հուսալիությունը և անհրաժեշտությունը: Ներկայումս նման համալիրներով են զինված բոլոր զարգացած պետությունների ՀՕՊ զորքերը: Հետագա պատերազմներում, ցանկացած պետության ՀՕՊ-ն ապահովելու համար, նման համալիրները և կործանիչ օդուժը կատարել են առանցքային դեր:

Ռեակտիվ օդուժի դարաշրջանում ՀՕՊ կենտրոնացման միտումը շարունակում է արդիական լինել: Ասվածը հիմնավորվում է նաև «սառը պատերազմի» տարիների խորհրդա-ամերիկյան հակամարտության մի շարք դրվագներով:

1960թ. մայիսի 1-ին ներկայիս Եկատերինբուրգ քաղաքի մոտակայքում խորհրդային նորագույն «Ս-75» ԶՀՀ-ի միջոցով խոցվեց ամերիկյան «Ու-2» հետախույզ ինքնաթիռը:

Ամերիկյան հետախույզին օդում «որսալու» գործողության ժամանակ

[1] Тактика // Под ред. В.Г.Резниченко, 2-е изд., перераб. и доп. militera.lib.ru/science/tactic/index.html

խորհրդային ՀՕՊ կործանիչների և ԶՀՀ-ների գործողությունների ոչ միակենտրոն ղեկավարման պատճառով թույլ տրվեց մի քանի առանցքային սխալ, և ծախսվեց մեծ ժամանակ՝ մոտ քսանհինգ րոպե[1]: Արդյունքում՝ խոցվեց նաև խորհրդային մեկ «ՄիԳ-19» կործանիչ, որն ընդունել էին որպես «Ու-2» [6, с. 42-45]:

Այս հակաօդային մարտը կործանիչ օդուժի և ՀՕՊ այլ ստորաբաժանումների փոխգործողությունների անբավարար կազմակերպման տիպիկ օրինակ է, որը բացահայտում է նման միջոցներով ՀՕՊ կազմակերպման բարդությունը: Մասնավոր օրինակ լինելով՝ այն ցույց է տալիս, որ մեկ հրամանատարության տակ չլինելու դեպքում ՀՕՊ-ում ներգրավված նույնիսկ հսկայական ուժերը կարող են անարդյունավետ գործել:

ՀՕՊ և օդուժի հակամարտության պատմության մեջ նոր էջ գրվեց վիետնամական պատերազմում, երբ առաջին անգամ մեծ քանակով կիրառված «Ս-75» ԶՀՀ-ները, ռեակտիվ ավիացիան և այլ հրթիռային սպառազինությունը կիրառվում էին մասսայաբար: Վիետնամական ՀՕՊ գործողությունների հաջողությանը նպաստում էին մոտակայքում տեղակայված խորհրդային նավերը, որոնք ամերիկյան ավիացիայի թռիչքները հայտնաբերում էին բավական մեծ հեռավորությունից և վիետնամցիներին նախապես տալիս իրավիճակի մանրամասն պատկերը[2]:

Միջուկային ռումբերով և հրթիռներով սպառազինված նորագույն ռմբակոծիչների՝ ճշգրիտ և սեփական սահմաններից առավելագույնս հեռու խոցելու խնդիրը լուծելու համար 1950-60-ական թթ. ի հայտ եկան օդային նշանակետերը խոցող համակարգեր, որոնց մեջ մտնում էին կործանիչ ինքնաթիռներն իրենց հրթիռներով, իսկ օդային մարտը սկզբից մինչև վերջ ղեկավարվում էր գետնից: Օդային հակառակորդին հայտնաբերելուց սկսած՝ կործանիչը թռչում էր վերգետնյա համակարգերի ուղղորդմամբ՝ մինչև հակառակորդին հանդիպելը:

Զարգանում էին նաև ՀՕՊ պաշտպանության երկրորդ էշելոնը կազմող ԶՀՀ-ները: Ավելին՝ նրանք ևս, իրենց հերթին, ունեին մի քանի շերտեր: Քանի որ նման կործանիչների գործողությունների համար անհրաժեշտ էին ավելի շատ, և որ կարևորն է, առանձին ՌՏԿ-ներ, ապա ընդհանուր հայտնաբերման և իրավիճակի տեղեկացման նպատակով առաջանում էր ուժերի քանակային մեծացման անհրաժեշտություն: Ելնելով այս ամենից՝ 1952թ. ԽՍՀՄ-ում բոլոր վերգետնյա հայտնաբերման և ուղղորդման ռադիոտեխնիկական միջոցները միավորվում են ՀՕՊ ընդհանուր ռադիոտեխնիկական զորքերի հետ [7, с.

[1] Ակնհայտ է, որ ՀՀ ՀՕՊ միջոցները հակառակորդի դեմ պայքար վարելու համար այդքան ժամանակ չեն կարող ունենալ:

[2] *Розин А.,* Советские моряки в оказании интернациональной помощи Вьетнаму в обретении независимости и отражении американской агрессии. http://www.duma.gov.ru/csecure/arc3/news/20.html

109]: Նմանատիպ միավորում ԱՄՆ-ում կատարվել էր շատ վաղուց: Փաստորեն, կործանիչ ավիացիայի և ԶՀՀ համագործակցությունը նորից հանգեցնում էր համատեղման:

2. Ժամանակակից պատերազմները և հիմնախնդիրը

Երկու զորատեսակների միավորման կամ համագործակցության խնդիրը քննարկելիս հետաքրքիր է անդրադառնալ արաբա-իսրայելական տեղային պատերազմի փորձին, որը բնույթով շատ մոտ է ժամանակակից պատերազմներին:

Իսրայելական ՀՕՊ զորքերը մինչև 1965թ. գործում էին որպես առանձին զորատեսակ: Նույն թվականին իսրայելական զորքերը, ստանալով ամերիկյան «Հոկ» ԶՀՀ-ներ, անցան զորատեսակների ամերիկյան կառուցվածքին: Այսինքն՝ ՀՕՊ զորքերը ենթարկվեցին ՌՕՈւ-ին[1]: ԽՍՀՄ-ն արաբական երկրներին ակտիվորեն առաքում էր տարատեսակ ԶՀՀ-ներ: Սուեզի ջրանցքի շրջակայքում խորհրդային զինվորականները կազմակերպել էին հզոր, անանցանելի ՀՕՊ պատնեշ, որը համեմատում էին միայն Մոսկվայի ՀՕՊ-ի հետ: «Դատաստանի օրվա» պատերազմին նախապատրաստվելիս, հաշվի առնելով նախորդ պատերազմի դառը փորձը, արաբները զինվել էին խորհրդային ժամանակակից ԶՀՀ-ների մեծ քանակով: Եգիպտական և սիրիական կողմերը միասին ունեին ավելի քան 180 ԶՀՀ՝ միաժամանակյա մոտ հազար արձակման կայաններով [8, с. 215]: Միայն Սիրիան ուներ ՀՕՊ 38 դիվիզիոն՝ չհաշված մոտ երկու հազար կրովի ԶՀՀ-ները, ԶՀ միջոցները և ավելի քան 400 կործանիչները [9, с. 248]: Պատերազմի արդյունքը հայտնի է. արաբական երկրները, չնայած միջոցների աhռելի քանակին և խորհրդային զինվորականների միջամտությանը, միևնույն է, պարտություն կրեցին:

Արաբական կողմի կրած պարտության պատճառներից մեկը, մասնագետների կարծիքով, մարտական գործողությունների վարման շրջանի ՀՕՊ ապահովման խորհրդային մոդելն էր, համաձայն որի՝ ՀՕՊ-ը կործանիչային ավիացիայի հետ ընդամենը համագործակցում էր: Արաբների արձակած հրթիռների քանակը հասնում էր երկու հազարի՝ խոցված մոտ 120 իսրայելական ինքնաթիռների դիմաց: Իսկ սխալ արձակումների արդյունքում սեփական խոցված ինքնաթիռների քանակն անցնում էր 55-ից [8, с. 235]:

Հաջորդ արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ 1982թ. իրադրությունը բավական փոխվել էր: Սիրիական ՀՕՊ ուժերն ավելի էին մեծացել քանակապես: Դրանք արդեն կազմում էին խորհրդային մի քանի տեսակի ԶՀՀ-ների 128 դիվիզիոն՝ չհաշված խորհրդային նոր «ՄիԳ-23» կործանիչները, որոնք նախորդ խորհրդային կործանիչների համեմատ, զգալիորեն անկախ և

[1] *Грановский О.,* Войска ПВО АОИ. http://www.isayeret.com/units/air/7298/article.htm, http://www.isayeret.com/units/air/egrophan/article.htm, http://www.iaf.org.il/

ինքնուրույն էին օդային մարտում [9, с. 248]: Մարտական գործողություններն ավարտվեցին սիրիական կողմի բացահայտ ջախջախմամբ: Իսրայելական ՌՕՈւ-ն, օդում միայն ցամաքային ՀՕՊ-ից կրելով չնչին կորուստներ, մեծ վնաս հասցրեց սիրիական ՌՕՈւ-ին և ՀՕՊ-ին:

Պատճառները քննարկելիս մասնագետները նորից եկան այն եզրակացության, որ սիրիական ՀՕՊ բրիգադները միմյանց հետ անգամ նորմալ կապ չեն կարողացել ապահովել, իսկ ՀՕՊ-ի և ՌՕՈւ-ի միջև կապ՝ որպես այդպիսին, գրեթե չի եղել: Օդային իրադրության ամբողջ տեղեկատվությունը ստանում և հստակ վերահսկում էին ամերիկյան հեռակա հայտնաբերման և ղեկավարման «Ե-2Ց Հոկայ» ինքնաթիռները: Այսինքն՝ հաջողությունն ապահովում էր բարձր համագործակցությունն ու կազմակերպվածությունը: Հետագայում այս հատկանիշները հաշվի առնվեցին չորրորդ սերնդի կործանիչների ստեղծման ժամանակ: Դրանցից շատերն օդային մարտի համար գրեթե ամբողջ տեղեկատվությունը ստանալով՝ մշակում են այն և փոխանցում այլ տեսակի կործանիչներին և ղեկավարում մարտը: ՌԴ ՀՕՊ կործանիչ ավիացիայի նախկին հրամանատար, գեներալ-գնդապետ Վ.Անդրենի խոսքերով՝«ՄիԳ-31»-ը «Ս-300»-ի թռչող դիվիզիոն է [10, с. 25]: Այսինքն՝ արագ տեղաշարժվելու և հեռուն տեսնելու հնարավորությամբ այս կործանիչն ընդունակ է հսկել օդային հսկայական տարածքներ:

Վերը բերված բոլոր տեխնիկական միջոցները և սպառազինությունն իրենց բնույթով կենտրոնացված և համատեղ կիրառության օրինակներ են, որոնք հիմնավորում են վերգետնյա և կործանիչային ՀՕՊ-ը միավորելու անհրաժեշտությունը: Նրանց համատեղումը մեկ զորատեսակի մեջ կենսական անհրաժեշտություն է, սակայն այդ դեպքում, փաստորեն, ստեղծվում է ՌՕՈւ և ՀՕՊ կործանիչային ավիացիա: Իսկ որքանո՞վ է դա նպատակահարմար ներկայիս իրավիճակում ՀՀ ԶՈւ-ի համար: Հարցադրումը կքննարկենք նյութի եզրափակիչ մասում:

Հանրահայտ է, որ մարտում ցամաքային զորքերի (ՑԶ), օդուժի և ՀՕՊ ստորաբաժանումների և զորամասերի համագործակցության կարելի է հասնել համատեղ և միաժամանակյա գործողություններով: Դրանով հնարավոր է համաձայնեցնել տարբեր զորատեսակների հարվածները՝ ըստ ժամանակի, նպատակի և տեղի, և հասնել մեծ արդյունավետության:

Դժվար չէ նկատել, որ մարտի ժամանակ այս բոլոր պահանջները պահպանելը դժվար գործ է: Ապակենտրոնացված ղեկավարման համակարգը բարդացնում է զորքերի ընդհանուր ղեկավարումը: Միասնական հրամանատարության բացակայության պայմաններում առանձին դեպքերում անխափան կապը պահպանելն իսկ բարդ խնդիր է դառնում: Էլ չենք խոսում հրամանատարներից մեկի սուբյեկտիվ որոշման հետևանքով՝ մյուս զորատեսակների բնականոն

գործունեությանը խանգարելու հավանականության մեծացման մասին: Ռազմարվեստի պատմության ընթացքում անհաջող ելքով գործողությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում վատ կամ խափանված կապի պատճառները:

ԽՍՀՄ քայքայումից հետո ՆԱՏՕ ղեկավարությունը, վերանայելով ռազմական հայեցակարգը, ձեռնարկեց ԶՈւ բարեփոխումներ: Քննարկվեց եվրոպական մասում ՌՕՈւ և ՀՕՊ միավորումը մեկ ինֆորմացիոն դաշտի մեջ, որի տակ հասկացվում էր նրանց կենտրոնական ղեկավարումը՝ «Ակկս» համակարգը: Համակարգի մեջ պետք է ներդրվեին նորագույն, հատկապես շարժական հետախուզական համալիրներ: Մեծ դեր էր հատկացվում «ԱՎԱԿՍ» թռչող համալիրներին[1]: Որպես զինատեսակներ՝ օդուժը, ԶՀՀ-ները, ԶՀ-ն և ՌԷՊ-ը (ռադիոէլեկտրոնային պայքար) պետք է միավորվեին կենտրոնացված ղեկավարման տակ:

ՆԱՏՕ ղեկավարության կողմից 1994-97թթ. անցկացված զորավարժությունները և փորձարկումներն ի հայտ բերեցին որոշակի թերություններ, որոնց վերացման արդյունքում ձևավորվեց աշխատանքի հիմնական սկզբունքը: ՆԱՏՕ ղեկավարությունը որոշեց վերջնական կենտրոնացումն իրականացնել ոչ միանգամից՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաշինքի մեջ են ընդգրկվել նոր պետություններ: Ներկայումս ընթանում է ՆԱՏՕ, եվրոպական ՌՕՈւ և ՀՕՊ միավորման վերջին փուլը:

Ելնելով այս և մի շարք այլ հիմնահարցերից՝ ՌԴ բանակը 1998թ. միավորեց ՌՕՈւ-ն ու ՀՕՊ-ը: Այս ճանապարհը վաղուց անցել են այնպիսի պետություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան, Դանիան, Հունաստանը և Իսրայելը:

Որոշ հետևություններ

Այսուհանդերձ, վերոշարադրյալը չի կարող միանշանակ պնդումների և անցյալի ամբողջ ժառանգությունը մեխանիկորեն մերժելու հիմք հանդիսանալ: Երկար տարիներ երկու զորատեսակները գործել են առանձին: Այս ընթացքում ձևավորվել են ավանդույթներ, գործողությունների հիմունքներ և տեսություններ: Միավորելով այդ երկու զորատեսակները՝ հարկավոր է վերանայել և մանրամասնորեն մշակել նոր նորմեր ու կանոններ՝ հաշվի առնելով նաև նոր մարտահրավերները: Ուժերի համատեղումը և միակենտրոն ղեկավարումը գրեթե միշտ գործնականում ունեցել են դրական հետևանքներ, սակայն այդ ամենը հարկավոր է անել խելամտորեն:

[1] Օդային ղեկավարման կետեր, որոնք կարող են մի քանի հարյուր կմ տարածության վրա կատարել հետախուզություն, ղեկավարել հարյուրավոր ԹՍ-ների գործողությունները: Վերջին տեղային պատերազմներում ամերիկյան ավիացիան առանց ԱՎԱԿՍ-ների ոչ մի գործողություն չի ձեռնարկում:

Անդրադառնանք օդուժի և ՀՕՊ զորքերի՝ մեկ զորատեսակի մեջ միավորման հստակ քայլերին: Այս ռազմավարական քայլը, որը պետական կարևոր նշանակություն ունի, պետք է ունենա ռազմատեխնիկական և տնտեսական հիմքեր:

Կատարելագործվելով՝ օդային հարձակման միջոցները (ՕՀՄ) դառնում են առավել հզոր և արագ գործող համալիրներ, ձեռք բերում ավելի շատ խնդիրներ լուծելու հնարավորություն: Մեծանում է նրանց կիրառության տարածական և ժամանակային խորությունը: Իրողությունը ստիպում է վերանայել մեր հայացքներն առհասարակ օդուժի և ՀՕՊ-ի մասին:

Ներկայումս ՀՕՊ-ը բաղկացած է բազում ավտոմատացված միջոցներից և համակարգերից, որոնք աշխատում են բարդ համագործակցությամբ: ՀՕՊ գործառույթների մեջ է մտնում յուրային բոլոր ԹՍ-ների վերահսկողությունը, որով այն ինչ-որ կերպ վերահսկում է նաև ՌՕՈւ-ն: Սակայն օդուժի գործողությունների ռադիոտեխնիկական ապահովումը կատարելով՝ ՀՕՊ-ը չի ենթարկվում այդ վարչությանը: ՀՕՊ կիրառության ամենամեծ հավանականությունն առաջանում է այն ժամանակ, երբ հավանական է նաև սեփական ՌՕՈւ կիրառումը: Հետևաբար, ՀՕՊ ստորաբաժանումները պետք է ապահովեն սեփական օդուժի տեղաշարժը և նույն օդային տարածքում կանխեն հակառակորդի թռիչքները: Թե՛ մեր, թե՛ հակառակորդի կողմից թռիչքները կարող են լինել բավական ինտենսիվ՝ յուրաքանչյուրի կողմից օրական մի քանի տասնյակ: Նշվածին հարկավոր է ավելացնել նաև քաղաքացիական ինքնաթիռների չվերթերը, որոնք ևս հարկավոր է վերահսկել ոչ պակաս խստությամբ: Սեփական և հարևան պետությունների տարատեսակ ԹՍ-ների քանակը տարեցտարի ավելանում է, գումարած նաև այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ հայկական ավիացիոն բեռնափոխադրումներն ահռելի կաճեն: Այս ամենը հարցադրումն ավելի է բարդացնում և անհապաղ լուծում պահանջում: Այսպիսով՝ ներկայումս ՀՕՊ առաջնակարգ խնդիրներն են՝

- պետական օդային սահմանի պահպանումը և վերահսկողությունը,
- օդային սահմանների անընդհատ հետախուզումը,
- անցանկալի օդային օբյեկտների հայտնաբերման դեպքում դրանց բնութագրերի և չափանիշների որոշումը, համապատասխան ռազմական և ղեկավար մարմիններին ճիշտ և ժամանակին զեկուցումը,
- պետական և ռազմական կարևոր օբյեկտների (վարչական, արդյունաբերական-տնտեսական շրջաններ), զորախմբերի հավաքատեղիների (այդ թվում նաև զորքերի շարժի ժամանակ), հրամանատարական կետերի և այլ շինությունների պահպանումը հակառակորդի օդային հարվածներից:

Վերը նշված բոլոր խնդիրների բարեհաջող կատարման համար ՀՕՊ-ը պետք է լինի ակտիվ, բազմանպատակային, շարժունակ, օպերատիվ, խանգարումների և դիվերսիաների նկատմամբ կայուն, համաեղանակային, գործողությունների և ֆունկցիաների մեծ սպեկտրում ավտոմատացված:

Այդ զորատեսակի զարգացման մեջ հատուկ ուզում ենք նշել այն հանգամանքը, որ բոլոր երեք հարթություններում ընդլայնվել են նաև ՀՕՊ հսկողության տակ գտնվող տարածքային սահմանները: Դրանք սկզբից սահմանափակվում էին մեկ-երկու օբյեկտներով, իսկ ներկայումս պետության ողջ տարածքի օդային սահմանները պետք է հնարավորինս հավասարաչափ վերահսկելի և պաշտպանված լինեն: Հարկավոր է օդային տարածքը վերահսկել ամբողջ սահմանով՝ ամենացածր բարձրություններից մինչև հնարավորին ամենամեծ բարձրությունների վրա:

ՀՕՊ տեսադաշտի լիարժեքություն նշանակում է ՀՀ լրիվ տարածքները, ինչպես նաև՝ հարևան պետությունների տարածքների զգալի մասը: Ներկայումս այդ տեսադաշտն ապահովվում է վերգետնյա ՌՏԿ-ների շնորհիվ: Այդտեղ կան որոշակի խնդիրներ՝ կապված ՀՀ լեռնանտառային կտրտված տեղանքի հետ: Հետևաբար, հարկավոր է կիրառել ռադիոլոկացիոն և այլ հայտնաբերման տարատեսակ միջոցներ՝ լիարժեք օդային տեղեկություն և խոցման ավելի մեծ հնարավորություն ստանալու համար: Այստեղ տեղին է հիշել օդապարիկների, դիրիժաբլների և այլ ԱԹՍ-ների հիման վրա ստեղծված հետախուզության, կապի ապահովման և օդային ղեկավարման կետերի մասին:

Չնայած նրան, որ տեղային պատերազմներում ԶՀ կիրառությունը դեռ բավական արդյունավետ է, միևնույն է, ոչ մի ՀՕՊ չի կարող միայն վերգետնյա համակարգերով ու սպառազինությամբ նման ամենատես ու օպերատիվ ցանց ապահովել:

ԶՀՀ-ների կիրառման փորձը գալիս է ապացուցելու, որ մեկ խոցված ինքնաթիռի վրա համալիրները ծախսում են միջինը հինգ հրթիռ [11, с. 397, 423-424]: Մինչ օրս լավագույն ցուցանիշն ապահոված ամերիկյան «Փետրիոտ» ԶՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված ԹՍ-ի համար ծախսել է 1-3 հրթիռ [12, с. 26-32]: Իհարկե, տվյալը հիմնականում վերաբերում է հրթիռների խոցմանը, ինքնաթիռները խոցվել են ավելի լավ ցուցանիշներով, սակայն կիրառությունը մասսայական չէ, իսկ հակառակորդը հզոր չէ:

Զարգացած պետությունները ՀՕՊ ապահովման համար օգտագործում են տարատեսակ կործանիչներ, օդային մարտի ղեկավարման ու հետախուզման թռչող համակարգեր և, ինչու չէ, նաև հետախուզական արբանյակներ: ՌՕՈւ և ՀՕՊ միավորման մասին նման քննարկում ծավալելով՝ մենք պարտավոր ենք հատուկ նշել նաև կործանիչային ավիացիայի մասին, առանց որի անհնար է ունենալ հզոր ՌՕՈւ և ՀՕՊ: ԱՄՆ ՀՕՊ հիմնական գործիքը մնում

են կործանիչները: Հայկական ՌՕՈւ-ի համար անհրաժեշտ է մի այնպիսի կործանիչ ինքնաթիռ, որը, օդային պայքարի և օդային հարձակման միջոցների խնդիրների համատեղումից զատ, իր որակով նաև հակակշիռ կհանդիսանա ադրբեջանականին: Մի քանի տարբերակների մեջ ամենահարմարը ռուսական «Սու-30» կործանիչն է, որը կարող է լուծել առաջադրված խնդիրները: Վերջինս ունի մինչև 8 տոննա ռմբատարողություն և թռիչքի բավական մեծ հեռահարություն: Կործանիչը հաջողությամբ կարող է խոցել և՛ օդային, և՛ վերգետնյա նշանակետեր: Կատարելով օդային գերազանցության ապահովման խնդիր՝ կարող է միաժամանակ հրթիռային հեռահար հարվածներ հասցնել կարևոր վերգետնյա նշանակետերին: Երկու խնդիրների կատարման համար այն կարող է զինվել մինչև 100 կմ և ավելի հեռահարության ճշգրիտ հրթիռներով *(X-28, X-31, X-35, X-58, X-59, P-27, P-77* և այլն) [13, с. 47]: Այսինքն՝ կործանիչը, գտնվելով ՀՀ օդային տարածքում, կարող է խնդիրներ կատարել ԼՂՀ և նույնիսկ Ադրբեջանի տարածքում: Վերգետնյա նշանակետերին հարվածելու համար «Սու-30»-ը կրում է նաև գերճշգրիտ ռումբեր: «Սու-30»-ը, բոլոր խնդիրների լուծման հետ միաժամանակ, այլ միջոցների համար օդային հրամանատարական կետ է, ինչը հենց զորատեսակների համատեղման համար առանցքային հատկանիշ է: Օդային հարվածներ հասցնելու ժամանակ այն կարող է կազմակերպել ամբողջ մարտը՝ միաժամանակ տեղեկությունը փոխանցելով հրամանատարական կետերին: Այն կարող է և՛ հարվածել, և՛ օգնել այլ թռչող սարքերին՝ կատարելու ճշգրիտ հարվածներ, և՛ միաժամանակ պաշտպանել այդ սարքերն օդային հակառակորդից, ներառյալ ուղղաթիռները [14, с. 156-157]: Կործանիչը ղեկավարում է երկու օդաչու, ինչը շատ կարևոր է նմանատիպ խնդիրների փնջի լուծման համար: «Սու-30»-ն ադրբեջանական «ՄիԳ»-երին գերազանցում է գրեթե բոլոր տվյալներով և հատկապես թռիչքի հեռավորությամբ, ինչը շատ կարևոր է մարտերը հակառակորդի տարածք տեղափոխելու տեսանկյունից [14]:

Բացառված չէ, որ հակառակորդը, օգտագործելով քաղաքացիական ինքնաթիռների թռիչքները, չեզոք պետության տարածքից մարտական ինքնաթիռով փորձի հարվածներ հասցնել: Հարևան պետություններից մեկի հեռավոր սահմանների վրա հակառակորդի մարտական ինքնաթիռները կարող են աննկատ մոտենալ մեր ինքնաթիռին և, շատ մոտ թռչելով, հասնել մինչև Երևան, քանի որ մոտենալու պահին մեր ՌՏԿ-ները չեն կարող վերահսկել քաղաքացիական ինքնաթիռի թռիչքը: Մեր սահմանը մտնելու պահին ՌՏԿ-ների հետևող սարքերի վրա դրանք կարող են երևալ որպես մեկ ինքնաթիռ: Նման պայմաններում շատ դժվար է կանխել դիվերսիան:

Այդ և վերը նշված մյուս պատճառներով անհրաժեշտ է մեկտեղել օդային հետախուզության և վերահսկողության բոլոր միջոցները: Օդային վերահսկո-

դության և հետախուզական ամբողջ տեղեկատվությունը մեկ կենտրոնում կուտակելով, համատեղ գործողություններով և մեկ կենտրոնից ղեկավարելով՝ զգալիորեն նվազում է տարատեսակ խանգարումների և հակազդեցությունների կիրառումը, ինչպես նաև զգալիորեն բարձրանում է ցանկացած ԹՍ հայտնաբերման ճշտությունը:

Համատեղ զորատեսակի կենտրոնացված ղեկավարումը թույլ կտա ավելի արագ և ստույգ տեղեկություն ստանալ ՀՕՊ յուրաքանչյուր համալիրից, հետախուզման և հսկողության յուրաքանչյուր կենտրոնից ու ՌՏԿ-ից: Միջոցները կարող են տեղակայված լինել հանրապետության ողջ տարածքում: Իրական ժամանակում ստացվող այդ տեղեկատվությունը մշակվելով՝ հրամանատարական կետից կարող է հաղորդվել տվյալ շրջանում գործող ՀՕՊ համակարգերին, ռազմական և քաղաքացիական ավիացիային՝ թույլ տալով խուսափել հակառակորդի հետ անցանկալի հանդիպումից, կրկնակի հարվածներից, օդային բախումներից և այլն: Տեղեկատվության հավաքումը և բաժանումը պետք է կատարել թվային ազդանշանի հաղորդագրության գաղտնիության պահպանման բոլոր ժամանակակից եղանակներով: Հաշվի առնելով մեր տարածքային չափերը և ունեցած կամ ունենալիք միջոցների քանակը՝ այս ամենի կազմակերպումը լիովին հնարավոր է և կլինի ավելի արդյունավետ ու օգտակար:

Համատեղման արդյունքում, եթե հայտնաբերման և հետախուզական միջոցները գործեն անխափան, գրեթե բացառվում է ՀՀ օդային տարածքներում անցանկալի ԹՍ-ների հանկարծակի հայտնվելը, և զգալիորեն բարձրանում են հակահարված տալու ժամանակն ու հնարավորությունը:

Առաջարկը ՌՕՈւ-ի և ՀՕՊ-ի համար զարգացման հաջորդ քայլ է: Այն պահանջում է լրացուցիչ ներդրումներ, հատկապես հայտնաբերման և ղեկավարման սարքավորումների կատարելագործում: Համատեղման և նման սարքավորումների ու համակարգերի տեղադրման դեպքում հրամանատարական կետում կարող են նաև ստանալ տեղանքի ընդհանուր կամ մասնակի էլեկտրոնային քարտեզագրում: Հրամանատարական կետում արտացոլված էլեկտրոնային քարտեզագրումը, բազում հնարավորություններից զատ, մեծացնում է ավիացիայի ղեկավարումը գիշերը և բարդ օդերևութաբանական պայմաններում: Ուղղաթիռներն այդ պայմաններում կարող են առանց վերգետնյա ուղղորդողների վայրէջք կատարել ամենաանծանոթ վայրերում, ինչը մարտական պայմաններում անգնահատելի դեր ունի ՑԶ-ի համար: Իսկ եթե ԹՍ-ները ևս հնարավորություն ունենան ստանալ քարտեզագրման արտացոլում, ապա ավիացիայի մարտունակությունը զգալիորեն կբարձրանա: Զորատեսակների համատեղման և կենտրոնական ղեկավարման դեպքում կբարձրանա մարտի ղեկավարման ընդհանուր մակարդակը, մասնավորապես մարտական ղեկավարման հրամանների օպերատիվ կազմումը և հասցեատերե-

րին հասցնելը, տրված հրամանների կատարման արդյունքների ստուգումը և մարտական իրավիճակի փոփոխման դեպքում արագ հակամիջոցների կազմակերպումը: Մեկ կամ մի քանի խմբերի մարտական խնդրի կատարման ժամանակ ավտոմատ կամ կիսաավտոմատ կերպով կտեղեկացվեն բոլոր անհրաժեշտ ուժերը և միջոցները: Իսկ այն ուժերը, որոնք անմիջական կապ չունեն այդ խմբերի գործունեության հետ, չնախատեսված պայմաններում կարող են հեշտությամբ ստանալ անհրաժեշտ տվյալներ:

Անխոցելիության բարձրացման նպատակով շատ կարևոր է համատեղ հրամանատարական կետի շարժական լինելը, որի համար այն անհրաժեշտ է տեղակայել բարձր անցունակության մեքենաների վրա՝ գերժամանակակից, հագեցած ամենաարդիական սարքավորումներով: Հրամանատարական կետը կարող է տեղակայված լինել նման ոչ մեկ մեքենայի վրա: Կարող է ունենալ մի քանի նման հրամանատարական կետեր, սակայն դրանք միաժամանակ չպետք է գործեն: Այդ փոփոխությունը և շարժունակությունը կարող է ապահովել լիարժեք անխոցելիություն: Բնականաբար, զորատեսակների համատեղման և կենտրոնական ղեկավարման դեպքում հարկավոր է, որ յուրային ԹՍ-ները հագեցած լինեն ավտոմատ պատասխանիչներով, որը բարդ, սակայն հուսալի և փորձված միջոց է: Հարկավոր է ավտոմատ կերպով հայտնաբերել ցանկացած ԹՍ՝ խիստ կրճատելով մարդու մասնակցությունն օդային տարածքի հետևման գործընթացին՝ երեք հարթություններում ստանալով սարքի լիարժեք կոորդինատները:

ՀՀ տարածքային սահմանափակությունը կարևոր կռվան է կենտրոնացված ղեկավարման ներկայացված ձևին անցնելու համար և լրացուցիչ հնարավորություններ է տալիս բարձրացնելու ՀՕՊ-օդուժ միավորման արդյունավետությունը:

Մասնավորապես, մեր կործանիչները կարիք չունեն զամված լինել պաշտպանական տվյալ շրջանում՝ բացառապես ՀՕՊ ապահովմանն ուղղված խնդիրներ լուծելու համար:

Լինելով մեկ հրամանատարի ենթակայության տակ և ծառայելով բոլորի շահերին՝ նրանք կարող են գործել և՛ որպես մարտավարական հարվածային համակարգեր, և՛ որպես հետախույզներ, և՛ որպես ՀՕՊ կործանիչներ: Ընդ որում, ստացված տեղեկատվությունը կարող են օգտագործել նաև այլ կործանիչներ, հարվածային ինքնաթիռներ, ուղղաթիռներ, վերգետնյա ԶՀՀ-ներ, շարժական կամ անշարժ ՀՕՊ այլ համալիրներ, այլ զորատեսակներ, քաղաքացիական ավիացիա և անգամ օդերևութաբանական ծառայություններ: Հզոր և ճկուն ՀՕՊ ապահովման համար մեծ դեր ունեն արագ շարժվող ԶՀՀ-ներն ու այլ կրակային միջոցները, որոնք շատ արագ փոխում են իրենց դիրքը և կարող են հայտնվել բավական բարդ տեղանքներում:

Այս միավորումը նպատակահարմար է նաև նրանով, որ մեզանում չի կարող լինել ՌՕՈւ և բանակային ավիացիայի զատում, որը խնդիրներ կարող էր առաջացնել տվյալ դեպքում՝ կախված վերջինիս գործունեության հետ: Այսինքն՝ մեր մարտական ավիացիան մշտապես գործում է հիմնականում ՑԶ խնդիրների կատարումն ապահովելու ձևաչափում: Մարտական ինքնաթիռների և ուղղաթիռների քանակը թույլ է տալիս ունենալ հարվածային կամ այլ խնդիրներ կատարող մեկ-երկու հզոր առանձին կամ խառը խմբեր (քանակի որոշակի ավելացման դեպքում հնարավոր է խմբերի կրկնակի ավելացում): Այդ խմբերը կարող են արագ խուսավարելով՝ գործել օպերատիվ, արագ և բավական արդյունավետ: Իսկ նման խմբերի և ՀՕՊ ստորաբաժանումների համատեղ ու կենտրոնացված գործողությունները թույլ կտան խուսափել շատ սխալներից և ուժերի անտեղի վատնումից:

Անգամ խաղաղ պայմաններում այս երկու զորատեսակների համատեղումը և քաղաքացիական ավիացիայի ղեկավարման համակարգերի մեկտեղումը կարող են լուրջ միջոցներ խնայել, ինչը պետական և ռազմական գործում վերջին տեղում չէ:

Ներկայումս ռազմատեխնիկական և քաղաքական համաշխարհային զարգացումները նորանոր մարտահրավերների առաջ են կանգնեցրել ՀՀ ԶՈւին: Ընդ որում, ակնհայտ է, որ դրանք մեղմանալու միտումներ չունեն: Մեզանից պահանջվում են համարժեք պատասխաններ, որոնք պետք է քննարկել և, թեկուզ անհրաժեշտության դեպքում բովանդակային փոփոխություն կատարելով, կիրառել մեր պայմաններում: Այս դինամիկ տեմպերից դուրս մնալով՝ մենք կարող ենք ի վերջո վտանգել պետության անվտանգության երաշխիքները:

Դեկտեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Базаревский А.,* Мировая война 1914-1918. Компания 1918г. во Франции и Бельгии, т. 2, М.-Л., 1927.
2. Советская военная энциклопедия, т.2.
3. *Светлишин Н.А.,* Войска ПВО в Великой отечественной войне, М., 1979.
4. *Соколов Б.В.,* Сто великих войн, М., 2004.
5. *Чернякевич О.М., Чернякевич И.Н., Чернякевич И.С.,* Великие битвы XX века, М., 2002.
6. Вестник воздушного флота, ноябрь-декабрь. 1998.
7. Вестник авиации и космонавтики, N3, 2004.
8. *Жирохов М.А.,* История ВВС Израиля. М.-Минск, 2001.

9. *Золотарёв В.А.,* «Россия (СССР) в локальных войнах и военных конфликтах второй половины XX века», М., 2000.
10. Вестник воздушного флота, Ноябрь-декабрь, 2003.
11. *Василин Н.Я., Гуринович А.Л.,* Зенитные ракетные комплексы, Минск, 2002.
12. *Галкин Д.,* Боевое применение зенитных ракетных комплексов Пэтриот в вооруженных конфликтах. ЗВО, 10.2006.
13. *Марковский В., Перов К.,* Советские авиационные ракеты воздух-земля, М., 2005.
14. *Беляев В., Ильин В.,* Российская современная авиация, М., 2001.

СТОИТ ЛИ ОБЪЕДИНЯТЬ ВВС И ВОЙСКА ПВО

Арцрун Оганесян

Резюме

Наряду с созданием летательных аппаратов и их применением в разрешении военных конфликтов возникла также необходмость в применении средств противовоздушной обороны. Тогда же и возник вопрос объединения и/или сотрудничества войск истребительной авиации и ПВО. Учитывая опыт сотрудничества этих войск в годы Великой Отечественной войны, решение данного вопроса склоняется к объединению.

Проблема борьбы с реактивной авиацией, возникшая после Второй мировой войны, выдвинула вопрос создания новых средств ПВО, так как применение зенитной артиллерии уже не отвечало требованиям времени. Созданные к окончанию Второй мировой войны зенитно-ракетные комплексы (ЗРК) явились серьезным решением, и первое их применение показало эффективность новых средств. Но после Вьетнамской войны и особенно во время ближневосточных конфликтов истребительная авиация вновь сыграла решающую роль в борьбе с воздушным противником. Советская модель организации ПВО показала свою неэффективность на примере применения ее в арабских странах, воюющих против объединенной организации ПВО и ВВС израильтян.

Обобщая весь опыт сотрудничества истребительной авиации и ПВО, мы пришли к выводу, что ВВС и ПВО РА необходимо объединить и создать истребительную авиацию, которая будет костяком объединенных войск. Для обороны воздушных границ, кроме истребительных летательных аппаратов, требуется создать надежную систему взаимосвязи ударных средств и средств воздушной разведки на базе дирижаблей или других беспилотных летательных аппаратов.

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՎՈՒԱՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գոռ Հովհաննիսյան[*]

Միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացները պետություններին մղում են ավելի ակտիվ փոխգործակցության և համագործակցության, ինտեգրացիոն կապերի ուժեղացման ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային մակարդակով, ինչը նշանավորվում է միջազգային կազմակերպությունների աճող դերով: Վրաստանը, գտնվելով պետականության կայացման փուլում, փորձում է ամրապնդել դիրքերը միջազգային ասպարեզում: Հոդվածը նվիրված է ՎՈՒԱՄ շրջանակներում այդ փորձերի լուսաբանմանը:

Վրաստանը, ինչպես հետխորհրդային բոլոր պետությունները, ներկայումս գտնվում է պետականության կայացման փուլում, բախվում է բազմաթիվ չլուծված խնդիրների՝ ներառյալ էթնոտարածքային հակամարտությունները, տնտեսական ոլորտում և արտաքին քաղաքականության մեջ առկա հիմնախնդիրները: Այդուհանդերձ, Վրաստանը փորձում է ամրապնդել իր դիրքը միջազգային ասպարեզում, այս առումով ձգտում է ակտիվորեն համագործակցել Սևծովյան տարածաշրջանի երկրների հետ, որոնց հետ համանման պատկերացումներ ունի քաղաքական և տնտեսական հրատապ հիմնախնդիրների վերաբերյալ: Նման համագործակցության օրինակ է ՎՈՒԱՄ միջազգային կազմակերպությունը:

ՎՈՒԱՄ քաղաքական-խորհրդակցական միավորը ձևավորվել է 1997թ. հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում, Եվրախորհրդի գագաթաժողովի շրջանակներում Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի նախագահների հանդիպման ժամանակ: ՎՈՒԱՄ հապավման հեղինակն ամերիկացի գեներալ Գոուենն է: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ դիվանագետներն աշխատում էին սահմանափակումների շեմի վերաբերյալ պայմանագրի վրա, որը պետք է լրացներ Եվրոպայի՝ սովորական սպառազինությունների սահմանափակման մասին պայմանագիրը: Հերթական ընդմիջման ժամանակ ամերիկացի գեներալը, անցնելով տարբեր երկրների փորձագետների խմբի

[*] Հայ-ռուսական սլավոնական համալսարանի ասպիրանտ:

մոտով, որոնք աշխուժորեն ինչ-որ բան էին քննարկում, բացականչեց. «Օ՜, ՎՈՒԱՄ՝ Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա, դուք նորից միասին եք և նորից խորհրդակցում եք, թե ինչպես մեզ և ռուսներին նեղը գցեք»[1]:

Ստրասբուրգյան հռչակագիրն ամրագրեց քաղաքական մտերմության և այդ երկրների միջև գործնական համագործակցության մակարդակը, միջազգային առանցքային հիմնախնդիրների նկատմամբ դիրքորոշումների միասնությունը: ՎՈՒԱՄ շրջանակներում համագործակցության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները Եվրախորհուրդն անմիջապես հավանության արժանացրեց:

Հետագայում՝ 1999թ. ապրիլի 24-ին, ՆԱՏՕ 50-ամյա հոբելյանին նվիրված վաշինգտոնյան գագաթաժողովում ՎՈՒԱՄ-ին միացավ նաև Ուզբեկստանը, որից հետո կազմակերպությունը վերանվանվեց ՎՈՒՈՒԱՄ: Սակայն 2002թ. հունիսին Ուզբեկստանը դադարեցրեց անդամակցությունը կազմակերպությանը, իսկ 2005թ. ընդհանրապես դուրս եկավ կազմակերպությունից, և ՎՈՒԱՄ-ը վերադարձավ նախկին քառակողմ ձևաչափին:

Վաշինգտոնում ՎՈՒՈՒԱՄ անդամ երկրների նախագահների ընդունած հայտարարությունները որոշակիացրին նոր միավորման գործունեության սկզբունքներն ու հիմնական ուղղությունները: Նրա հիմնական նպատակներն էին՝ համագործակցությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման բնագավառում և ճգնաժամային իրավիճակներում, Մետաքսի մեծ ճանապարհի վերածնունդը, եվրասիական տրանսպորտային միջանցքի ստեղծումը, Կասպիական նավթի այլընտրանքային մայրուղու փնտրտուքն ու համատեղ իրացումը, բազմակողմ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ֆորումների շրջանակներում, ներառյալ՝ Եվրախորհուրդը, ՆԱՏՕ-ն և այլն [1, с. 98]:

Այս կազմակերպության արտաքին քաղաքական կողմնորոշումը պայմանավորված է Ռուսաստանի ինտեգրացիոն ծրագրերի հետ ունեցած տարաձայնություններով, ինչը նրանց հարաբերություններին հաղորդում է մրցակցային բնույթ: Դրան գումարվում է նաև աշխարհաքաղաքական մրցակցությունը եվրասիական տարածաշրջանում, ինչը պայմանավորված է Կասպից ծովի ավազանի էներգակիրների նկատմամբ վերահսկողություն սահմանելու ձգտմամբ, ինչը կօգնի վերահսկելու նաև Մետաքսի մեծ ճանապարհի առևտրատրանսպորտային և էներգետիկ ցանցը, ինչպես նաև Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային շուկաները [2, с. 141]:

2000թ. Նյու Յորքում կայացած «Հազարամյակի գագաթաժողովում» հայտարարվեց ՎՈՒՈՒԱՄ-ի՝ միջազգային կազմակերպություն դառնալու մա-

[1] *Побирченко В.,* Основные направления внешнеэкономической политики Украины в рамках интеграционного обьединения ГУАМ. http:www.pu.if.ua

սին: ՄԱԿ շրջանակներում ընդունվեց հուշագիր, որը կարգավորում էր ՎՈՒՈՒԱՄ գործունեությունն ու ստեղծման նպատակները[1]: Նյույորքյան հուշագրում անդամ երկրների ղեկավարներն ընդգծեցին «արդյունավետ միջպետական, նախ և առաջ՝ տնտեսական և միջճյուղային կապերի հաստատման կենսական անհրաժեշտության մասին՝ իրենց երկրների ժողովուրդների բարեկեցությունը բարձրացնելու նպատակով» [3. c. 57]:

ՎՈՒՈՒԱՄ-ը 2001թ. ստացավ տարածաշրջանային միջազգային կազմակերպության կարգավիճակ: 2001թ. հունիսի 6-7-ին Յալթայում կայացած գագաթաժողովի ժամանակ ստորագրվեց ՎՈՒՈՒԱՄ կանոնադրությունը[2]: Գագաթաժողովում հատուկ ուշադրություն դարձվեց ազատ առևտրի գոտի ստեղծելու համաձայնագրին, որը ստորագրվեց Յալթայի գագաթաժողովում 2002թ. հուլիսին [3. c. 57]: ՎՈՒԱՄ՝ ազատ առևտրի գոտի ստեղծելու վերաբերյալ փաստաթուղթը ներառում էր նախաբան և 27 հոդված, որոնք վերաբերում էին առևտրային, տնտեսական, ինստիտուցիոնալ խնդիրներին և ներառում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հարկերի հավաքումը, առևտրի ոլորտում տեխնիկական արգելքների սահմանումը, մաքսային ընթացակարգերի, ապրանքային անվանացանկերի միասնականացումն ու ներդաշնակեցումը, ինչպես նաև դրամական օժանդակության, ծառայությունների, մրցակցության, պետական գնումների, վեճերի կարգավորման և այլ հարցեր [3]: Համաձայնագրի կենսագործումը ՎՈՒԱՄ երկրներին հնարավորություն կտար ստեղծելու մերձկասպյան էներգառեսուրսների առաքման ընդհանուր էներգատրանսպորտային զարկերակ և իրականացնել միասնական էներգետիկ քաղաքականություն, ինչը թույլ կտար այդ պետություններին վարել անկախ քաղաքականություն միջազգային ասպարեզում:

Այս համատեքստում ուշագրավ է Վրաստանի դերն իբրև մի պետության, առանց որի վերոնշյալ գործընթացներն անհնար է իրականացնել: Այս առումով Վրաստանի դերը ՎՈՒԱՄ-ի համար անփոխարինելի է: Նրա նախաձեռնության շնորհիվ Վրաստանի, Ուկրաինայի և Ադրբեջանի միջև ստորագրվեց եռակողմ համաձայնագիր տրանսկովկասյան տրանսպորտային միջանցքի վերաբերյալ, որը նախատեսում է ստեղծել միասնական տրանսպորտային երթուղի բեռնափոխադրումների և ուղևորների սպասարկման համար, որը կարող է կապել Բաքուն, Թբիլիսին, Փոթին, Օդեսան և Կիևը [1, c. 99]:

Ադրբեջանը Վրաստանի հիմնական գործընկերն է տարածաշրջանում: Այդ երկիրը ՎՈՒԱՄ կառույցում կարևոր դերակատարում ունի իբրև էներգառեսուրսներ արտահանող: Ընդհանուր շահերը, որոնք պայմանավորված էին դեպի Արևմուտք էներգակիրներ արտահանող խողովակաշարերի առկայու-

[1] http://ru.wikipedia.org/wiki/ГУАМ
[2] http://ru.wikipedia.org/wiki/ГУАМ

թյամբ, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերությունները դարձրին ռազմավարական: Վրաստանի տարանցիկ նշանակությունը մեծացավ Մետաքսի մեծ ճանապարհի նախագծի վերականգնմամբ: Այդ կապակցությամբ Վրաստանն ակտիվորեն զարգացրեց հարաբերություններն Իչկերիայի Հանրապետության՝ տարածաշրջանի ամենակարևոր ուժային կենտրոններից մեկի հետ՝ առաջ քաշելով Վրաստանի, Չեչնիայի և Ադրբեջանի մասնակցությամբ Կովկասյան ընդհանուր շուկայի ստեղծման գաղափարը [1]: Այս առումով Վրաստանի քաղաքականությունը ՎՈՒԱՄ շրջանակներում ուղղված էր Չեչնիայի՝ Ռուսաստանի Դաշնության կազմում գտնվող սուբյեկտի անկախ պետություն ճանաչելուն, ինչը, անկասկած, տվյալ կազմակերպության հակառուսական ուղղություններից մեկի արտացոլումն էր:

Էական է նաև Վրաստանի դերն Ուկրաինայով էներգակիրների տարանցման հնարավոր նոր ուղիների զարգացման գործում, ուր Վրաստանն Ուկրաինայի և Ադրբեջանի միջև կապող օղակ կարող է դառնալ: Այս առումով, վրաց-ուկրաինական էներգակիրների տարանցման ուղիների կենսագործումը կարող է հանգեցնել բարդությունների ոչ միայն Ռուսաստանի հետ՝ իբրև Եվրոպայի գլխավոր էներգամատակարարի, այլև Թուրքիայի, որը ևս ձգտում է դառնալ էներգետիկ կարևոր խաչմերուկ՝ Եվրոպա էներգակիրներ արտահանելու գործում: Այսպիսով, վրաց-ուկրաինական տարանցիկ ուղու շահագործման դեպքում Ռուսաստանն ու Թուրքիան շահագրգռված կլինեն խոչընդոտելու ՎՈՒԱՄ ամրապնդմանը: Մանավանդ որ Թուրքիան արդեն իսկ որպես դիտորդ ներկա է ՎՈՒԱՄ-ում:

Վրաստանն ունի առանցքային դերակատարում Ուկրաինայի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների իրագործման մեջ՝ կապված Սևծովյան տարածաշրջանում անվտանգության ամրապնդման հետ: Այս առումով Վրաստանը բազմիցս դիմել է Ուկրաինային՝ վրաց-աբխազական հակամարտության գոտի ուկրաինական խաղաղապահ զորակազմ մտցնելու խնդրանքով, ինչին Ուկրաինան պատասխանել է, որ պատրաստ է զորակազմ ուղարկել խաղաղության պահպանման համար՝ պայմանով, որ այդ գործողություններն անցկացվեն ՄԱԿ և ԵԱՀԿ հովանու ներքո: Այդ առիթով Ուկրաինայի նախագահ Լ.Կուչման Յալթայում 1998թ. հունիսին հանդիպեց Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեի հետ և աջակցություն արտահայտեց աբխազական հիմնախնդրի խաղաղ կարգավորման առնչությամբ [1]:

ՎՈՒԱՄ շրջանակներում Վրաստանը նաև ռազմական համագործակցություն է ծավալում Ուկրաինայի հետ հատկապես ռազմածովային ոլորտում՝ ներառելով նաև համագործակցության տեխնիկական կողմերը, ինչպիսին են ուկրաինական ռազմական ձեռնարկություններում ռազմական տեխնիկայի արդիականացումն ու վերանորոգումը, նաև վրաց զինծառայողների ուսուցումն ու պատրաստումը Ուկրաինայի ռազմական ուժերի ակադեմիա-

յում: Այս համատեքստում, բնորոշելով վրաց-ուկրաինական հարաբերությունների զարգացումը ՎՈՒԱՄ շրջանակներում, Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեն 1999թ. ապրիլին նշեց, որ վրաց-ուկրաինական շրջանակային պայմանագրում առկա են ոչ միայն համագործակցություն նախատեսող, այլև փոխադարձ օգնություն տրամադրելու մասին դրույթներ [1]: Այսպիսով, Վրաստանը ՎՈՒԱՄ շրջանակներում հույս ուներ մասնակից երկրներին ներքաշել իր ներքին խնդիրների լուծման մեջ:

Խաղաղության և անվտանգության պահպանման համատեքստում ՎՈՒԱՄ շրջանակներում 1999թ. Բաքվում մասնակից երկրների պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ քննարկվեցին խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման համար ընդհանուր խաղաղապահ գունդ ստեղծելու համաձայնագրի և համատեղ խաղաղապահ զորակազմ ստեղծելու մասին որոշման նախագծերը [1, с. 101]: Տվյալ գործընթացները հենց իրենց՝ ՎՈՒԱՄ մասնակիցների կարծիքով, ուղղված են ոչ միայն իրենց ներքին էթնոտարածքային խնդիրների լուծմանը, այլև հետագայում կնպաստեն ՎՈՒԱՄ միջազգային կառույց դառնալուն, որը խաղաղապահ ուժերի շրջանակներում ի զորու կլինի գործելու այլ տարածաշրջաններում: Այսպիսով, ՎՈՒԱՄ հիմնական նպատակը միջազգային հարաբերություններում իբրև հետխորհրդային անկախ պետությունների ձևավորված միավորում ներկայանալն էր, որն ի զորու է ոչ միայն տարածաշրջանային, այլև համընդհանուր նշանակության հարցեր լուծել:

Հետագայում ՎՈՒՈՒԱՄ շրջանակներում չհաջողվեց այս կազմակերպության գործունեությանը գործնական բովանդակություն հաղորդել, իսկ ՎՈՒՈՒԱՄ հանդիպումների ժամանակ մասնակից պետությունները սկսեցին ներկայացնել ավելի ցածր մակարդակի պաշտոնյաներ: Դա հանգեցրեց ՎՈՒՈՒԱՄ-ից Ուզբեկստանի դուրս գալուն 2005թ. դեկտեմբերի 25-ին, ինչի համար ձևականորեն պատճառ դարձան «նախապես հայտարարված նպատակներից և խնդիրներից կազմակերպության էական շեղումները»: Ինչպես ասված էր Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովի նամակում, Ուզբեկստանին չեն բավարարում «սառեցված հակամարտությունների լուծման, միասնական զինված ուժերի ձևավորման և անվտանգության գոյություն ունեցող համակարգերի վերանայման մասին կազմակերպության շեշտադրումները»: Ուզբեկստանի իշխանությունները նաև բացատրեցին, որ ի զորու չեն ակտիվորեն մասնակցել ՎՈՒՈՒԱՄ գործընթացներին «աշխարհագրական դիրքի պատճառով»[1]: Ուզբեկստանի կորուստը ՎՈՒԱՄ-ի համար առանձնապես զգալի չէր, քանի որ վերջինս 2002 թվականից ի վեր արդեն չէր մասնակցում կազմակերպության միջոցառումներին:

[1] http://ru.wikipedia.org/wiki/ГУАМ

2005թ. սկզբին ՎՈՒԱՄ շրջանակներում սկսեց ակնհայտ առաջընթաց նկատվել մասնակից երկրների հարաբերությունների մեջ: Դրա պատճառը հիմնականում 2003թ. Վաստանում և 2005թ. Ուկրաինայում «թավշյա հեղափոխության» առաջնորդների իշխանության գալն էր: Այդ նոր հեղափոխական ուժերի հիմնական նպատակը իրենց օրինակով ժողովրդավարության «տարածումն» էր ամբողջ հետխորհրդային տարածքում և պայքարն անջատողականության դեմ: Երկրորդ շեշտադրումը՝ պայքարն անջատողականության դեմ, 2005թ. Քիշնևում անցկացված ՎՈՒԱՄ գագաթաժողովում դարձավ գլխավոր թեման՝ նպաստելով մասնակից երկրների համախմբմանն այդ կազմակերպության շրջանակներում [4, с. 113]: Հատկանշական է, որ ի տարբերություն հետխորհրդային տարածաշրջանի հակամարտությունների կարգավորմանը վերաբերող բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերի, Քիշնևի հռչակագիրն ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ որևէ հղում չէր պարունակում և անառարկելիորեն կարգավորման նպատակ էր հռչակում «չվերահսկվող տարածքների վերամիավորումն այն պետություններին, որոնց մասն են նրանք կազմում»[1]:

Վրաստանի իշխանությունների համար ավելի ու ավելի հրատապ էր դառնում արտաքին քաղաքական ձեռքբերումները ներքին քաղաքականության մեջ օգտագործելը: Այս առումով հատկանշական է, որ Արևմուտքում Վրաստանը ճանաչվում է իբրև ԱՊՀ տարածքում ժողովրդավարության առաջնորդ և «գունավոր հեղափոխությունների հայրենիք»: Այս տեսանկյունից նախկին ԽՍՀՄ տարածքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն, որը կարելի է մեկնաբանել ժողովրդավարության տարածման տրամաբանությամբ, նպաստում է վրացական նոր իշխանությունների քաղաքական դիրքերի ամրապնդմանը: Հիմքեր կան ենթադրելու, որ Վրաստանի հետաքրքրությունը ՎՈՒԱՄ-ի նկատմամբ պայմանավորված է նաև վերոնշյալով: Չէ՞ որ դաշինքի կազմում, որն իր առջև ժողովրդավարացման և անջատողականության դեմ պայքարի նպատակ է դրել, ժամանակակից Վրաստանը գրեթե ինքնաբերաբար վերածվում է գլխավոր խաղացողի՝ որպես «ամենաժողովրդավարականը» և անջատողականությունից առավել «տուժածը»՝ չլուծված էթնոտարածքային երկու հակամարտության համապատկերում: Ընդ որում, դա բնավ կախված չէ նրա իրական տնտեսական և աշխարհաքաղաքական կարգավիճակից [4, с. 114]:

Այսպիսով, «վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանին հաջողվեց ձեռք բերել քաղաքական հեղինակություն՝ որպես ամենաժողովրդավար պետություն, որն ի վիճակի է ժողովրդավարություն «արտահանել» հետխորհրդային բոլոր պետություններ:

[1] [http://www.guam.org.ua/181.499.0.0.1.0.phtml] 27 июня, 2006.

Սակայն խնդիրն այն է, որ ՎՈՒԱՄ շրջանակներում ժողովրդավարության բաղադրիչի զարգացումը բախվեց որոշ սահմանափակումների: Նախ և առաջ, այս կառույցն ակնհայտորեն ռեսուրսների պակաս ունի, որն անհրաժեշտ է հետխորհրդային տարածաշրջանում ժողովրդավարության՝ վրացուկրաինական տարբերակի տարածման համար: Եվ երկրորդ՝ ԱՊՀ տարածքում տարածաշրջանային միավորում ստեղծելու նպատակը, որն ի վիճակի կլինի այլընտրանքային դառնալու Մոսկվայի առաջարկած տարբերակներին, զգալիորեն հակասում է արևմտյան և լիբերալ քաղաքական գաղափարների հանդեպ անվերապահ կողմնորոշմանը: Նման ուղղվածությունն աջակցություն չի գտնում հետխորհրդային շատ ռեժիմների կողմից [4, с. 115]:

Անհրաժեշտ է նշել, որ ՎՈՒԱՄ գործունեության մեջ ավելի ու ավելի շատ են «գոյատևման հիմնական միջոցներ» դառնում նախ՝ Ռուսաստանի և Արևմուտքի բարդ հարաբերությունները, և երկրորդ՝ հետխորհրդային տարածքում չճանաչված պետությունների սրված հիմնախնդիրները, ինչն օբյեկտիվորեն նպաստում է ՎՈՒԱՄ կառույցի ամրապնդմանը [4, с. 117]:

Այսպիսով, հարկ է ընդունել, որ ՎՈՒԱՄ-ին ինչ-որ չափով հաջողվեց «կայանալ», և նրա արտաքին քաղաքականության «անինքնուրույնության» ու արևմտյան երկրներից կախվածության վերաբերյալ տարածված դատողությունները չեն կարող անվերապահ լինել: Այս առումով հատկանշական է 2006թ. սեպտեմբերի 14-ին Նյու Յորքում անցկացված ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում ստեղծված իրավիճակը, երբ ընդունվեց որոշում նախկին ԽՍՀՄ տարածքում «սառեցված» հակամարտությունների հարցի քննարկման վերաբերյալ: Այս նախաձեռնությամբ հանդես եկան ՎՈՒԱՄ պետությունները, որոնք ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և մի շարք այլ երկրների աջակցությամբ հասան հարցը նստաշրջանի օրակարգ մտցնելուն՝ հակառակ Ռուսաստանի ակտիվ դիմադրության: Այս որոշումը ՎՈՒԱՄ մասնակից երկրները համարեցին որպես համաշխարհային հանրության կողմից Մերձդնեստրի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների գոտում ռուսական խաղաղապահների ոչ արդյունավետ գործունեության ճանաչում և Մոսկվայի դիվանագիտական պարտություն: ՎՈՒԱՄ երկրների դիվանագետները Նյու Յորքում ընդունված որոշումը համարեցին ՎՈՒԱՄ քաղաքական դերի մեծացման վկայություն: Միաժամանակ, Վրաստանի ԱԳՆ-ն մեղադրեց Ռուսաստանին այն բանում, որ վերջինս «օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները»՝ խոչընդոտելու հարցը նստաշրջանի օրակարգում ընդգրկելուն: ՄԱԿ-ում Վրաստանի մշտական ներկայացուցիչ Իրակլի Ալասանիան հայտարարեց, որ ՎՈՒԱՄ երկրները դրանով իսկ «ճեղքեցին սև քարոզչությունը, որը գոյություն ուներ

ՄԱԿ-ում»[1]: Այսպիսով, ՎՈՒԱՄ շրջանակներում Վրաստանի հավանությունն ստացած նախաձեռնությունը հանգեցրեց միջազգային հանրության՝ «սառեցված» էթնոտարածքային հակամարտությունների նկատմամբ հետաքրքրության աճին:

2006թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 61-րդ նստաշրջանի շրջանակներում հանդիպելով Նյու Յորքում՝ ՎՈՒԱՄ մասնակից երկրների արտգործնախարարները քննարկեցին «սառեցված» հակամարտությունների կարգավորման ընթացքը ԱՊՀ-ում: Ռուսաստանը հրավիրված չէր հանդիպմանը, փոխարենը ներկա էր ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դևիդ Կրամերը: Հանդիպման մասնակիցները պայմանավորվեցին ստեղծել սեփական ոստիկանական ուժեր, որոնք պետք է փոխարինեին Վրաստանի և Մոլդովայի հակամարտային գոտիներում գտնվող ռուսական խաղաղապահներին: Այս պայմանավորվածության իրագործումն առայժմ հետաձգված է անորոշ ժամանակով: ՎՈՒԱՄ մասնակից երկրների ԱԳՆ ղեկավարները նաև համաձայնեցրին համատեղ միջոցառումների ռազմավարական ծրագիրը՝ «ՎՈՒԱՄ երկրների տարածքներում ձգձգված հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցում միջազգային աջակցության ընդլայնման վերաբերյալ», որի գլխավոր նպատակը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ձգձգվող հակամարտությունների վերաբերյալ բանաձևի ընդունմանը հասնելն է[2]:

Ավելի վաղ ելույթ ունենալով ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում՝ Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին մեղադրեց Ռուսաստանին Աբխազիան և Հարավային Օսիան «զավթելու» մեջ. «Այդ տարածքները բռնի կերպով իրեն է կցել Ռուսաստանը, որն աջակցում է դրանց՝ իր կազմի մեջ մտնելու քայլերին՝ միտումնավոր և զանգվածաբար տրամադրելով ռուսական անձնագրեր՝ խախտելով միջազգային օրենսդրությունը: Վիճելի տարածքների բնակիչներն ապրում են Ռուսաստանի ավազակային օկուպացիայի մեջ»: Ուկրաինայի ԱԳ նախարար Բորիս Տարասյուկն աջակցություն հայտնեց Սահակաշվիլուն՝ հավելելով. «Ուկրաինան մերժում է Կոսովոյի և ՎՈՒԱՄ երկրների տարածքում չկարգավորված հակամարտությունների միջև զուգահեռներ անցկացնելու ցանկացած փորձ»: Այս դիրքորոշումը հակասում է Ռուսաստանի ղեկավարության այն տեսակետին, որի համաձայն, եթե Կոսովոյին տրվի անկախություն, ապա նույն կերպ հարկ է լուծել նաև ԱՊՀ տարածաշրջանային հակամարտությունները:

ՎՈՒԱՄ երկրների արտգործնախարարների որոշմանն արձագանքեց ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը. «Վրաստանը ձգտում է օգտագործել ՎՈՒԱՄ ռազմական ներուժը՝ Աբխազիայում և Հարավային

[1] http://ru.wikipedia.org/wiki/ГУАМ

[2] Նույն տեղում:

Օսիայում ռուսական խաղաղապահներին փոխարինելու նպատակով: Վրաստանի տարածքում լրացուցիչ զինուժի առկայությունը թույլ կտա նրա ղեկավարությանը չզսպել ցանկացած պահի մկանները ցուցադրելու ցանկությունը, ինչպես վերջերս ցուցադրեց Կոդորի կիրճում, ինչպես նաև օգտագործել այն որպես լրացուցիչ հաղթաթուղթ Սուխումի և Ցխինվալի հետ հակամարտությունում»: Բայց, նրա կարծիքով, «Ռուսաստանը, որը հանդես է գալիս առկա հակամարտությունները միայն քաղաքական մեթոդներով կարգավորելու օգտին, կգտնի համապատասխան միջոցներ՝ նման սցենարով իրավիճակի զարգացումը թույլ չտալու համար»[1]:

Այսպիսով, Վրաստանին ՎՈՒԱՄ շրջանակներում հաջողվեց որոշ չափով իրենից հեռացնել Ռուսաստանի կողմից հնարավոր «հարվածը»՝ կապված Կոսովոյի օրինակով Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչման խնդրի հետ:

2006թ. մարտի 23-ին Կիևում կայացած ՎՈՒԱՄ գագաթաժողովում կազմակերպության բարեփոխման մասին որոշում ընդունվեց: Գագաթաժողովի ընթացքում պետությունների ղեկավարները ստորագրեցին «ՎՈՒԱՄ-ի՝ հանուն ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպության» կանոնադրությունը[2]:

2006թ. սեպտեմբերի 25-ին Նյու Յորքում կայացած ՎՈՒԱՄ նախարարների խորհրդի նիստում մասնակից երկրների արտգործնախարարները կազմակերպության գլխավոր քարտուղար նշանակեցին Վրաստանի ԱԳ փոխնախարար Վալերի Չեչելաշվիլուն, որը մինչ այդ «ՎՈՒԱՄ-ի՝ հանուն ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպության» ազգային համակարգողն էր Վրաստանի կողմից[3]: Այս նշանակումը, անկասկած, ցույց է տալիս, որ գլխավոր «շարժիչ ուժը» ՎՈՒԱՄ գործունեության մեջ Վրաստանն էր:

Հետագայում ՎՈՒԱՄ գործունեության մեջ նկատվեց որոշակի պասիվություն: Այսպես, ՎՈՒԱՄ հերթական գագաթաժողովում, որը կայացավ 2007թ. հունիսի 18-19-ին Բաքվում, որոշում ընդունվեց ստեղծել ՎՈՒԱՄ համատեղ խաղաղապահ գումարտակ[4]: Սակայն, Մոլդովայի նախագահ Վլադիմիր Վորոնինի խոսքերով, այդ որոշումն ավելի ուշ կասեցվեց: «Վերջ տվեք այս խաղերին: Փառք Աստծո, ՎՈՒԱՄ որոշումները կոնսենսուսով են ընդունվում: Եվ երբ մենք հրաժարվեցինք ստորագրել փաստաթուղթը, այդ գաղափարը հօդս ցնդեց»[5]:

Այսպիսով, ՎՈՒԱՄ քաղաքականության մեջ կազմակերպության հետա-

[1] http://ru.wikipedia.org/wiki/ГУАМ
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] http://regnum.ru./news/1116535.html
[5] http://www.kommersant.ru/doc.aspx?docsID=865338&NodesID=5

գա նպատակների ձևակերպման առումով ներկայումս անորոշություն է նկատվում: Այս առումով անչափ բնութագրական է ռազմական վերլուծաբան, «Կոնվերսիա» ամսագրի խմբագիր Իրակլի Ալադաշվիլու տեսակետը, որի համաձայն, ՎՈՒԱՄ-ը ստեղծման պահից իսկ մեռելածին կառույց էր: Այդ դաշինքի մասնակիցները չափազանց տարաբնեռ են, խիստ տարբեր են նրանց ձգտումներն ու հայացքներն իրենց քաղաքական ապագայի և տարածքային նախագծերի նկատմամբ: Միակ բանը, որում նրանք միասնական են, Եվրոպային ինտեգրվելն է: Սակայն այս հարցում էլ միշտ չէ, որ միակամություն է նկատվում:

Այս տեսակետին համաձայն է նաև Մոսկվայի պետական համալսարանի հետխորհրդային երկրների ուսումնասիրության տեղեկատվական-վերլուծական կենտրոնի տնօրեն Ալեքսեյ Վլասովը, որի համոզմամբ, ՎՈՒԱՄ-ը ԱՊՀ պատճենն է այն առումով, որ այդ կազմակերպության անդամները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, որի արդյունքում կազմակերպության զարգացումն առավել դինամիկ կլիներ[1]: Այսօր ՎՈՒԱՄ շրջանակներում չի իրականացվում որևէ խաղաղարարական քաղաքականություն, չի գործում ազատ առևտրի գոտի, ոչ էլ փոխադարձ ներդրումներ են արվում: Շոշափվում է միայն ժողովրդավարության զարգացման թեման, այն էլ՝ բանավոր մակարդակով: Այլ երկրներ ներգրավելու ՎՈՒԱՄ փորձերը սահմանափակվեցին միայն քաղաքական հռչակագրերով: ՎՈՒԱՄ շրջանակներում ամենահրատապ թեման մնում է «սառեցված» հակամարտությունների հարցը: Թբիլիսիում ցանկանում են վերադարձնել Աբխազիան և Հարավային Օսիան, Բաքվում՝ Լեռնային Ղարաբաղը, Քիշնևում՝ Մերձդնեստրը: Սակայն կազմակերպության անդամներն այդպես էլ չկարողացան գործունեության ընդհանուր կանոններ մշակել նույնիսկ վրաց-ռուսական հակամարտության ժամանակ 2008թ. օգոստոսին, երբ հարցը վերաբերում էր ՎՈՒԱՄ անդամներից մեկի տարածքային ամբողջականության կորստի սպառնալիքին: Վրաստանում ծավալված այս ճգնաժամային իրավիճակում մասնակից երկրներից միայն Ուկրաինան լիակատար աջակցություն հայտնեց Թբիլիսիին, այն էլ ոչ առանձին, այլ արևելաեվրոպական քաղաքականության շրջանակներում՝ Լեհաստանի և Բալթյան երկրների հետ: Այս ձևաչափն ակնհայտորեն ցույց է տալիս, որ այս ակցիայի մասնակիցները, անկախ ստեղծված իրավիճակից, բացահայտ հակառուսական միավորում են, և կարևոր չէ, թե որտեղ և ինչպես արտահայտեն իրենց հակառուսական դիրքորոշումը. կարևորն այդ դիրքորոշման դրսևորումն է:

Ըստ էության, Հարավային Օսիայում տեղի ունեցած պատերազմն ակնհայտորեն ի ցույց դրեց այն, որ կազմակերպությունը ճգնաժամի մեջ է: Եվ եթ-

[1] Кавказский узел-ГУАМ не является приоритетом в политике Грузии, Азербайджана, Украины и Молдовы, считают эксперты.htm

նոտարածաշրջանային հակամարտությունների լուծման հարցում Ռուսաստանի գործունեությանն իբրև այլընտրանք ներկայանալու փորձերը հանգեցրին ՎՈՒԱՄ լիակատար անճարակությանը, ինչն ակնհայտորեն դրսևորվեց վրաց-հարավօսական հակամարտության ժամանակ:

Այսպիսով, Վրաստանի դերը ՎՈՒԱՄ-ում, որը սկզբից ևեթ ուղղված էր ռուսական ազդեցությանը հակակշիռ դառնալուն, հանգեցրեց այդ սպասելիքների լիակատար ձախողմանը: Վրաստանի այդ գործունեությունը հանգեցրեց Աբխազիայի և Հարավային Օսիայի լիակատար կորստին, որը նույնպես կարելի է համարել էթնոտարածքային հիմնախնդրի «լուծում»: Եվ ներկա փուլում կարելի է արձանագրել այն, որ ՎՈՒԱՄ-ը հենց սկզբից էլ չէր կարող այլընտրանք դառնալու հեռանկար ունենալ, նախ, որովհետև Արևմտյան երկրները չեն կարող անտեսել Ռուսաստանին և նրա շահերն այս փուլում՝ hօգուտ աննշան պետությունների շահերի, և ՎՈՒԱՄ գործունեությունը, որը պիտի խոչընդոտեր ռուսական քաղաքականությանը, չէր կարող բացահայտ աջակցություն ստանալ Արևմուտքից, թեև որոշ դեպքերում այն ուղղված էր հենց ռուսական քաղաքականության ամրությունը ստուգելուն: Եվ երկրորդ՝ ՎՈՒԱՄ անդամներն իրենք իբրև պետություններ կայացած չեն, որպեսզի միջազգային ասպարեզում կարողանան առաջ տանել իրենց քաղաքականությունը նույնիսկ միասնական միջազգային կազմակերպության շրջանակներում: Ընդհանուր առմամբ ՎՈՒԱՄ մասնակից երկրների քառակողմ ձևաչափի առանձնահատկությունն այն է, որ այդ պետությունները՝ ներկայիս տարածքային կազմով, հիմնականում ստեղծվել և «կայացել» են Ռուսական կայսրության, ապա նաև ԽՍՀՄ կազմում: Ներկայումս ՎՈՒԱՄ երկրների հարաբերությունը Ռուսաստանի հետ կարելի է նմանեցնել այն մարդու հոգեվիճակին, որն օրինական ճանապարհով չի տիրապետում իրեն բաժին ընկած ժառանգությանը, նա կամ փորձում է մոռանալ այդ մասին, կամ էլ ներկայացնել իրեն շահեկան լույսով՝ տվյալ դեպքում հղում անելով հազարամյա պատմությանը, ինչպես Վրաստանը, կամ էլ ներկայանում է իբրև քաղաքական զոհ:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ Վրաստանին այդպես էլ չհաջողվեց ՎՈՒԱՄ շրջանակներում ստեղծել հուսալի քաղաքական համակարգ, որը պետք է օգներ հաղթահարելու վրացական պետության մասնատվածությունը, որի պատճառը հենց ինքն է, ինչպես նաև դառնալ ժողովրդավարության նոր «լոկոմոտիվ» հետխորհրդային երկրների մեջ: Ուստի, մոտ ապագայում, ամենայն հավանականությամբ, ականատես կլինենք ՎՈՒԱՄ՝ որպես քաղաքական միավորի վերացմանը:

Մարտ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Парахонский Б.,* Формирование модели регионального сотрудничества в системе ГУУАМ. Центральная Азия и Кавказ. -N 2 (8), 2000.
2. *Матийчик Я.,* ГУАМ: Состояние, риски, перспективы. Центральная Азия и Кавказ. – N 5(35), 2004.
3. *Линотт Д., Л-Э Оун,* ГУУАМ: Соглашение о создании зоны свободной торговли. Центральная Азия и Кавказ. N 1(25), 2003.
4. *Силаев Н.,* ГУАМ и Малая игра на постсоветском пространстве. Центральная Азия и Кавказ.-N 4 (46) , 2006.

РОЛЬ ГРУЗИИ В РЕГИОНАЛЬНОЙ И МЕЖДУНАРОДНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ГУАМ

Гор Оганесян

Резюме

Действия Грузии в ГУАМ, изначально направленные на создание противовеса российскому влиянию, привели к полному провалу этих попыток и, более того, к полной утрате Абхазии и Южной Осетии. Грузии так и не удалось создать в рамках ГУАМ надежную политическую систему, а также стать новым «локомотивом» демократизации на постсоветском пространстве. Таким образом, в ближайшем будущем мы, по-видимому, станем свидетелями ликвидации ГУАМ как политической единицы.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

    1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
    2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
    3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 14.05.2010թ.
Թիվ 2 (30), 2010թ.
Տպաքանակը՝ 300:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում